

ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍՎՈՒՄ Է ԻՑ

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2014





**ՄԵՆ ԻՆՉ
ՍԿՍՎՈՒՄ Է
ԻՑ**



ԳԼԽԱՎՈՐ ԲԱԺԻՆՆԵՐ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

- ▶ Մակրոտնտեսական միջավայրը և դրա ազդեցությունը ՀՀ ֆինանսական հատվածի վրա
- ▶ ՀՀ ֆինանսական հատվածի վերլուծություն. կարգավորող դաշտ և ճյուղային զարգացումներ
- ▶ Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում

ԱՃԻ ԶԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- ▶ Առաջինը ՀՀ բանկային համակարգում 4 հիմնական ցուցանիշներով

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ▶ Խորհրդի անկախ անդամ ներգրաված առաջին բանկը Հայաստանում

ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

- ▶ Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթը՝ 5.19, իսկ ակտիվները՝ 2.3 անգամ բարձր են ՀՀ բանկային համակարգի ցուցանիշներից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ	5
2014թ. հիմնական ֆինանսական ցուցանիշներ	5
Խորհրդի նախագահի ուղերձը	6
Գլխավոր տնօրենի ուղերձը	8
Խմբի մասին	11
Փիլիսոփայություն և տեսլական	13
Պատմական քայլեր	14
Միջազգային գործընկերներ	16
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	18
ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ	21
Մակրոտնտեսական նախադրյալներ	21
Իրավական դաշտ, պետական կարգավորում, ֆինանսական ենթակառուցվածք	24
Ապահովագրական ոլորտ	25
Բանկային ոլորտ	26
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	29
Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում	29
Մրցանակներ	31
Ռազմավարություն և բիզնես-մոդել	32
Գործունեության հիմնական ցուցանիշներ	36
Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք	36
Աշխարհագրական տարածում	37
Կորպորատիվ բանկինգ	39
Մանրածախ բանկինգ	43
Լերդորումաբանկային և առևտրային գործառնություններ	49

ԿՈՐԴՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կորպորատիվ կառավարման ուղերձ	53
Կառավարման հաշվետվություն	54
Խորհուրդ	56
Տնօրինություն	59
Կազմակերպական կառուցվածք	63
Մեր անձնակազմը	65
Առաջնորդություն	67
Ամերիա սերունդ	67
Ռիսկերի կառավարում	69


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորների եզրակացություն	73
Ֆինանսական հաշվետվություններ	2
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	5

ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԿԱՎՈՒՄ Ե
ԻՏ

Ամերիաբանկ

Ամերիաբանկ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

«Ամերիա» ընկերությունների խմբի անդամ Ամերիաբանկը ՀՀ առաջատար բանկերից է, որն ունի բանկային ոլորտի ցուցանիշները գերազանցող դինամիկ աճ: Ամերիաբանկն ամփոփեց 2014թ. որպես օրինակելի առաջընթացի ևս մեկ տարի՝ բանկային համակարգում զբաղեցնելով 1-ին դիրքը ըստ ակտիվների, պարտավորությունների, հաճախորդներին տրված վարկերի և զուտ շահույթի: Նմանատիպ առաջատար դիրքերը ևս մեկ անգամ վկայում են Ամերիաբանկի կողմից ստեղծված բացառիկ միջավայրի

մասին, որտեղ հաճախորդներն ու գործընկերները կարող են ոչ միայն վայելել բարձրակարգ սպասարկում և ստանալ անհատականացված բանկային ծառայություններ, այլ նաև օգտվել Բանկի մշտական աճի ստեղծած հնարավորություններից: Ամերիաբանկը Հայաստանի այն սակավաթիվ բանկերից է, որը մատուցում է ՄԱՆՐԱԾԱԽ, ԿՈՐՊՈՐԱՏԻՎ և ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ:

2014Թ. ՀԻՄՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ակտիվներ (մլն ՀՀ դրամ)

2013թ.՝ 315,048

399,744 ▲ 26.9%
Դիրքը՝ 1-ին

Վարկեր (մլն ՀՀ դրամ)

2013թ.՝ 176,133

286,143 ▲ 62.5%
Դիրքը՝ 1-ին

Կապիտալի շահութաբերությունը ROAE

2013թ.՝ 15.8%

17.8%

Պարտավորություններ (մլն ՀՀ դրամ)

2013թ.՝ 276,342

357,389 ▲ 29.3%
Դիրքը՝ 1-ին

Զուտ շահույթ (մլն ՀՀ դրամ)

2013թ.՝ 6,057

7,149 ▲ 18%
Դիրքը՝ 1-ին

Ակտիվների շահութաբերությունը ROAA

2013թ.՝ 2.0%

2.1%

ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԵՎ
ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ ԶԳՏՈՒՄ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂԹԱՐՇԱՎՈ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՈՒԺ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ
ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ



ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅԻ ՈՒՂԵՐՁԸ



ԱՆԴՐԵՅ ՄԿՐՏՉՅԱՆ

Տնօրենների խորհրդի նախագահ

Հարգելի՛ հաճախորդներ, բաժնետերեր և գործընկերներ,

2014թ. մենք գրանցել ենք աննախադեպ արդյունքներ՝ դառնալով ՀՀ բանկային համակարգի բացարձակ առաջատարն ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ զուտ շահույթ, ընդհանուր ակտիվներ, հաճախորդներին տրված վարկեր, պարտավորություններ հաճախորդների նկատմամբ և ընդհանուր պարտավորություններ: Մշտապես հավատարիմ մնալով մեր որոշմամբ սկզբունքներին՝ սպասարկման որակին, նորարարությանը և բաժնետիրական արժեքի ավելացմանը՝ մենք կարողացանք ապահովել կայուն և ողջամիտ հաշվեկշիռ՝ միաժամանակ մի քանի անգամ գերազանցելով բանկային համակարգի աճի հիմնական ցուցանիշները: Ամերիաբանկի դրամային զուտ շահույթն աճեց 18%-ով, մինչդեռ բանկային համակարգի միջին ցուցանիշը 41.3%-ով կրճատվեց: Կապիտալի եկամտաբերությունը նույնպես բարձր է՝ 17.8%՝ միջին շուկայական 5.6%-ի համեմատ: 2014թ. Ամերիաբանկը և FMO-ն (Լիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերություն) կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի չափով փոխարկելի ստորադաս փոխառության պայմանագիր: ՀՀ բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ է, որ հայկական բանկը փոխարկելի ստորադաս փոխառություն է ներգրավում միջազգային ֆինանսական կազմակերպությունից: Ակնկալում ենք, որ պարտքային կապիտալը կփոխարկվի ֆիքսված գնով բաժնետոմսերի արդեն 2015թ. ընթացքում: Իսկ ընդհանուր առմամբ, 2014թ. Ամերիաբանկն ապահովեց գործունեության անգերազանցելի ցուցանիշներ՝ չնայած մակրոտնտեսական ոչ բարենպաստ զարգացումների և 4-րդ եռամսյակում տեղի ունեցած ֆինանսական համակարգի նորմատիվ փոփոխությունների:

Ըստ մակրոտնտեսական ցուցանիշների՝ 2014թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ-ն ապահովեց ՀՆԱ-ի աճի բավականին բարձր ցուցանիշ՝ 3.4%: Դա վկայում է ՀՀ տնտեսության որոշակի դիմացկունության մասին անգամ առևտրային գործընկեր երկրներում տիրող իրավիճակի և ՀՀ դրամի արժեզրկման պայմաններում: 2014թ. ՀՀ դրամն արժեզրկվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ 17%-ով՝ զգալիորեն ազդելով սպառողների վարքագծի վրա: Վերոնշյալը հաշվի առնելով՝ մենք վերանայել ենք ռիսկերի կառավարման մեր մեխանիզմներն ու չափանիշները:

Ուշագրավ է, որ Բանկի ակտիվները չեն տուժել դրամի արժեզրկումից: Ունենալով ամենախոշոր վարկային պորտֆելը շուկայում՝ ըստ չափատող վարկերի ցուցանիշի Ամերիաբանկը լավագույնների հնգյակում է:

Արժեզրկմանը զուգահեռ՝ 2014թ. դեկտեմբերին ՀՀ ԿԲ-ն վերանայեց բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալի նորմատիվը՝ սահմանելով այն 30 մլրդ ՀՀ դրամ գործող 5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող այս փոփոխությունն ուղղված է ազատական, բայց միևնույն ժամանակ խիստ կարգավորող բանկային համակարգի կայունության և թափանցիկության ապահովմանը: Ի դեպ, այս պահին 21 բանկերից ընդամենը հինգն են ապահովել 30 մլրդ ՀՀ դրամ սահմանաչափի պահանջը, և Ամերիաբանկն այդ հինգից մեկն է: Մեզ համար սա գրավիչ հնարավորություն է ոչ օրգանական աճի տեսանկյունից: Ցանկանում են նաև շեշտել մեր ձեռքբերումները կորպորատիվ կառավարման ոլորտում: Ամերիաբանկը մշտապես եղել և մնում է հավատարիմ կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշներին: Մենք վստահ ենք, որ փոխարինելիության արդյունավետ պլանավորումն ապահովում է ռիսկերի նվազեցում և կառավարման արդյունավետություն: Այսպիսով՝ 2014թ. ես եկա փոխարինելու Ռուբեն Վարդանյանին Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնում, իսկ նա մնաց թիմի կազմում որպես խորհրդի անդամ՝ շարունակելով ներդրել իր հարուստ փորձն ու գիտելիքը, ինչպես նաև առաջնորդական հմտությունները Բանկի զարգացման գործում: Մենք շարունակաբար ընդլայնում ենք մեր ռիսկերի կառավարման համակարգը: 2014թ. մենք ակտիվորեն աշխատեցինք բանկի կորպորատիվ կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ՝ մշակելով կանոնակարգող փաստաթղթեր Տնօրենների խորհրդին առընթեր այնպիսի կոմիտեների համար, ինչպիսիք են աուդիտի կոմիտեն, ռիսկերի կառավարման կոմիտեն, վարձատրության և առաջնադաս կոմիտեն, ինչպես նաև գործարար էթիկայի սկզբունքները և աշխատակիցների վարքականոնը: Նշված բոլոր փաստաթղթերն ուժի մեջ են մտնելու 2015թ.-ից: Սա ևս մեկ կարևոր քայլ է մեր թիմային և հաճախորդանետ կորպորատիվ մշակույթն ամրապնդելու ուղղությամբ: Մենք շարունակեցինք խոշոր ներդրումներ ուղղել անձնակազմի զարգացմանը, աշխատաշուկայի լավագույն մասնագետների բացահայտմանը:

Նայելով առաջ՝ հետագայում ևս մենք մտադիր ենք շեշտը դնել մեր մրցակցային առավելությունների վրա՝ նպատակ ունենալով ամրապնդել մեր առաջատար դիրքերը շուկայի բոլոր հատվածներում և շարունակել ապահովել բարձր ֆինանսական ցուցանիշներ ինչպես 2015թ., այնպես էլ հետագայում: Վստահ եմ, որ շարունակական գերազանցության ուղղված մեր ջանքերը կօգնեն մեզ պահպանել առաջատարի մեր դիրքը և ապահովել ինչպես օրգանական, այնպես էլ անօրգանական աճ՝ ի հեճուկս հեղիեղուկ մակրոտնտեսական միջավայրի:

Եզրափակելով խոսքս՝ ցանկանում եմ իմ երախտագիտության խոսքերն ուղղել մեր բոլոր հաճախորդներին, գործընկերներին, բաժնետերերին, խորհրդի անդամներին, Բանկի ղեկավարությանը և, իհարկե, մեր թիմին, քանի որ նրանց բոլորի միասնական ջանքերի շնորհիվ է, որ մենք կարողացանք հաջողությամբ հաղթահարել ներկայիս առաջատարի դիրքին հասնելու դժվարին ուղին:



ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ



ԱՐՏԱԿ ԳՆԵՍՅԱՆ

Տնօրինության նախագահ,
Գլխավոր տնօրեն

2014թ. մեր ցուցանիշները և դիրքը շուկայում վկայում են վերջին 7 տարիների ընթացքում մեր կողմից որդեգրված ռազմավարության և գործարար մոդելի կայունության մասին: Մեր արձագանքը շուկայի տատանումներին եղել է հետևողական, բայց միաժամանակ՝ ձկուն, և հենց դրա շնորհիվ մենք կարողացել ենք ճիշտ օգտվել շուկայի ազդակներից՝ ապահովելով զուտ շահույթի 18% աճ և բաժնետիրական կապիտալի 17.8% եկամտաբերություն: Մեր արդյունքները վկայում են այն մասին, որ չնայած ֆինանսական հատվածի դանդաղ աճի միտումներին, մենք կարողացել ենք պահպանել կայուն հաշվեկշիռ, ծախսերի կառավարման կենսունակ մեխանիզմներ, շահութաբերության աճ՝ այդպիսով նվաճելով և պահպանելով մեր հաճախորդների ու գործընկերների շարունակական վստահությունը:

Ձեր ուշադրությանն եմ ներկայացնում 2014թ. մեր գործունեության արդյունքները և ձեռքբերումները՝ հատուկ առանձնացնելով շարունակական աճին և հաջողությանը նպաստող մի շարք կարևոր գործոններ:

ՇՈՒԿԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ԶԳՏՈՒՄ

Գրանցելով բարձր արդյունքներ՝ մենք դարձանք շուկայի առաջատարն ըստ զուտ շահույթի, ակտիվների, վարկային պորտֆելի, պարտավորությունների և հաճախորդների ավանդների: Առաջին տեղում լինելը հաճելի է, բայց միևնույն ժամանակ պարտավորեցնող՝ պահպանելու դիրքերը և օրինակ ծառայելու շուկայի մնացած 20 մասնակիցների համար: Մեր շուկայական դիրքն առավելապես հիմնված է մեր Բանկի գործունեության առանցքը կազմող զարգացած մանրածախ և կորպորատիվ գործունեության վրա, և մենք նպատակ ունենք պահպանելու այն:

Մենք հավատարիմ ենք մեր ռազմավարական նպատակին՝ դառնալ իրապես ունիվերսալ Բանկ՝ դիվերսիֆիկացված վարկային պորտֆելով և եկամտի աղբյուրներով: Շնորհիվ մի շարք արշավների և նոր ծառայությունների ներդրման՝ մեր ՓՄՁ վարկային պորտֆելի տարեկան աճը կազմեց 73.2%, մանրածախ վարկերինը՝ 37.7%: Ուշագրավ է, որ չնայած մեր վարկային պորտֆելն ամենամեծն է շուկայում, մեր չաշխատող վարկերը կազմում են ընդամենը 3.1%, մինչդեռ 2014թ. բանկային համակարգի միջին ցուցանիշը եղել է 7.9%: Այս ցուցանիշով Բանկը գտնվում է լավագույնների հնգյակում: Մենք նաև մշտապես ձգտում ենք բարձրացնել արդյունավետությունը և ներդրողների

եկամտաբերությունը. այսպիսով՝ մեր կապիտալի եկամտաբերությունը կազմել է 17.8%, ինչպես նախատեսված էր տարեկան ռազմավարական պլաններով: Ընթացիկ կարևորագույն խնդիրներից է նաև ծախսերի վերահսկման բարելավումը և ծախսեր/եկամուտ հարաբերակցության նվազեցումը: Մեզ հաջողվել է ապահովել ծախսեր/եկամուտ հարաբերակցության շուկայական 49.4% ցուցանիշից զգալիորեն ցածր մակարդակ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները հասել են 373 մլն ԱՄՆ դոլարի (ներառյալ Առևտրի ֆինանսավորման ծրագիրը). սա Ամերիաբանկի և ՄՖԿ-ների միջև ստեղծված երկարաժամկետ կայուն գործընկերության հերթական ապացույցն է: Ուշագրավ է այն փաստը, որ Հայաստանի բանկային համակարգի համար մեկ բանկի հաշվով նման ծավալն աննախադեպ է: 2014թ. մենք կնքեցինք ֆինանսական միջոցների ներգրավման մի շարք խոշոր գումարով պայմանագրեր Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) (10 մլն ԱՄՆ դոլար), Առևտրի և զարգացման սևծովյան բանկի (BSTDB) (10 մլն ԱՄՆ դոլար) և Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO) հետ (20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադաս փոխառություն):

2014թ. Բանկի ակտիվների աճը կազմեց 26.9%, վարկերինը՝ 62.5% (այդ թվում՝ լիզինգը և ֆակտորինգը), պարտավորություններինը՝ 29.3%, իսկ հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորություններինը՝ 22.8%՝ գերազանցելով շուկայական ցուցանիշերը, որոնք համապատասխանաբար կազմել էին 16.1%, 20.4%, 18% և 4.45%:

ԶԱՐԳԱՑՈՒՄ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Ամերիաբանկում մենք մշտապես ձգտում ենք ներդնել ամենաժամանակակից տեխնոլոգիաները և նորամուծությունները՝ նպատակ ունենալով ապահովել սպասարկման ամենաբարձր որակը: Այս մասին վկայում է գերմանական TÜV Rheinland ընկերության կողմից 2009թ. Ամերիաբանկին ISO 9001:2008 որակի կառավարման վկայականի շնորհումը և հետագա տարիներին վերջինիս վերահաստատումը: 2014թ. գործարկվեց Ամերիաբանկի շուրջօրյա կոնտակտային կենտրոնը, ինչպես նաև ընդլայնվեց և հեշտացվեց Ինտերնետ-բանկ համակարգի հասանելիությունը «ՄոբայլԲանկինգ» ծառայության ներդրման միջոցով: Մենք նաև մեր հաճախորդներին առաջարկում

ենք առևտրային և բրոքերային գործառնությունների մրցակցային հարթակներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործառնություններ իրականացնել ամբողջ աշխարհի շուկաներում: 2014թ. մարտին «Երևան Մոլ» առևտրի նորաբաց կենտրոնում կայացավ Ամերիաբանկի «Արշակունյաց» մասնաձյուղի բացման հանդիսավոր արարողությունը: Մասնաձյուղում գործարկվեց կանխիկ մուտքագրման առաջին բանկոմատը, որը հատուկ ներդրվել է հաճախորդների արագ ինքնասպասարկման համար:

ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԵՆԻՃ

Որպես իսկական հաճախորդամետ Բանկ՝ մենք NPS տեխնոլոգիայի միջոցով մշտապես հետևում ենք հաճախորդների բավարարվածության մակարդակին, որը տարեցտարի աճում է: Մենք շարունակում ենք ֆինանսական և մասնագիտական ներդրումներ կատարել հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման CRM համակարգում: Շնորհիվ սպասարկման որակի բարելավմանը և շուկայական դիրքի ամրապնդմանն ուղղված մեր մշտական ջանքերի՝ Ամերիաբանկը ՀՀ բանկային շուկայի առաջատարն է ըստ բրենդի ծանաչելիության, որի մասին են վկայում «Ամերիա» խորհրդանշական ծառայության կողմից անցկացվող տարեկան հարցումները:

Ամերիաբանկն այս տարի երրորդ անգամ արժանացավ Euromoney միջազգային հեղինակավոր ամսագրի «Հայաստանի լավագույն բանկ 2014» գերազանցության մրցանակին և 4-րդ անգամ՝ Global Finance ամսագրի «Տարվա լավագույն բանկ» մրցանակին և «Առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն բանկ» մրցանակին: Բանկը ստացել է նաև ՎՋԲԲ-ի «Տարվա լավագույն գործարք» մրցանակը:

ՀԱՄԱԽՄԲԵԼՈՒ, ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐ ՆԵՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՅԱՆԱԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք վստահ ենք, որ մեր հաջողության հիմնաքարը եռանդուն և իրենց գործին նվիրված մասնագետներից բաղկացած մեր թիմն է՝ մարդիկ, որոնք աշխատում են հաճույքով ու մեծ նվիրումով և հպարտ են Երազանքի թիմի մասնիկը լինելու համար: Ուստի մենք ջանք չենք խնայում զանազան կրթական և ուսումնական ծրագրերի միջոցով մեր անձնակազմի զարգացումն ապահովելու համար: Այդ նպատակով Բանկում գործում է լիարժեք ուսումնական կենտրոն, իսկ նորավարտ մասնագետների

համար գործում է «Ամերիա սերունդ» ծրագիրը, որի շրջանակներում դիմորդների հսկայական զանգվածից ընտրված տաղանդավոր երիտասարդներ մասնագիտական զարգացման ծանապարհն են անցնում Ամերիաբանկում: Մենք ստեղծել ենք կորպորատիվ մշակույթ, որով խրախուսվում են ինքնազարգացումը և նախաձեռնողականությունը: Բանկն իր անձնակազմի համար սահմանել է աննախադեպ արտոնություններ, հատկապես կիսամյակային գնահատման ընթացքում բարձր արդյունքներ ցուցաբերած աշխատակիցների համար:

Հետադարձ հայացք նետելով՝ ես հպարտ եմ արձանագրել այն արդյունքները, որոնց կարողացել ենք հասել: Գործարար ոգին Ամերիաբանկի կորպորատիվ մշակույթի հիմնաքարն է և մեր ամենամոտեղ ակտիվներից մեկը, որի շնորհիվ մենք կարողացել ենք ստեղծել հզոր բրենդ, որը դժվար կլինի կրկնել և գրեթե անհնար գերազանցել: Նմանօրինակ բարձունքներին հասնելն իր հերթին ստեղծում է մի նոր և շատ կարևոր խնդիր՝ դիվերսիֆիկացնել վարկային պորտֆելը և եկամտի աղբյուրները, տեղական և տարածաշրջանային կլանումների միջոցով ընդլայնել ներկայությունը:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ

Մենք անհամբեր սպասում ենք հերթական հետաքրքիր և բեղուն աշխատանքային տարվան: Դեռևս մի քանի տարի առաջ որոշեցրված մեր հիմնական ռազմավարական ծրագրերը գնալով թափ են հավաքում: Անցած տարի Բանկն արձանագրել է զգալի աճ, բայց առաջիկայում մենք դեռ շատ անելիքներ ունենք՝ Ամերիաբանկի ողջ ներուժն օգտագործելով: Մենք վստահ ենք, որ ունենք ուժեղ մրցակցային դիրք, և շարունակ ձգտում ենք բաժնետերերին, վարկատուներին, հաճախորդներին և անձնակազմին փոխանցել արժեքներ:

Ես պատիվ ունեմ իմ երախտիքի խոսքն ուղղելու իսկական պրոֆեսիոնալներից և վառ անհատականություններից բաղկացած մեր թիմի անդամներին: Շնորհակալություն եմ հայտնում նաև մեր հաճախորդներին, գործընկերներին, մատակարարներին և բոլոր մյուս շահառուներին իրենց ցուցաբերած վստահության և հավատարմության համար, որի շնորհիվ մենք շարունակաբար ընդլայնում ենք մեր բիզնեսը և ամրապնդում առաջատարի մեր դիրքերը: Շնորհակալ ենք մեր բաժնետերերին և խորհրդին՝ մշտական աջակցության, խրախուսման և բարի կամքի համար:

Ամրություն



ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԱՎՈՒՄ Է
ԻՑ

Ամրություն

ԽՄԲԻ ՄԱՍԻՆ



2007թ.-ից ի վեր «Ամերիա» ընկերությունների խումբը մատուցում է տարատեսակ ֆինանսական և խորհրդատվական ծառայություններ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում: Խումբն ապացուցել է իր գերազանցությունը և ամրապնդել առաջատարի դիրքը ֆինանսական ցուցանիշներով, անհատական մոտեցումներով, համապարփակ լուծումներով, հաճախորդների բազայի բազմազանությամբ և բարձր եկամտային սեգմենտի հաճախորդների ընդարձակ ցանկով:

«Ամերիա» ընկերությունների խումբն ունի արդեն 17 տարվա պատմություն: Որպես Հայաստանում առաջին մասնագիտական խորհրդատվական ընկերություններից մեկը՝ «Ամերիա» ընկերությունների խումբը 1998թ.-ից ի վեր իր հովանու տակ է միավորում երիտասարդ, նվիրված և խոստումնալից փորձագետների: 1999թ. և 2007թ. Ամերիան վերանայեց իր ծառայությունները՝ դրանք համալրելով իրավաբանական խորհրդատվության, հարկային խորհրդատվության, և ակտիվների կառավարման ծառայություններով: 2007թ. Ամերիան «Ամերիա Գրուպ Սի Ուայ Լիմիթեդ» (նախկին Թի Դի Էյ Յուլիմս Լիմիթեդ) ընկերության հետ միասին սկսեց հայաստանյան զարգացող բանկային շուկայում ամենաազդեցիկ ընդլայնման արշավը: Նույն թվականին «Ամերիա Գրուպ Սի Ուայ» ընկերությունը ձեռք բերեց Հայնեթարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը, իսկ բանկը վերաբրենդավորվեց և վերանվանվեց Ամերիաբանկ: Հիմնական բաժնետիրոջ փոփոխությամբ նշանավորվեց Բանկի զարգացման նոր փուլի մեկնարկը՝ նոր

ռազմավարությամբ և կառավարման նոր սկզբունքներով: Այսօր «Ամերիա» խումբը Հայաստանում այն սակավաթիվ կազմակերպություններից է, եթե ոչ միակը, որ տրամադրում է ֆինանսական և խորհրդատվական ծառայությունների համապարփակ փաթեթ՝ հետևյալ հիմնական ոլորտներում.

- ▶ Բանկային գործունեություն
- ▶ Ներդրումաբանկային գործունեություն և ակտիվների կառավարում
- ▶ Կառավարման խորհրդատվություն
- ▶ Իրավաբանական խորհրդատվություն
- ▶ Անշարժ գույքի կառավարում և ֆինանսավորում

ԱՄԵՐԻԱՆ Հայաստանում իրավաբանական և կառավարման խորհրդատվության ոլորտի առաջատարներից է, որը մատուցում է բազմակողմանի ծառայությունների ամբողջական փաթեթ մեկ խորհրդատվական թիմի ներքո: Խորհրդատուների ունիվերսալ թիմը տրամադրում է համակողմանի խորհրդատվական ծառայություններ, որի շնորհիվ հաճախորդի յուրաքանչյուր գործ վերլուծվում է միաժամանակ իրավաբանական, հարկային, ֆինանսական և կառավարչական տեսանկյուններից: Մեր խորհրդատվական ծառայությունները ներառում են իրավաբանական խորհրդատվություն (կորպորատիվ կառավարում, միաձուլումներ և ձեռքբերումներ, պետական բարեփոխումներ, հարկեր և մաքսատույրներ և այլն), կորպորատիվ վերակազմավորում, զարգացում և ռազմավարություն,

Հայկական ժարտարապետության գոհարները եկեղեցիները, վանքերը և տաճարներն են, որոնք հայտնի են աշխարհին իրենց հարուստ զարդաքանդակներով: Հայաստանի լեռնոտ բնության ու երկրաշարժերի վտանգի պատճառով այդ հայրստությունը դարձել է պահպանելու համար ժարտարապետները հատուկ շեշտ էին դնում կառույցների ամրության վրա:



գործառնություններ և տեխնոլոգիաներ, համալիր կառավարչական լուծումներ և հետազոտություններ և այլն:

ԱՄԵՐԻԱ ԱՄԵՐ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ներքո «Ամերիա» խումբը կենտրոնացրել է ակտիվների կառավարման հմտություններն ու հնարավորությունները: Մեր պորտֆելների կառավարման թիվը առաջիններից մեկը Հայաստանում ներդրեց փայատիրական հիմնադրամներ և մինչ օրս հաջողությամբ իրականացնում է դրանց կառավարումը: Ակտիվների կառավարման մեր մոդելի հիմքում ընկած է նորարարությունը: Այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ ակտիվների կառավարման ծառայությունների պահանջարկը փոքր է, այնուհանդերձ, մեզ հաջողվել է մշակել այնպիսի պրոդուկտներ, որոնք ոչ միայն մրցունակ են մանրածախ ներդրումների ավանդաբար գերակշիռ մասը կազմող բանկային ավանդների հետ, այլ մասամբ նույնիսկ գրավում են դրանց զբաղեցրած մասնաբաժինը շուկայում:

2011թ.-ից Սփյուռքի համայնքը հնարավորություն ստացավ օգտվել խորհրդատվական ծառայություններից, որոնք Սփյուռքի ներդրողների համար

բացահայտում են Հայաստանի խոստումնալից բիզնեսը և ներդրումային հնարավորությունները:

Լինելով «Ամերիա» խմբի ներկայացուցչական գրասենյակը Լոս Անջելեսում (ԱՄՆ)՝ **ԱՄԵՐԻԱ ԳՐՈՒՊ ԻՆՔԸ** ծառայում է որպես կամուրջ Հայաստանի և Սփյուռքի միջև՝ տրամադրելով պրոֆեսիոնալ ծառայություններ, հատկապես՝ իրավաբանական, կառավարման խորհրդատվության, միաձուլումների և ձեռքբերումների, բաժնային ֆինանսավորման ոլորտներում:

ՓՐՈԳՆՈՒԹ ԴԻՎԵՐՍԻՄԵՆԹ ԶԱՄՓԼԻՆ (PRODECO) իրականացնում է ներդրումներ անշարժ գույքի շուկայում և մատուցում շինարարական աշխատանքների կառավարման և վերահսկման ծառայություններ: Ընկերության գործունեության հիմքում ընկած է հեռանկարային մոտեցումը՝ ուղղված կայուն զարգացմանը և շենքերի նախագծման ժամանակ նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը: Ներկայումս ընկերությունն իրականացնում է ժամանակակից երևանի ամենահին շենքերից

մեկի վերակառուցման նախագիծը՝ միաժամանակ կառուցելով Հայաստանում առաջին «կանաչ» բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոնը: Այս նախագծի իրականացման համար ռազմավարական ներդրողները (Միջազգային ֆինանսական կորպորացիա՝ ՄՖԿ և Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն՝ DEG) տրամադրել են 18 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում:

«Ամերիա» խմբի ամենադինամիկ և կայուն աճ արձանագրող ընկերություններից է **ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ**, ունիվերսալ Բանկ, որը մատուցում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ: Մենք որդեգրել ենք մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից են **անհատական մոտեցումը յուրաքանչյուր հաճախորդին և նորարարությունը՝ համատեղված բարձր պրոֆեսիոնալիզմի և փորձի հետ, և այս ամենը՝ միասնական երազանքի թիմում:** Այս մոտեցումը դարձավ մեր հաջողության բանալին՝ թույլ տալով Ամերիաբանկին դառնալ հայկական բանկային համակարգի առաջատարներից մեկը:



ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Բարելավել կյանքի որակը՝

- ▶ տրամադրելով մեր հաճախորդներին միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- ▶ իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ▶ ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության զարգացման սեփական մոդել՝ միավորելով հաջողակ մարդկանց,
- ▶ շարունակաբար ավելացնելով մեր բաժնետիրական արժեքը:

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆ

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Մենք ձգտում ենք մեր հաճախորդների սպասարկումն ու մասնագիտական խորհրդատվությունը հասցնել կատարելության: Մեր թափանցիկ, ազնիվ, անկողմնակալ և հաճախորդակենտրոն գործելաոճի շնորհիվ մենք գրավել ենք մեր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների վստահությանը: Շնորհիվ ազնվության, փոխադարձ հարգանքի, վստահության և հուսալիության՝ մենք դարձել ենք Երազանքի թիմ, որի յուրաքանչյուր անդամին վճռված է լինել սոցիալապես, բարոյապես և էկոլոգիապես պատասխանատու քաղաքացի և նախաձեռնել հանրօգուտ փոփոխություններ:

ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող միջազգային ընկերություն:

Լինել թիրախային շուկաներում առաջատարը սպասարկման որակով և արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:



ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ



1910 - 1924

1910 թվականին Տեր-Ղուկասյան փողոցում կառուցվեց Թիֆլիսի առևտրային բանկի Էրիվանյան մասնաճյուղը: 1916թ. Թիֆլիսի առևտրային բանկը վերանվանվեց Կովկասյան բանկի: Արխիվային տվյալները փաստում են, որ Հայաստանի առաջին հանրապետության տարիներին Հայաստան մուտք գործող դրամական հոսքերը հիմնականում անցնում էին Կովկասյան բանկի Էրիվանյան մասնաճյուղով: Հեղափոխական կոմիտեի 1920թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ Հայաստանի տարածքում գործող մասնավոր բանկերն ազգայնացվեցին, և 1922թ. մարտի 24-ին հիշյալ շենք տեղափոխվեց Հայաստանի Պետական բանկը: Մինչ այդ՝ 1921թ. փետրվարից մինչև 1922թ. մարտը, շենքն զբաղեցնում էր Հայկական հեռագրային գործակալությունը: 1924թ. մարտին հիմնադրվեց Հայաստանի Կոմունալ բանկը, որը նույն թվականին սկսեց գործել Նալբանդյան 2 (նախկին Տեր-Ղուկասով փողոց) հասցեում:

1959 - 1995

1959թ. Կոմունալ բանկը լուծարվեց, և նրա ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվեցին Ստորյանկի հայաստանյան գրասենյակին, որը տեղակայված էր նույն վայրում՝ Նալբանդյան 2 հասցեում գտնվող պատմական բանկային շենքում: 1974թ. նույն շենքում հիմնադրվեց ԽՍՀՄ Վնեշտորգբանկի

հայաստանյան մասնաճյուղը, իսկ Ստորյանկի մասնաճյուղը տեղափոխվեց այլ տարածք: 1988թ. նույն շենքում ձևավորվեց ԽՍՀՄ Վնեշէկոնոմբանկի հանրապետական մասնաճյուղը, որը 1992թ. վերակազմակերպվեց և դարձավ Հայնեռարտբանկ: 1995թ. տեղի ունեցավ օտարերկրյա կապիտալի ներգրավում. բանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք բերվեց «Քոմփուրոն Ինդասթրիա Իսթերիշմենթ» ընկերության կողմից:

2007 - 2009

2007թ. Հայնեռարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք բերվեց «Թի Դի Էյ Յոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից: 2008թ. «Հայնեռարտբանկ» ՓԲԸ-ն վերանվեց «Ամերիաբանկ» ՓԲԸ:

Մրցանակներ և հավաստագրեր

2009թ. Բանկը ստացավ ISO 9001:2008 որակի միջազգային չափանիշներին համապատասխանության վկայագիր:

Նորարարություն և ենթակառուցվածք

▶ 2008թ. բացվեց 2 մասնաճյուղ՝ Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության կենտրոն Քաջարանում (Սյունիքի մարզ) և Երևանում («Կենտրոն» մասնաճյուղ), իսկ գլխամասային գրասենյակը տեղափոխվեց նոր տարածք:

▶ 2008թ. Ամերիաբանկը դարձավ Visa International-ի հիմնական անդամ և Հայկական ֆոնդային բորսայի անդամ:

Ֆինանսական գործարքներ

▶ 2009թ. հուլիսին առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի (GTFP) շրջանակներում կնքվեց պայմանագիր ՄՖԿ-ի հետ:

▶ Նույն տարվա դեկտեմբերին կնքվեց պայմանագիր Հոլանդիայի զարգացման բանկի (FMO) և Գերմանական ներդրումների և զարգացման ընկերության (Deutsche Investitions und Entwicklungsgesellschaft mbH, DEG) հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման նպատակով 30 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ներգրավելու վերաբերյալ:

2010 - 2011

Մրցանակներ և հավաստագրեր

▶ 2010թ. Բանկն արժանացավ Կոմերցբանկի 2 մրցանակի՝ 2009թ. միջազգային գործառնությունների անթերի իրականացման և առևտրի ֆինանսավորման ոլորտում նշանակալից ձեռքբերումների համար:

▶ 2010թ. Financial Times-ի The Banker ամսագրի կողմից Ամերիաբանկը ծանաչվեց Հայաստանի տարվա լավագույն բանկ:

▶ Բանկը նաև արժանացավ Euromoney-ի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2011» գերազանցության մրցանակին:

▶ ՄՖԿ-ն Ամերիաբանկին շնորհեց «Առևտրի ֆինանսավորում 2010» մրցանակը՝ որպես առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում Կովկասյան տարածաշրջանում ամենաակտիվ թողարկող բանկ:

Նորարարություն և ենթակառուցվածք

Բանկը բացեց 5 նոր մասնաճյուղ՝ 2-ը մարզերում («Դիլիջան» և «Վանաձոր») և 3-ը՝ մայրաքաղաքում («Կասկադ», «Կոմիտաս», «Մոսկովյան»):

Բանկը ԱՄՆ ՄԶԳ «Գործընկերներ հանուն ֆինանսական կայունության» ծրագրի շրջանակներում ներդրեց գնման պատվերի ֆինանսավորման ծառայությունը և ստացավ միջնաժամկետ և երկարաժամկետ պետական (գանձապետական) պարտատոմսերի գործակալի կարգավիճակ:

Ֆինանսական գործարքներ

2010թ. կնքվեց պայմանագիր Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) հետ՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար Ամերիաբանկին 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ տրամադրելու վերաբերյալ, ինչպես նաև 2 պայմանագիր Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ՝ մեկն առևտրի ֆինանսավորման համար, մյուսը՝ 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Կոմերցբանկն Ամերիաբանկին տրամադրեց բանկային երաշխիք ՀՀ դրամով և առանց գրավի ու երաշխավորության վարկ՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

2012 - 2013

Մրցանակներ և հավաստագրեր

- ▶ Euromoney-ի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2012» գերազանցության մրցանակ երկրորդ տարին անընդմեջ:
- ▶ Financial Times-ի The Banker ամսագրի կողմից՝ «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2013 մրցանակ»:
- ▶ ՄՖԿ-ի՝ «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգախնայողության ապահովման տեսանկյունից տարվա լավագույն թողարկող բանկ» մրցանակ:
- ▶ ՎԶԵԲ-ի՝ «Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում տարվա լավագույն թողարկող բանկ 2012» մրցանակ:
- ▶ Կոմերցբանկի՝ «Առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն գործընկեր 2012», «Առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանցության մրցանակ «2013»:
- ▶ Մրցանակ միջազգային վճարման հանձնարարականների անթերի կատարման համար, 2012թ. Global Finance-ի՝ «Արտարժույթ փոխանակող լավագույն բանկ», «Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում

լավագույն բանկ» և «Հայաստանի տարվա լավագույն բանկ» մրցանակներ 2012 և 2013:

- ▶ 2013թ. Բանկը դարձավ ֆակտորների խոշորագույն միջազգային միության՝ «Ֆակտորգ Զեյն Ինթերնեշնլ»-ի անդամ:

Նորարարություն և ենթակառուցվածք

- ▶ Բացվում է 2 մասնաճյուղ Երևանում («Շենգավիթ», «Սայաթ-Նովա»):
- ▶ Առաջին անգամ Հայաստանում Բանկի հաճախորդներին առաջարկվում է ձեռք բերել ՀՀ՝ միջազգային շուկաներում շրջանառվող դոլարային առաջին եվրապարտատոմսերը:
- ▶ Ներդրվում է Visa ինտերնետ էքվայրինգի ծառայությունը:
- ▶ ՎԶԵԲ-ն առաջին անգամ հայկական բանկին ի դեմս Ամերիաբանկի, շնորհում է հաստատող բանկի կարգավիճակ միջազգային առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:

Ֆինանսական գործարքներ

Բանկը հատկացնում է 15 մլն ԱՄՆ դոլար Չարենցավանի պողպատածույական գործարանի վերականգնման համար՝ ՄՖԿ-ի առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում: Կնքվում է վերականգնվող վարկային գծի պայմանագիր առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում և 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր ԱԶԲ-ի հետ, 12 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր ՎԶԵԲ-ի հետ, 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր «Պրոպարկո» ֆրանսիական զարգացման գործակալության հետ և 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր Ավստրիական զարգացման բանկի հետ: Առաջին անգամ Հայաստանում բանկը հաստատում է ակրեդիտիվ հայկական արտահանող ընկերության համար՝ հոգուտ խոշոր բանկային խմբի անդամ հանդիսացող դազախական բանկի:

2014 - 2015

Մրցանակներ և հավաստագրեր

- ▶ Բանկն արժանացավ Euromoney-ի գերազանցության մրցանակին որպես «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2014»: Այս հեղինակավոր մրցանակը բանկին շնորհվեց երրորդ անգամ:
- ▶ Միջազգային Corporate Intl Magazine

2014 ամսագիրը Ամերիաբանկը ծանաչեց Հայաստանում 2013թ. ֆակտորինգային ծառայությունների ոլորտում լավագույն բանկ:

- ▶ 2014թ. Ամերիաբանկին շնորհվեցին ՎԶԵԲ-ի «Տարվա գործարք 2013» մրցանակը՝ առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:
- ▶ Global Finance-ի «Արտարժույթ փոխանակող լավագույն բանկ 2014», «Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն բանկ 2014» մրցանակներ:
- ▶ «Հայաստանում տարվա լավագույն բանկ 2014» մրցանակը:
- ▶ Կոմերցբանկի գերազանցության մրցանակը 2013թ. միջազգային վճարման հանձնարարականների անթերի կատարման համար:
- ▶ Գերմանական TÜV Rheinland Ընկերությունը երկրորդ անգամ վերահաստատեց Ամերիաբանկին շնորհված՝ ISO 9001:2008 որակի կառավարման միջազգային չափանիշներին համապատասխանության վկայականը (2015թ. ապրիլին):

Նորարարություն և ենթակառուցվածք

- ▶ Բացվեց 2 մասնաճյուղ՝ «Արշակունյաց» մասնաճյուղը Երևանում՝ էքսպրես սպասարկմամբ, և «Կապան» մասնաճյուղը ՀՀ Սյունիքի մարզում:
- ▶ Գործարկվեց նորագույն տեխնոլոգիաներով հագեցած կոնտակտային կենտրոնը՝ ապահովելով վճարային քարտերի շուրջօրյա սպասարկում:

Ֆինանսական գործարքներ

- ▶ 2014թ. Ամերիաբանկը դարձավ առաջին հայկական բանկը, որի հետ FMO-ն կնքեց փոխարկելի ստորադաս փոխառության պայմանագիր՝ 20 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:
- ▶ Բանկը նաև կնքեց հորբեյանական 80-րդ գործարքը ՎԶԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:
- ▶ Բանկի վարկային պորտֆելը համարվեց նոր վարկերով՝ «Նորվիկ» ՌԻՎԿ վարկային պորտֆելի մի մասի ձեռքբերման հաշվին:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



Ավստրիական զարգացման բանկ (OeEB)

2013թ. կնքվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր՝ 8 տարի ժամկետով: Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներն ուղղվեցին Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորմանը:



Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

Ամերիաբանկի և ԱԶԲ-ի համագործակցության մեկնարկն ազդարարվեց 2011թ.՝ վերականգնվող վարկ տրամադրելու մասին պայմանագրի կնքմամբ: Պայմանագրի շրջանակներում բանկին տրամադրված միջոցներն ուղղվեցին առևտրի զարգացմանը և Հայաստանի կայուն տնտեսական աճի ապահովմանը: Բանկին տրամադրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: 2012թ. բանկի համար սահմանված առևտրի ֆինանսավորման սահմանաչափը եռապատկվեց՝ 3 մլն-ից հասնելով 9 մլն ԱՄՆ դոլարի:



Առևտրի և զարգացման սևծովյան բանկ

Ամերիաբանկի և սևծովյան բանկի համագործակցությունն սկսվեց 2013թ., երբ կնքվեց մանդատային համաձայնագիր՝ 6 տարի ժամկետով, որի շրջանակներում Ամերիաբանկին տրամադրվեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ՝ նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման համար:



Սիթիբանկ

Սիթիբանկի հետ Ամերիաբանկը համագործակցում է մի քանի համաձայնագրերի շրջանակներում: Մասնավորապես, կնքվել են ընթացիկ դրամական հոսքերի կառավարման և առևտրի ֆինանսավորման սահմանաչափերի պայմանագրեր: 2011թ. համագործակցությունն ընդլայնվեց, և կնքվեց Առևտրի ֆինանսավորման կանխավճարների փոխհատուցման շարունակական համաձայնագիրը, որի շրջանակներում առևտրի ֆինանսավորման համար բանկին տրամադրվեց 4 մլն ԱՄՆ դոլար, որը 2014թ. ավելացվեց մինչև 8 մլն ԱՄՆ դոլար:



Կոմերցբանկ

2011թ. Ամերիաբանկի և Կոմերցբանկի համագործակցությունը նշանավորվեց երկու աննախադեպ գործարքներով, որոնք նպաստեցին առևտրի ֆինանսավորման և փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորման ընդլայնմանը՝ դրանով իսկ խթանելով երկրի ընդհանուր տնտեսական զարգացումը: Մասնավորապես, առաջին գործարքը եզակի էր այն առումով, որ Կոմերցբանկը հայկական բանկի ներկայացմամբ առաջին անգամ հաստատեց բանկային երաշխիք ՀՀ դրամով՝ 805 մլն դրամ ընդհանուր ծավալով, որն ուղղված էր առևտրի ֆինանսավորմանը: ՀՀ ազգային արժույթով երաշխիքի տրամադրումը թույլ տվեց ընդլայնել Ամերիաբանկի հաճախորդների արտաքին առևտրային գործարքների ֆինանսավորումը: Երկրորդ գործարքը ևս նախադեպը չունի. առաջին անգամ Կոմերցբանկը հայկական բանկի տրամադրեց խոշոր վարկ՝ առանց գրավի: Վարկային միջոցներն ուղղվեցին փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը և նպաստեցին հաճախորդների վարկավորման մրցունակ պայմանների ապահովմանը: Բացի այդ, 2010թ.-ից ի վեր Ամերիաբանկը պարբերաբար արժանանում է Կոմերցբանկի տարատեսակ մրցանակների՝ առևտրի ֆինանսավորման, միջազգային գործառնությունների և այլ ոլորտներում:



Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն (DEG)

Բանկը սկսեց DEG-ի հետ համագործակցությունը 2009թ.՝ այս կազմակերպության և FMO-ի հետ համատեղ վարկային գծի պայմանագրի կնքմամբ: Հետագայում համագործակցությունը վերածվեց ռազմավարական գործընկերության, երբ 2012թ. նոյեմբերին ստորագրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Վարկը տրամադրվել է 8 տարի ժամկետով և նախատեսված է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Այս համագործակցությունը համահունչ է բանկի ռազմավարությանը, համաձայն որի փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորումը վարկային քաղաքականության առաջնային ուղղություններից է: 2013թ. DEG-ի հետ համագործակցության շրջանակներում բանկին տրամադրված վարկային միջոցների ծավալը հասավ 35 մլն ԱՄՆ դոլարի:



Եվրասիական զարգացման բանկ (ԵԶԲ)

2010թ. բանկին տրամադրվեց 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:



Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)

ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունը մեկնարկեց 2010թ., երբ ՎԶԵԲ-ն Ամերիաբանկին տրամադրեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Դրան զուգահեռ ՎԶԵԲ-ը բանկին տրամադրեց նաև 2 մլն ԱՄՆ դոլարի երաշխիք առևտրի ֆինանսավորման համար, իսկ ընդամենը 1 տարի անց երաշխիքի սահմանաչափը հասավ 10

մին ԱՄՆ դոլարի: 2013թ. ՎՋԵԲ-ի կողմից Ամերիաբանկին տրամադրված միջոցների ընդհանուր ծավալը հասավ շուրջ 50 մլն ԱՄՆ դոլարի: Արդեն կնքվել է 80-րդ հորելյանական գործարքը ՎՋԵԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում, իսկ 2014թ. Ամերիաբանկն արժանացավ «Տարվա գործարք 2013» մրցանակին:



Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ)

Դեռևս 2009թ. մեկնարկած համագործակցությունը թույլ տվեց Ամերիաբանկին ընդլայնել վերականգնվող էներգետիկայի ոլորտի, մասնավորապես փոքր ՇԷԿ-երի ֆինանսավորումը, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքների զարգացման հնարավորությունները: Արդյունքում բանկը դարձավ Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտի առաջատար:

ՄՖԿ-ի հետ հետագա համագործակցության շրջանակներում բանկին տրամադրվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորման համար: 2011թ. բանկի և ՄՖԿ-ի համագործակցությունը հասավ այնպիսի մակարդակի, որ ՄՖԿ-ն ավելացրեց բանկին տրամադրված՝ միջազգային առևտրի ֆինանսավորման երաշխիքի սահմանաչափը՝ այն հասցնելով 40 մլն ԱՄՆ դոլարի: Ընդհանուր առմամբ, ՄՖԿ-ի կողմից Ամերիաբանկին տրամադրված միջոցների ծավալը 2013թ. հասավ 55 մլն ԱՄՆ դոլարի:

Բանկի և ՄՖԿ-ի արդյունավետ համագործակցության խոսուն ապացույցներն են «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ» 2011 և 2012 մրցանակները, հատկապես եթե հաշվի առնենք, որ սրանք ՄՖԿ-ի առաջին խրախուսական մրցանակներն են՝ շնորհիվ Կովկասյան տարածաշրջանում գործող բանկի:

ՄՖԿ-ն նաև ֆինանսավորել է «Կամար» բիզնես կենտրոնի շինարարությունը՝ տրամադրելով 9 մլն դոլարի վարկ սեփական միջոցներից, ինչպես նաև 9 մլն դոլար DEG-ից ներգրավված միջոցներից: Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 37 մլն ԱՄՆ դոլար, որի մնացած մասը ֆինանսավորում է «Փրոփերթի Դիվելոպմենթ Զամփին» ՓԲԸ-ն՝ սեփական միջոցների հաշվին:



Պրոպարկո

2013թ. «Պրոպարկո» ֆրանսիական զարգացման գործակալությունը բանկի հետ կնքեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որն ազդարարեց համագործակցության սկիզբը՝ դառնալով Պրոպարկոյի առաջին ներդրումը Հայաստանում և երկրորդը՝ Հարավային Կովկասում: Վարկը ստեղծեց գյուղատնտեսության և փոքր ու միջին վերամշակող ձեռնարկությունների ֆինանսավորման նոր երկարաժամկետ հնարավորություններ՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և ստեղծելով նոր աշխատատեղեր:



Հոլանդիայի զարգացման բանկ (FMO)

Ամերիաբանկն սկսեց համագործակցել FMO-ի հետ 2009թ.-ին՝ ստորագրելով 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որի նպատակն էր Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորումը, որը թույլ տվեց բանկին ընդլայնել ՓՄՁ-ների և փոքր հիդրո և հողմակայանների վարկավորման ծավալները: Համագործակցությունը շարունակվեց նաև 2010թ., երբ Ամերիաբանկը FMO-ի և DEG-ի (Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն) աջակցությամբ բարեհաջող կերպով ավարտեց էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը: Լշենք, որ Ամերիաբանկը տարածաշրջանում առաջիններից էր, որ ներդրեց նման համակարգ՝ արժանանալով FMO-ի և DEG-ի գնահատանքի հավաստագրին և ստանալով 2009թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի շրջանակներում վարկի տոկոսադրույքի նվազեցում:

2014թ. Ամերիաբանկը և FMO-ն կնքեցին 20 մլն ԱՄՆ դոլարի փոխարկելի ստորադրած փոխառություն ներգրավելու մասին աննախադեպ պայմանագիր: Առաջին անգամ ՀՀ բանկային համակարգի պատմության ողջ ընթացքում միջազգային ֆինանսական կազմակերպությունը տրամադրեց փոխարկելի ստորադրած փոխառություն հայկական բանկի: Սա ապացույց է միջազգային ներդրողների՝ ՀՀ բանկային համակարգի հանդեպ աճող վստահության:





ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մենք հպարտանում ենք մեր բաժնետերերի, հաճախորդների, աշխատակիցների և լայն հանրության համար օգտակար լինելու և նրանց շահերը բալանսավորելու մեր ունակությամբ: Մեր գործունեությունը հենվում է այնպիսի հիմնարար սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ ազնվությունը, փոխվստահությունը և գործարար էթիկայի նորմերը, որոնք մեզ թույլ են տալիս հավուր պատշաճի սպասարկել ինչպես անհատներին, այնպես էլ ցանկացած մեծության բիզնես ունեցող իրավաբանական անձանց: Մեր ֆինանսական հզորությունը թույլ է տալիս երաշխավորել մեր հաճախորդների ֆինանսական միջոցների

ապահովությունը: Մենք ստեղծել ենք աշխատատեղ 600-ից ավել մարդկանց համար և դարձել ենք երկրի առաջատար ֆինանսական կառույցներից և լավագույն գործատուներից մեկը՝ նպաստելով ՀՀ տնտեսության զարգացմանը: Միաժամանակ մենք ձգտում ենք գերազանցել մեր իսկ հաջողությունը և այդ նպատակով մշակել ենք կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հատուկ քաղաքականություն, որն ընդգրկում է այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են երեխաների առողջական խնդիրների լուծմանն աջակցելը, կրթությունը, համայնքային զարգացումը և Հայաստանի մշակութային ժառանգության

պահպանումը և վերականգնումը: Մեր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գլխավոր սկզբունքներից մեկն է երկարաժամկետ փոխվստահելի համագործակցությունը որոշակի չափանիշների հիման վրա ընտրված հիմնադրամների հետ: Հավատարիմ մնալով պատասխանատվության և պրոֆեսիոնալիզմի մեր հիմնարար արժեքներին՝ մենք ձգտում ենք գտնել այնպիսի գործընկերներ, որոնք ապահովում են թափանցիկ գործունեություն և պատշաճ հաշվետվություններ, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել բոլոր շահագրգիռ կողմերին:

2014Թ. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ



2014թ. «Ամերիա» ընկերությունների խումբն արդեն 5-րդ անգամ անցկացրեց ավանդույթ դարձած ամանորյա բարեգործական աճուրդը, որի ողջ հասույթը կրկնապատկվեց «Ամերիա» խմբի կողմից և ուղղվեց քաղցկեղով և արյան հիվանդություններով տառապող երեխաների բուժմանը: Այս տարի աճուրդը կազմակերպվեց «Սպորտը կյանքի համար» խորագրի ներքո՝ համախմբելով հայտնի հայազգի և այլազգի մարզիկների, ովքեր նվիրաբերեցին իրենց ստորագրությամբ սպորտային իրեր: Աշխարհահռչակ մարզիկների միահամուռ մասնակցությունը խորհրդանշում է մեր կորպորատիվ արժեքներից կարևորագույնները

թիմային ոգին և միասնականությունը: Աժուրդի հասույթն «Ամերիա» խմբի կողմից կրկնապատկվելուց հետո կազմեց ավելի քան 62 մլն ՀՀ դրամ, որն ամբողջովին ուղղվեց երեխաների բուժմանը: Նշենք, որ 2013թ. հավաքագրվել էր 31 մլն ՀՀ դրամ, 2012թ. 35 մլն ՀՀ դրամ, 2011թ. 10 մլն ՀՀ դրամ և 2010թ.՝ 9.5 մլն ՀՀ դրամ, և յուրաքանչյուր տարի կրկնապատկվել «Ամերիա» խմբի կողմից: Աժուրդի հասույթն ուղղվում է քաղցկեղով, արյան հիվանդություններով, պատանեկան իդիոպաթիկ արթրիտով և այլ հիվանդություններով երեխաներին, որոնք գրանցված են «Օգնենք հայ մանուկներին», «Նվիրիր կյանք» և «Երեխաներ առանց ցավի» հիմնադրամներում: 2014թ. առաջին անգամ ավանդական աճուրդից բացի կայացավ նաև առջանց աճուրդ, որին մասնակցեցին ոչ միայն «Ամերիա» խմբի գործընկերները և հաճախորդները, այլ նաև լայն հանրությունը: Նշված 5 տարիների ընթացքում «Ամերիա» խմբի, մեր գործընկերների, հաճախորդների և աշխատակիցների կատարած նվիրաբերությունները կազմել են 234 մլն ՀՀ դրամ՝ օգնելով փրկել 135 երեխայի կյանք:



Բժշկական ենթակառուցվածքի բարելավում

2014թ. «Ամերիա» ընկերությունների խումբը նաև ֆինանսավորեց մեկ այլ կարևոր նախագիծ՝ ուղղված երեխաների բուժման որակի բարելավմանը: Մասնավորապես, «Ամերիա» խումբը նվիրաբերեց 21 մլն ՀՀ դրամ «Սբ. Աստվածամայր» բժշկական կենտրոնին՝ «Համիլթոն Մեդիքլը» ընկերության արտադրության արհեստական շնչառության նորագույն ապարատի ձեռքբերման համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

**Մարզային դպրոցների
ենթակառուցվածքի զարգացում՝
«Հայաստանի մանուկներ»
(COAF) հիմնադրամի հետ
համագործակցության շրջանակներում**

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հետ մենք համագործակցում ենք 2010թ-ից: Իրականացնում ենք մի շարք ծրագրեր՝ ուղղված սոցիալապես խոցելի մարզային համայնքներում դպրոցների աջակցմանը: 2014թ. վերանորոգվեց Արմավիրի մարզի Հացիկ գյուղի միջնակարգ դպրոցի շենքը:



**Կրթաթոշակներ տաղանդավոր հայ
երեխաներին**

Նպատակ ունենալով բարելավել Հայաստանում կրթության որակը և լավ ունակություններով օժտված երեխաներին իրենց ուսումը շարունակելու հնարավորություն տալ՝ «Ամերիա» խումբը համաֆինանսավորում է Դիլիջանի նորաբաց միջազգային դպրոցի կրթաթոշակային հիմնադրամը: Դիլիջանի միջազգային դպրոցը հանդիսանում է աշխարհի 14 երկրում դպրոցներ և ավելի քան 145 երկրում համագործակցության պայմանագրեր ունեցող United World Colleges (UWC) միջազգային ցանցի անդամ: UWC ցանցի աշակերտներն ընտրվում են ամբողջ աշխարհից՝ ելնելով նրանց անհատական նվաճումներից և ներուժից: 2014թ. «Ամերիա» խումբը Դիլիջանի միջազգային դպրոցի կրթաթոշակային հիմնադրամին տրամադրեց շուրջ 35 մլն ՀՀ դրամ:

**«Հայաստան» համահայկական
հիմնադրամ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ մեր համագործակցությունն սկսվեց 2010թ.: Այդ ժամանակից ի վեր «Ամերիա» խումբն ամեն տարի իր ներդրումն է ունենում հիմնադրամի ավանդական հեռուստամարաթոններում: 2014թ. այն կազմեց 5 մլն ՀՀ դրամ: Հեռուստամարաթոնի նպատակն էր Վարդենիս-Մարտակերտ ծանապարհի կառուցման համար միջոցներ հավաքագրելը՝ Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջանների ու Արցախի միջև հաստատուն ցամաքային կապ ստեղծելու նպատակով:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ



**Երևանում առաջին
հեծանվակայանների բացումը և
հեծանվային մարաթոնը**

2014թ. ապրիլի 17-ին «Ամերիա» ընկերությունների խումբը կազմակերպեց «Կանաչ ուղի» հեծանվային մարաթոնը, որի նպատակն էր առողջ ապրելակերպի և Երևանում «կանաչ» երթևեկության խրախուսումը: Մարաթոնին մասնակցեց շուրջ 300 հոգի: Մարաթոնի շրջանակներում Երևանում բացվեցին առաջին հեծանվակայանները՝ 10-ը կենտրոնում և 8-ը՝ քաղաքի այլ հատվածներում: Միջոցառումն իրականացվեց «Ամերիա» խմբի գործընկեր կազմակերպությունների և Սիրողական հեծանվասպորտի և հեծանվային զբոսաշրջության ֆեդերացիայի աջակցությամբ:

Քաղաքային կյանքի բարելավում

2014թ. մենք շարունակում էինք աջակցել համայնքային զարգացման մի շարք ծրագրերի ՀՀ մարզերում, հատկապես այն մարզերում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղեր: Մասնավորապես, Բանկն աջակցում էր Կապանի, Իջևանի, Քաջարանի, Վանաձորի համայնքներին: Բացի դրանից, աջակցություն ցուցաբերվեց «Էրեբունի-Երևան» հիմնադրամին՝ մայրաքաղաքում մի շարք միջոցառումների կազմակերպման ընթացքում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ



Սբ. Գևորգ եկեղեցին Թբիլիսիում

Հայկական մշակութային ժառանգության պահպանումը Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության անբաժանելի մասն է կազմում, ուստի Բանկը տրամադրեց 8 մլն ՀՀ դրամ Թբիլիսիի Սբ. Գևորգ հայկական եկեղեցու վերականգնման աշխատանքների համար: Եկեղեցին որպես հոգևոր և մշակութային կոթող կարևոր դեր է խաղում Վրաստանի հայ համայնքի կյանքում:



Աստղագիտություն

Աստղագիտություն



ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ



2014թ. առաջին 6 ամիսների ընթացքում Հայաստանի մակրոտնտեսական վիճակը բնութագրվում էր շարունակվող հետձգնաժամային վերականգնմամբ, որին հաջորդեցին Ռուսաստանի տնտեսական վիճակի վատթարացմամբ պայմանավորված նոր ձգնաժամի առաջին նախանշանները: 2009թ. համաշխարհային տնտեսական ձգնաժամի հետևանքով ՀՀ տնտեսությունը գրանցել էր 14.1%-ով անկում, իսկ 2010-2013թթ. աստիճանաբար վերականգնվում էր: 2014թ. տնտեսական աճը կազմում էր 3.4%, որը մոտ է 2013թ. ցուցանիշին (3.5%), սակայն այն դանդաղել էր մի շարք գործոնների պատճառով, որոնք կարող են անդրադառնալ նաև 2015թ. ցուցանիշների վրա:

ՀՀ տնտեսության վրա առավել մեծ ազդեցություն թողած արտաքին գործոններն էին՝ 2014թ. համաշխարհային տնտեսության դանդաղ աճը (պայմանավորված զարգացող երկրներում տիրող իրավիճակով), նավթի և մետաղների գների անկումը, աշխարհաքաղաքական զարգացումները և Ռուսաստանի տնտեսության վատթարացումը՝ հատկապես 4-րդ եռամսյակում: ՀՀ տնտեսության զարգացումը մեծապես կախված է Հայաստանի հիմնական առևտրային գործընկերների՝ Եվրոպայի և Ռուսաստանի տնտեսական վիճակից: Ռուսաստանից կախվածությունն էլ ավելի խորացավ Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելուց հետո: 2014թ. հունվարին ՀՀ կառավարությունն ընդունեց ԵՏՄ

անդամակցության ծանապարհային քարտեզը, իսկ 2015թ. հունվարի 1-ից Հայաստանը միացավ ԵՏՄ-ին: Առավելություններով հանդերձ այս անդամակցությունն ունի նաև մի շարք բացասական կողմեր, մասնավորապես այն, որ Ռուսաստանի տնտեսության ցանկացած վատթարացում անմիջապես կանդրադառնա Հայաստանի վրա: 2014թ. դրա ապացույցն էր: Ամենաակներև հետևանքներից էր տարեկան կտրվածքով մասնավոր տրանսֆերտների ծավալի նվազումը 7.6%-ով, ընդ որում միայն 4-րդ եռամսյակում տրանսֆերտները նվազեցին 23.5%-ով: ՀՀ տնտեսության աճը զսպող մեկ այլ գործոն է հայկական արտադրանքի համեմատաբար ցածր մրցունակությունը՝ հատկապես տարածաշրջանային շուկայի բացակայության և հարևան երկրների հետ փակ սահմանների պայմաններում:


Այս ամենի պատճառով 2013-2014թթ. ՀՀ տնտեսության վերականգնման տեմպերը շատ ավելի դանդաղ էին (միջին տարեկան ցուցանիշը՝ 3.5%), քան նախորդ 2 տարիների ընթացքում (5.9%), և մոտակա 3 տարիների կանխատեսումներն աճի ավելի բարձր տեմպեր չեն խոստանում: Ըստ Բանկի կանխատեսումների՝ 2015թ. ՀՀ տնտեսական աճը կկազմի մոտ 1%, իսկ 2014թ. միջազգային կառույցների կողմից արված կանխատեսումների՝ 0-3%:

2014թ. (դեկտեմբերից դեկտեմբեր) սպառողական գների ինդեքսը կազմում էր 4.6% գնաճի կանխատեսված սահմաններում 4% ($\pm 1.5\%$): Գնաճի միջին


Քարահունջը (կամ Զորաց Քարերը) Հայաստանի ամենահայտնի և հետաքրքիր հնագիտական վայրերից է: Ընդհանուր առմամբ թվով 84 քարերից յուրաքանչյուրը վերին հատվածում ունի կլորավուն անցք: Ամռան կեսերին երեքից չորս դիրքերից նայելիս այդ անցքերը ցույց են տալիս արևածագը և մայրամուտը: Ըստ որոշ մասնագետների քարերի այս խումբը 7600 տարեկան է: այսպիսով Քարահունջը աշխարհի հնագույն աստղադիտարանն է:




ՀԱՄԱՆԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ (ՀՆԱ)



ՀՆԱ ՄԱՍՆԱԲԱԺԻՆ




ՓՈԽԱՐԺԵՔ ԵՎ ԳՆԱՃ




ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՆՔԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐ



ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԱՃ



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԱՃ



տարեկան մակարդակը կազմում էր 3%: 2015թ. սպառողական գների ինդեքսի կտրուկ տատանումներ չեն ակնկալվում, իսկ ահա դրանից հետո սպասվում է որոշակի նվազում:

Ուշագրավ է, որ 2009թ. հաջորդած 5 տարվա աճից հետո 2014թ. իրական ՀՆԱ-ն վերջապես գերազանցեց նախա-ձգնաժամային մակարդակը 5.4%-ով: Չնայած դրան, սակայն, անվանական ՀՆԱ-ն դոլարային արտահայտմամբ 6.7%-ով զիջում է 2008թ. մակարդակին, ինչը պայմանավորված է վերջին 6 տարիների ընթացքում ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 55% արժեզրկմամբ, որը միայն 2014թ. վերջին 2 ամսվա ընթացքում կազմեց 15%: Տնտեսական աճը հիմնականում ապահովվում էր գյուղատնտեսության (ՀՆԱ-ի 1.5 տոկոսային կետով աճ, ինչպես նախորդ տարի), արդյունաբերության (ՀՆԱ-ի 0.8 տոկոսային կետով աճ, որը համեմատելի է 2013թ. հետ), ծառայությունների, այդ թվում՝ ֆինանսական և ապահովագրական ծառայությունների (0.2 տոկոսային կետ ի տարբերություն 2013թ. 0.5 տոկոսային կետի), ինչպես նաև մշակույթի և ժամանցի ոլորտների աճով (0.7 տոկոսային կետ): Գյուղատնտեսության իրական ծավալն ավելացավ 7.8%-ով, ֆինանսական և ապահովագրական ծառայություններինը՝ 12.6%-ով: Արդյունաբերության աճը կազմեց 7.7%, իսկ լեռնահանքային ոլորտում գրանցվեց 5.8%-ի չափով անկում:

Արդեն չորրորդ տարին անընդմեջ զգալի աճ է գրանցվում գյուղատնտեսության ոլորտում, որն ունի ամենամեծ մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 19.3%: Սա եվրոպայում և ԱՊՀ-ում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: 2011-2014թթ. գյուղատնտեսության միջին տարեկան աճը կազմում էր 9.5% և պայմանավորված էր ինչպես արդյունաբերական գյուղատնտեսության զարգացմամբ, այնպես էլ պետական աջակցության մի շարք ծրագրերով: Գյուղատնտեսության աճին նպաստեց նաև խմիչքի (մասնավորապես՝ կոնյակի և գինու) և ծխախոտի արտադրության և արտահանման աճը:

2014թ. նախորդող տարիներին արձանագրված երկնիշ աճից հետո (որը որոշակիորեն դանդաղել էր 2013թ.) անկում գրանցվեց լեռնահանքային ոլորտում՝ պայմանավորված գերազանցապես մետաղների, հատկապես պղնձի գների անկմամբ: Արդյունաբերության հատվածը շարունակում էր ապահովել աճի բարձր տեմպեր շնորհիվ սննդի, գունավոր մետաղների և ծխախոտի արտադրության:

Վերջին 4 տարվա ընթացքում ամենաարագ աճող ոլորտներից էին ֆինանսական և

ապահովագրական ծառայությունները, սակայն անգամ դրանք 2010-2013թթ. արձանագրված երկնիշ աճից հետո 2014թ. գրանցեցին աճի դանդաղ տեմպեր՝ մինչև 4.8%: Պատճառը դարձյալ նավթի գների անկումն էր և Ռուսաստանում տիրող իրավիճակը և որպես հետևանք՝ տրանսֆերտների ծավալի կտրուկ նվազումը: Այս ոլորտի աճը զսպող մեկ այլ գործոն է ՀՀ դրամի անկայունությունը (15% արժեզրկում 2014թ. վերջին 2 ամսվա ընթացքում):

Հինգերորդ տարին անընդմեջ արտահանման աճի տեմպերը գերազանցել են ներմուծման աճի տեմպերը, ինչը դրական գործոն է արտաքին առևտրային հաշվեկշռի պակասորդի այդչափ բարձր մակարդակ ունեցող երկրի համար: 2014թ., սակայն, թե՛ արտահանման, թե՛ ներմուծման տեմպերն ավելի դանդաղ էին, քան նախորդ տարիներին, պատճառը՝ Ռուսաստանի տնտեսական վիճակի վատթարացումը, մետաղների գների և տրանսֆերտների ծավալի անկումը, ՀՀ դրամի արժեզրկումն էր: Ըստ 2014թ. տվյալների՝ ներկրման ծավալը դոլարային արտահայտմամբ 2.9 անգամ գերազանցեց արտահանման ծավալը, մինչդեռ 2009թ. այդ ցուցանիշն ավելի բարձր էր 4.7 անգամ: Նշված ժամանակահատվածում տարբերության կրճատումը պայմանավորված է արտահանման առաջնացիկ աճով, սակայն արտաքին առևտրային հաշվեկշռի պակասորդի հետագա կրճատումը լուրջ մարտահրավեր է՝ ենթադրելով արտահանման կառուցվածքի փոփոխություն: Չնայած վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանի ընթացիկ հաշվի պակասորդն զգալիորեն նվազել է, այն դեռևս մնում է բավականին բարձր:

Հայաստանի արտաքին պարտքը 2014թ. կազմում էր ՀՆԱ-ի 34.8%-ը 2013թ. 37.4%-ի համեմատ, գումարային արտահայտմամբ՝ 3,785 մլն ԱՄՆ դոլար (2.9% նվազում անվանական արժեքով՝ դոլարային արտահայտմամբ): Հաշվի առնելով առկա մակրոտնտեսական մարտահրավերները՝ ՀՀ կառավարությունը հայտարարել է 2015թ. եվրապարտատոմսերի 2-րդ թողարկումը կազմակերպելու մասին: 1-ին թողարկումը տեղի էր ունեցել 2013թ.՝ 700 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որի մի մասն ուղղվեց արտաքին պետական պարտքի մարմանը և սպասարկմանը՝ թույլ չտալով դրա հետագա աճը:

2014թ. Հայաստանը շարունակում էր ակտիվորեն համագործակցել միջազգային կառույցների հետ և տեղաբաշխել դեռևս 2009-2012թթ. ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ): Մասնավորապես, 2014թ.

ՀԲ աջակցությամբ իրականացվում էին 13 նախագծեր տնտեսության տարբեր բնագավառներում: Այդ նախագծերի շրջանակներում կարելի է առանձնացնել հետևյալ ձեռքբերումները՝ գյուղական բնակչության 60%-ի համար ծանապարհների հասանելիության ապահովում տարվա բոլոր եղանակներին, վերջին 4 տարվա ընթացքում համակարգչի հասանելիություն ունեցող գյուղական բնակչության եռապատկում, Գյումրիում տեխնոլոգիական կենտրոնի ստեղծում, երկրի հյուսիս-արևելյան շրջաններում ձեռներեցության խթանում, 584,160 աշխատանքային օրեր և 9.8 մլն ԱՄՆ դոլարի եկամուտ աշխատավարձի տեսքով 290 համայնքային միկրոնախագծերի շրջանակներում, 10 մարզային բժշկական կենտրոնների և գյուղական համայնքներում շուրջ 100 բուժօգնությունների կառուցում կամ վերանորոգում:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ-ում բարելավվել է ներդրումային և գործարար միջավայրի բարելավումը: Արդյունքում՝ 2014թ. ՀԲ Doing Business 2015 զեկույցում Հայաստանը նախորդ տարվա համեմատ 4 կետով բարելավվեց իր դիրքը՝ զբաղեցնելով 45-րդ հորիզոնականը:



ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014թ. մի շարք փոփոխություններ և լրացումներ կատարվեցին «Շրջանառության հարկի», «Հարկերի», «Կուտակային կենսաթոշակների», «Հաշվապահական հաշվառման», «Եկամտահարկի», «Նվազագույն ամսական աշխատավարձի», «Տրանսֆերային գնագոյացման» մասին ՀՀ օրենքներում: Մասնավորապես.

► «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք

Փոփոխությունները հիմնականում ուղղված էին օրենքի պահանջներին համապատասխանող ընկերությունների, անհատ ձեռներեցների, նոտարների համար շրջանառության հարկ վճարելու ընտրանքային համակարգի ներդրմանը և հարկատուների համար հարկային բեռի թեթևացմանը՝ փաստաթղթային պահանջների հստակ սահմանման միջոցով:

► «Հարկերի մասին» ՀՀ օրենք

Փոփոխություններն ու լրացումներն ուղղված էին ընտանեկան բիզնեսի գաղափարի ներդրմանը, ինչպես նաև հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկատուների դրամական միջոցների և գույքի վրա արգելանք դնելու կարգի հստակ սահմանմանը:

► «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք

Վերաշարադրվել է օրենքի ողջ համատեքստը: 2014թ. հուլիսի 1-ից սկսած՝ պարտադիր կենսաթոշակային համակարգը փոխարինվեց սոցիալական վճարով, որը հաշվարկվում է նույն դրույքաչափով: Ի տարբերություն պարտադիր կենսաթոշակային վճարների, սոցիալական վճարը փոխանցվում է պետության՝ որպես նպատակային վճար, որն ուղղակիորեն կապված է հետագայում տվյալ անձի կենսաթոշակի չափի հետ: Ըստ գործող կարգի՝ կենսաթոշակային համակարգի նախկին պարտադիր բաղադրիչի այն մասնակիցների համար, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ մասնավոր հատվածի աշխատողներ էին, սահմանվել է արտոնյալ ժամկետ մինչև 2017թ. հուլիսի 1-ը, որը չի գործում պետական հիմնարկների, համայնքային ինքնակառավարման մարմինների աշխատողների և քաղաքապետների դեպքում (որոշ բառացություններով):

Օրենքի մեկ այլ էական փոփոխություն է սոցիալական վճարի առավելագույն ամսական և տարեկան շեմերի սահմանումը (առավելագույն շեմերը հաշվարկվում են՝ հիմք ընդունելով 500,000 ՀՀ դրամ ամսական և 6 մլն ՀՀ դրամ տարեկան եկամուտը՝ մինչև 2020թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում):

► «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք

Սկսած 2014թ. հուլիսի 1-ից՝ խոշոր

ընկերությունների համար (որոնց եկամուտը կամ ակտիվների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակահատվածում գերազանցում է 1 մլրդ ՀՀ դրամը) ֆինանսական հաշվետվությունների հետ միասին աուդիտորական եզրակացության հրապարակումը պարտադիր պահանջ է:

► «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք

Սկսած 2014թ. դեկտեմբերի 29-ից՝ վճարված եկամտահարկը վերադարձվում է 2014թ. նոյեմբերի 1-ից հետո ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից Հայաստանի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից, ինչպես նաև պետության և/կամ համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով ստացված վարկերի դիմաց վճարվող տոկոսագումարի ձևով:

Սկսած 2015թ. հունվարի 1-ից՝ անհատ ձեռնարկատեր և/կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի անշարժ գույքի վարձակալությունից ստացված եկամուտների հանրագումարն տվյալ տարում 58.35 մլն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասի նկատմամբ տարեկան հաշվարկվում է եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով՝ ի լրումն գույքի վարձակալությունից ստացված եկամտից օրենքով սահմանված կարգով

անձամբ կամ հարկային գործակալի միջոցով 10 տոկոս դրույքաչափով հաշվարկվող և վճարվող եկամտահարկի:

► «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք

Փոփոխությունների արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձի և նվազագույն ժամավարձի չափերը վերանայվել են և 2015թ. հուլիսի 1-ից սկսած կազմելու են 55,000 ՀՀ դրամ և 330 ՀՀ դրամ՝ 40-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում, 367 ՀՀ դրամ՝ 36-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում, և 550 ՀՀ դրամ՝ 24-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում: Նվազագույն աշխատավարձի չափը չի ներառում նպատակային սոցիալական վճարը:

ՀՀ ԿԲ կանոնակարգերի փոփոխություն

Ելնելով ընթացիկ մարտահրավերներից՝ 2014թ. վերջում ՀՀ ԿԲ-ն վերանայեց «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը և «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը: Ամենաէական փոփոխությունը 2017թ. հունվարի 1-ից սկսած բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմի բարձրացումն էր մինչև 30 մլրդ ՀՀ դրամ՝ ներկա 5 մլրդ դրամի փոխարեն (մանրամասն տես «Բանկային հատված» բաժնում):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2014թ. ՀՀ դրամավարկային քաղաքականության վրա ազդում էին մի շարք արտաքին գործոններ (մանրամասն տես «Մակրոտնտեսական նախադրյալներ» բաժնում), որոնք

հանգեցրին ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ 15% արժեզրկման 2014թ. միայն վերջին երկու ամսվա ընթացքում: Արտաքին բացասական գործոնները և գնաճը մեղմելու նպատակով նոյեմբերին ԿԲ-ն կտրուկ բարձրացրեց լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 8.25%-ից մինչև 21%, որին հետևեց արտադրության պարտադիր պահուստների բարձրացումը 12%-ից մինչև 24%: Այս քայլերի շնորհիվ հաջողվեց որոշ չափով մեղմել ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները, ինչը տարեվերջին ԿԲ-ին թույլ տվեց 1%-ով նվազեցնել լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը և 4%-ով՝ պարտադիր պահուստավորման սահմանաչափը, ընդ որում լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի իջեցումը շարունակվեց նաև 2015թ.՝ մինչև 14.5%: Ակնկալվում է, որ այս միտումը կպահպանվի ողջ տարվա ընթացքում: Գնաճի վրա արտաքին գործոնների ազդեցությունը մեղմելու նպատակով ՀՀ ԿԲ-ն բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը մինչև 10.5%:

Հաշվի առնելով տնտեսության ներկա վիճակը՝ ՀՀ ԿԲ-ն 2015թ. համար կանխատեսում է ՀՆԱ-ի աճի դանդաղում նախորդ տարիների համեմատ՝ 0.4%-2%, որին զուգահեռ կդանդաղեն նաև վարկավորման տեմպերը: Ակնկալվում է, որ ի հակակշիռ դրան, ԿԲ-ն և կառավարությունը վարկային ծրագրեր կնախաձեռեն մի շարք միջազգային կազմակերպությունների հետ (ՀԲ, ԱԶԲ, Եվրոպական ներդրումային բանկ, Գերմանական զարգացման բանկ /KfW/), ինչպես նաև կիրականացնեն զանազան սոցիալական ծրագրեր (մատչելի բնակարանների տասարդ ընտանիքների համար)՝ ցածր տոկոսադրույքներով:

ՖԻՍԿԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2014թ. ՀՀ պետբյուջեի պակասորդ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում էր 2.1%՝ 2013թ. 1.6%-ի համեմատ: 2015թ. պակասորդը կանխատեսվում է ՀՆԱ-ի 2.3%-ի սահմաններում, որը 0.3 տոկոսային կետով բարձր է 2014թ. ցուցանիշից: ՀՀ կառավարության ուշադրության կիզակետում են հետևյալ ոլորտները՝

- Արտահանման խթանում և գործարար միջավայրի բարելավում
- Տնտեսության հիմնական ճյուղերի զարգացում

2014թ. ՀՀ պետբյուջեի ընդհանուր եկամուտը կազմեց 1,103.4 մլրդ ՀՀ դրամ, որը 4.2%-ով պակաս է վերանայված ծրագրից, ընդ որում հարկային եկամուտը կազմեց 1,062.8 մլրդ ՀՀ դրամ, որը համապատասխանում է ծրագրված հարկեր/ՀՆԱ 23.6% ցուցանիշին: 2013թ. համեմատ հարկային եկամտի աճը կազմեց 6.3%՝ հիմնականում ԱԱՀ և եկամտահարկի աճի հաշվին: Պետբյուջեի պակասորդը կազմեց 93.2 մլրդ ՀՀ դրամ:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Օրենսդրական բարեփոխումների, մասնավորապես՝ 2011թ. ԱՊՊԱ-ի ներդրման, բժշկական ապահովագրության ծրագրի ընդլայնման շնորհիվ Հայաստանի ապահովագրական ծառայությունների շուկան 2014թ. շարունակեց գրանցել աճի բարձր տեմպեր: Հայաստանում գործում է 7 ապահովագրական ընկերություն: Հայաստանում առավել տարածված է առողջության և փոխադրամիջոցների ապահովագրությունը, որոնց 2014թ. բաժին էր ընկնում ապահովագրավճարների

համապատասխանաբար 43%-ը և 37%-ը: Մեր երկրում գործող ապահովագրական ընկերություններից ոչ մեկն առայժմ կյանքի ապահովագրություն տրամադրելու իրավունք չունի, քանի որ ՀՀ «Ապահովագրության մասին» օրենքի համաձայն միևնույն ընկերությունն իրավունք չունի միաժամանակ տրամադրել կյանքի և ոչ կյանքի ապահովագրության ծառայություններ: 2015թ. նախատեսվում է գործարկել գյուղատնտեսության

ապահովագրության պիլոտային ծրագիրը և փորձարկել պարտադիր բժշկական ապահովագրությունը: Ըստ մասնագետների գնահատականների՝ ապահովագրական ծառայությունների շուկայի ողջ ներուժն ակտիվացնելուց հետո 7-8 տարվա ընթացքում ապահովագրավճարների մասնաբաժինը ՀՆԱ-ում կարող է հասնել 12%-ի: Ռազմավարական հաշվետվություն՝ արտաքին միջավայր



ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ

2014թ. վերջի դրությամբ Հայաստանում գործում էր 21 առևտրային բանկ՝ 509 մասնաճյուղերով և Համահայկական բանկը: Վերջին տարիներին Հայաստանի բանկային համակարգն էքստենսիվ աճ է արձանագրել, սակայն 2014թ. աճի տեմպերը նվազեցին, ինչն ուղեկցվեց մի շարք որակական ցուցանիշների վատթարացմամբ: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ՀՀ բանկային համակարգի աճի տեմպերը բավականին բարձր էին՝ հաշվի առնելով 2014թ. երկրի բարդ տնտեսական իրավիճակը, տարվա վերջում փոխարժեքի կտրուկ տատանումները և բազմաթիվ ընկերությունների ֆինանսական խնդիրները:

Արտաքին միջավայրի բացասական երևույթները՝ ռուբլու արժեզրկումը, դրամական փոխանցումների ծավալների նվազումը, Ռուսաստանի և Արևմուտքի միջև աճող լարվածությունը անդրադարձան նաև ՀՀ բանկային համակարգի վրա: Բայց և այնպես, 2014թ. ՀՀ բանկային հատվածը կարողացավ խուսափել զգալի ցնցումներից շնորհիվ այն բանի, որ հեռու էր համաշխարհային գործընթացներից:

ՀՀ բանկային համակարգը մեծ հետաքրքրություն է ներկայացնում արտասահմանյան ներդրողների համար: Այսպես՝ ՀՀ 21 բանկերից 19-ը օտարերկրյա մասնակցությամբ են, իսկ օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը բանկային համակարգի ամբողջ կապիտալում կազմում է 66.5%: Միջազգային ֆինանսական կառույցներից և արտասահմանյան բանկերից տնտեսության խթանման և համատեղ նախագծերի համար ներգրավվող երկարաժամկետ միջոցները ՀՀ բանկային համակարգի հանդեպ վստահության և հետաքրքրության ևս մեկ խոսուն ապացույց են:

2014թ. դրամի արժեզրկումը և իրական հատվածի վճարունակության անկումը բացասաբար անդրադարձան բանկերի վարկավորման տեմպերի վրա: ՀՀ բանկերի 2014թ. հաշվետվությունների համաձայն՝ վարկավորման տեմպերի անվանական աճը 2014թ. կազմեց 21%, որն իրականում պայմանավորված էր նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին դրամի արժեզրկմամբ: Քանի որ վարկերի շուրջ 65%-ն արտահայտված էր արտադրողով, վարկերի ծավալների իրական աճը կազմեց ընդամենը 9.5%:

Անգամ ավելի դանդաղ աճի պայմաններում բանկային համակարգը ցուցաբերեց առաջանցիկ աճ ՀՆԱ-ի համեմատ, ինչը

նպաստեց ֆինանսական միջնորդության աճին՝ մոտեցնելով Հայաստանը արտասահմանյան երկրներին:

2014թ. բանկային համակարգի ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ին նախորդ տարվա համեմատ աճեց 6.4 տոկոսային կետով՝ կազմելով 75.4%

Վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը աճեց 5.9 տոկոսային կետով՝ կազմելով 47.5%

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների հարաբերակցությունը՝ 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 19.4%

2014թ. ՀՀ բանկային համակարգում գրանցվեցին աճի հետևյալ ցուցանիշները

- ▶ Ակտիվներն աճեցին 16.06%-ով՝ կազմելով 3.4 տրիլիոն ՀՀ դրամ
- ▶ Վարկերն աճեցին 20.41%-ով՝ կազմելով մինչև 2.1 տրիլիոն ՀՀ դրամ
- ▶ Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճեցին 4.45%-ով՝ կազմելով 1.7 տրիլիոն ՀՀ դրամ
- ▶ Կապիտալն աճեց 0.97%-ով և կազմեց 473 միլիարդ ՀՀ դրամ: Բանկային համակարգի կապիտալի աճն ապահովվեց ինչպես 7 բանկերի կանոնադրական կապիտալի 11% աճով, այնպես էլ՝ շահույթի հաշվին,

չնայած բանկերի շահութաբերականության նվազել էր նախորդ տարվա համեմատ:

2014թ. ընթացքում զգալի ռեսուրսներ ուղղվել են առևտրի, գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտների ֆինանսավորմանը: Սակայն 4-րդ եռամսյակում փոխարժեքների կտրուկ տատանումների արդյունքում առաջացող ռիսկերը նվազեցնելու համար բանկերը խուսափում էին վարկավորումից և վարկ էին տրամադրում բացառապես վաղեմի հաճախորդներին:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2013թ. համեմատ աճեց 21.5%-ով:

Հիփոթեքային վարկավորման ծավալն աճեց 20.4%-ով, սպառողական

վարկերինը՝ 23.5%-ով: Իրավաբանական անձանց վարկավորման ծավալների աճը 2014թ.

կազմեց 22.5%՝ 2013թ. 7.4%-ի համեմատ:

2014թ. ՀՀ բանկային համակարգի հիմնախնդիրներից էին ֆինանսական շուկաների փոփոխականությունն ու համաշխարհային տնտեսական զարգացումների անորոշությունը: Դրան զուգահեռ ծավալվող բարձր մրցակցության պայմաններում էքստենսիվ աճը բացասաբար անդրադարձավ որակական ցուցանիշների վրա: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի չաշխատող վարկերը կազմում էին ընդհանուր վարկային պորտֆելի 7.8%-ը: Եկամտաբերության անկման մասին վկայում են բանկային համակարգի գործունեության տարեկան արդյունքները:

2014թ. ակտիվների եկամտաբերությունը

կազմել է **0.9%**
2013թ. 1.7%-ի դիմաց

2014թ. կապիտալի եկամտաբերությունը

կազմել է **5.6%**
2013թ. 10.7%-ի դիմաց,

2014թ. ծախսերի և եկամուտների
հարաբերությունը կազմել է

49.4%
2013թ. 50.9%-ի դիմաց:

Շահութաբերության նման մակարդակն ինքնին կարող է խոչընդոտ հանդիսանալ ներդրումների համար: Տնտեսական ներկայիս վիճակում բանկերի համար եկամտաբերությունը բարձրացնելու միակ ուղին արդյունավետությունը բարձրացնելն է: Դուրս գրված վարկերի աճի և բանկերի եկամտաբերության անկման պայմաններում անգամ ՀՀ բանկերի կապիտալացման բավականին բարձր մակարդակն արդեն բավական չէ վարկավորման տեմպերը պահպանելու համար: Բանկերի կապիտալացումը դառնում է անխուսափելի համակարգի հետագա զարգացման համար:

2014թ. վերջին օրը ՀՀ ԿԲ-ն բարձրացրեց բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմը մինչև 30 միլիարդ ՀՀ դրամ (62.5 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք), որը բոլոր գործող բանկերի համար ուժի մեջ կմտնի 2017թ. հունվարի 1-ից: ՀՀ ԿԲ-ի տվյալ որոշումն ուղղված էր, նախ և առաջ, բանկային համակարգի երկարաժամկետ կայունության ապահովմանը և ֆինանսական միջնորդության զարգացմանը:

Հայկական առևտրային բանկերից առաջին միայն հինգն են ապահովել այդ շեմը: Այդ իսկ պատճառով, 2015-2016թթ. ակնկալվում են նոր կապիտալ ներդրումներ, նոր բաժնետերեր, բանկերի միաձուլումներ, ինչը կհանգեցնի բանկերի թվի նվազման: Տարբեր գնահատականներով ներկայիս 21 բանկերից ասպարեզում կմնան միայն 10-12-ը: Ըստ կանխատեսումների՝ 2015-2017թթ. Հայաստանի բանկային համակարգի աճը կտատանվի 10-15%-ի սահմաններում: Ակնկալվում է, որ դրամային ռեսուրսների տոկոսադրույքներն աճ կարձանագրեն, մինչդեռ արտարժույթով արտահայտված միջոցների տոկոսադրույքները կմնան համեմատաբար կայուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՈԼՈՐՏ*

ԱԿՏԻՎՆԵՐ

2,938,565

3,386,668

69%

75.2%

2013

2014

▶ Բանկային ոլորտի ակտիվներ

● Ակտիվներ/ՀՆԱ

ԿԱԴԻՏԱԼ

469,054

473,599

10.4%

10.8%

2013

2014

▶ Բանկային ոլորտի կապիտալ

● Կապիտալ/ՀՆԱ

ՎԱՐԿԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

2013

2014

752,041

1,775,697

878,424

2,138,199

▶ Վարկեր տնտեսությանը

▶ Ֆիզիկական անձանց ավանդներ

* Բանկային ոլորտի ցուցանիշները ներկայացված են ըստ Հայաստանի բանկերի կողմից հրապարակվող 20.04.2015-ի դրությամբ հասանելի պաշտոնական հաշվետվությունների

մին ՀՀ դրամ

ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԿԱՎՈՒՄ Է
ԻՅՑ

Առավելություն

Առավելություն

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԴԻՐՔԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ



Մրցակցության թեժացման և ՀՀ բանկերի առջև ծառացող նոր մարտահրավերների պայմաններում Ամերիաբանկն իր առջև նպատակ է դրել ոչ միայն պահպանել հիմնական ցուցանիշների առաջանցիկ աճը և դառնալ առաջատար գործունեության հիմնական ոլորտներում, այլ նաև շարունակել միջազգային չափանիշներին համապատասխան նորարարական ծառայությունների ներդրումը, բանկային տեխնոլոգիաների զարգացումը՝ փոխելով հանրության սպառողական վարքագիծը:

Չնայած բանկային համակարգի աճի ավելի դանդաղ տեմպերին՝ պայմանավորված ձգնաժամային երևույթներով, 2014թ. Ամերիաբանկը շարունակեց դինամիկ զարգացումը՝ առաջ անցնելով բանկային համակարգից զրեթե բոլոր հիմնական ցուցանիշներով: Ընդ որում, բոլոր հանգամանքներում և պայմաններում, որքան էլ կարևորվի էքստենսիվ աճը, Ամերիաբանկն իր գործունեության մեջ առաջնորդվում է նախ և առաջ ռիսկերի նվազեցմամբ, սպասարկման որակի բարձրացմամբ և հաճախորդների բավարարվածության ապահովմամբ: Որպես դինամիկ զարգացման նախապայման, Ամերիաբանկը կարևորում է որակի ապահովումը և կայունությունը, որոնցից բխում են բաժնետերերի, հաճախորդների և գործընկերների վստահությունը և ապահովությունը:

Վարկային պորտֆելի բարձր որակի ապահովումը Բանկի վարկային

ԱԿՏԻՎՆԵՐ

2014թ. ՀՀ բանկային համակարգի ակտիվներն ավելացան 15.2%-ով, Ամերիաբանկինը՝ 26.9%-ով: Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգի ակտիվներում կազմեց 11.8%՝ նախորդ տարվա 10.7%-ի համեմատ: Այսպիսով՝ բանկն ամրապնդեց առաջատարի իր դիրքն ըստ ակտիվների:

ԿԱՊԻՏԱԼ

2014թ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճեց 0.97%-ով, Ամերիաբանկինը՝ 9.4%-ով՝ կազմելով բանկային համակարգի կապիտալի 8.94%-ը՝ և բանկի համար ապահովելով 4-րդ տեղն այդ ցուցանիշով:

ՎԱՐԿԵՐ

2014թ. ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելն ավելացավ 20.4%-ով, մինչդեռ Ամերիաբանկի կողմից վարկավորման ծավալներն ավելացան 62.5%-ով: Բանկի վարկային պորտֆելի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում կազմեց 13.4%՝ 2013թ. 9.9%-ի դիմաց:

Հայկական այբուբենը ստեղծվել է մ.թ. 405 թ. Մեսրոպ Մաշտոցի կողմից: Այն գրաֆիկական յուրահատուկ գրերի համակարգ է, որն օգտագործվել է հայոց լեզուն գրի առնելու համար: Հայերենը աշխարհի հնագույն լեզուներից մեկն է: Հայոց լեզվի առանձնահատկությունն այն յուրահատուկ դերն է, որ վերջինս կատարում է հնդեվրոպական լեզվաընտանիքում: Հավասարապես պատկանելով հնդեվրոպական լեզվաընտանիքի թե արևմտյան և թե արևելյան ճյուղերին՝ այն ընտանիքի Արևմուտքն ու Արևելքը կապող յուրատեսակ կամուրջ է:



քաղաքականության առաջնային խնդիրներից է՝ անկայի շուկայի միտումներից և այլ հանգամանքներից: Արդյունքում, չնայած տնտեսական վիճակի վատթարացմանը՝ Բանկն ապահովել է չաշխատող վարկերի ամենացածր ցուցանիշներից մեկը՝ 3.1%:

Ենթակառուցվածքի ընդլայնումը, տեխնոլոգիական բազան, միջոցների շահավետ տեղաբաշխման մատչելիությունը նպաստեցին Ամերիաբանկի վարկավորման ծավալի և ռեսուրսային բազայի ընդլայնմանը: 2014թ. 33 բանկային համակարգի

ընդհանուր ավանդներն աճեցին 4.45%-ով, իսկ Ամերիաբանկի ավանդները՝ 22.8%-ով: Ըստ հաճախորդներից ներգրավված միջոցների՝ Բանկի մասնաբաժինը կազմել է 12.31%: Երկրորդ տարին շարունակ Բանկը պահպանում է իր առաջատար դիրքերն ըստ հաճախորդներից ներգրավված միջոցների:


Բանկային համակարգի շահույթը 2014թ. արդյունքներով չնայած նվազել է ավելի քան 40%-ով, Ամերիաբանկի շահույթը դրամային արտահայտմամբ 18% աճ է արձանագրել, ինչի շնորհիվ Բանկը դարձավ

բանկային համակարգի առաջատարը շահույթի մեծությամբ, իսկ իր շուկայական մասնաբաժինն ըստ շահույթի կազմեց 26.3%:


Բանկի ակտիվների և կապիտալի շահութաբերությունը (ROA և ROE) նույնպես գերազանցում է միջին բանկային ցուցանիշները. ROA-ն կազմել է 2.1% (բանկային ցուցանիշը՝ 0.9%), ROE-ն՝ 17.8% (բանկայինը՝ 5.6%):

ԱԿՏԻՎՆԵՐ

2013




2014




ՎԱՊԻՏԱԼ

2013




2014




ՎԱՐԿԵՐ

2013




2014



ԴԱՍԱԿԱՐԳԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2013



2014



ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ

2013



2014



մլն ՀՀ դրամ



ՀՀ բանկային համակարգ*



Ամերիաբանկ

* Բանկային ոլորտի ցուցանիշները ներկայացված են ըստ Հայաստանի բանկերի կողմից հրապարակվող 20.04.2015-ի դրությամբ հասանելի պաշտոնական հաշվետվությունների

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Հատկանշական է, որ 2010թ-ից ի վեր յուրաքանչյուր տարի Բանկը ճանաչվել է լավագույն բանկ Euromoney պարբերականի կողմից՝ ստանալով Գերազանցության մրցանակը (2011, 2012, 2014), կամ Financial Times խմբի The Banker ամսագրի կողմից (2010, 2013): 2014թ. Ամերիաբանկը երրորդ անգամ արժանացավ Euromoney ամսագրի Գերազանցության մրցանակին՝ որպես տարվա լավագույն բանկ: Երեք տարի անընդմեջ՝ սկսած 2012թ-ից, Ամերիաբանկն արժանացել է Global Finance-ի մրցանակների մի քանի կարևոր անվանակարգերում,

մասնավորապես, 2014թ. Բանկը ստացավ հետևյալ մրցանակները՝ Հայաստանի լավագույն բանկ արտարժույթային գործառնությունների ոլորտում, Հայաստանի լավագույն բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում և Հայաստանի լավագույն բանկ: Ամերիաբանկը նաև ստացել է EMEA Finance ամսագրի Եվրոպայի բանկային մրցանակ 2014 մրցույթի լավագույն բանկ մրցանակը: Որակի շարունակական բարձրացման ու վերահսկողության մեր ջանքերի շնորհիվ բանկը միջազգային կազմակերպությունների և գործընկերների մրցանակներին է

արժանացել նաև գործառնական առանձին ոլորտներում. Հայաստանի լավագույն բանկ ֆակտորինգային ծառայությունների ոլորտում Corporate Intl Magazine ամսագրի կողմից 2014թ. Global Awards մրցանակաբաշխության ժամանակ (2013 ֆինանսական տարվա արդյունքներով), 2014թ. ՎՋԵԲ-ի «Տարվա գործարք 2013» մրցանակն առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում Կոմերցբանկի գերազանցության մրցանակը 2013թ. միջազգային վճարման հանձնարարականների անթերի կատարման համար:



Euromoney գերազանցության մրցանակի եռակի հաղթող



The Banker ամսագրի Լավագույն Բանկ մրցանակի կրկնակի հաղթող




ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ-ՄՈԴԵԼ



2014 թվականը ևս բավականին հաջող տարի եղավ Ամերիաբանկի համար: Բանկն ամրապնդեց իր դիրքերը ՀՀ առաջատար բանկերի շարքում, վերահաստատեց իր դերը որպես ժամանակակից, դինամիկ աճող և կայուն առաջատար՝ հետագա աճի, զարգացման և մրցակցության էական հնարավորություններով: Հիմնական շեշտադրումն ուղղվել է բանկային ծառայությունների ու սպասարկման որակին՝ Բանկն արդեն իսկ դիրքավորվել է որպես առաջատար նորարարությամբ և սպասարկման չափանիշներով: Բանկն անընդհատ և հետևողականորեն կատարելագործում է կորպորատիվ կառավարման համակարգը և հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները:

2010 թվականին Բանկն իր առջև խնդիր էր դրել փոխել 2007 թվականից որդեգրած կորպորատիվ ուղղվածությամբ ռազմավարությունը և էապես ընդլայնել մանրածախ բանկային ծառայությունները՝ դառնալով ունիվերսալ Բանկ: Այդ ժամանակից ի վեր, Բանկը զգալիորեն ընդլայնել է իր կողմից առաջարկվող ծառայություններում մանրածախ, այդ թվում՝ ՓՄՁ-ների համար նախատեսված ծառայությունների մասնաբաժինը: Մեր ներկայիս ռազմավարության գլխավոր խնդիրն է Բանկի առաջատար դիրքերի պահպանումը և ամրապնդումը բոլոր հիմնական ցուցանիշներով, մասնավորապես.

- ▶ լինել բացարձակ առաջատարը սպասարկման որակով՝ հետևելով 2008թ. որդեգրած հաճախորդականություն քաղաքականությանը
- ▶ լինել առաջատարը նորարարություններով՝ առաջարկելով միջազգային լավագույն բանկային լուծումները և ժամանակին արձագանքելով հաճախորդի արագ փոփոխվող կարիքներին
- ▶ դառնալ ամենամեծ ունիվերսալ բանկն ըստ ակտիվների՝ պահպանելով կորպորատիվ, մանրածախ և ՓՄՁ պորտֆելների հավասարակշռված կառուցվածք
- ▶ պահպանել բանկային համակարգի առաջատարի դիրքերը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով
- ▶ բարձրացնել Բանկի ֆինանսական արդյունավետությունը կապիտալի շահութաբերության և ծախսերի ու եկամուտների հարաբերության տեսանկյունից
- ▶ լայնորեն կիրառել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- ▶ ընդլայնել անձնակազմի լոյալությանն ու մոտիվացմանն ուղղված ծրագրերը՝ ներդրումներ կատարելով մարդկային կապիտալի մեջ և պատրաստելով նոր տաղանդներ
- ▶ բարձր պահել Բանկի բրենդի արժեքը և միջոցներ ձեռնարկել բրենդի մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար:



ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

- ▶ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական Տնտեսական Միությանը (ԵՏՄ)
- ▶ Ռուսաստանի տնտեսության վատթարացում
- ▶ Նավթի և մետաղների գների անկում
- ▶ Մոլիբդեն փոխանցումների կտրուկ նվազում
- ▶ Տնտեսական աճի դանդաղում Հայաստանում
- ▶ Համեմատաբար կայուն ՍԳԻ
- ▶ Մարզերի անհամաչափ զարգացվածություն
- ▶ Նորմատիվ փոփոխություններ՝ բանկերի նվազագույն ընդհանուր կապիտալի շեմի բարձրացում

ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ▶ Թեժացող մրցակցություն որակյալ հաճախորդների համար՝ սպասարկման որակի բարելավման և հաճախորդի հետ հարաբերությունների զարգացման միջոցով
- ▶ Գերիրացվելիությունը՝ որպես շահութաբերության աճը զսպող գործոն
- ▶ Շուկայական կարողությունների անհամաչափ աշխարհագրական բաշխվածություն
- ▶ Տնտեսության իրական հատվածի վճարունակության անկում
- ▶ Ռիսկերի գնահատման համակարգի կատարելագործում
- ▶ Օտարերկրյա կապիտալի ներգրավման դժվարություններ
- ▶ Ավելի թանկ ռեսուրսներ
- ▶ Հեռակառավարման բանկային համակարգեր և արդիական տեխնոլոգիաների հետագա զարգացում
- ▶ Նոր ենթակառուցվածքային լուծումների կիրառում
- ▶ Վարկավորման անհատական սխեմաների վրա հիմնված համագործակցություն
- ▶ Նոր բանկային լուծումներ՝ որպես հաճախորդակենտրոն մոտեցման արդյունք
- ▶ Ռիսկերի կառավարման համակարգի բարելավում
- ▶ Բարենպաստ շուկա ոչ օրգանական աճի համար

ԱՌԱՋԱՏԱՐ

ԸՍՏ ՄՊԱՍԱՐԿԱՆ ՈՐԱԿԻ, ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ԲՐԵՆԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԼՈՑԱԼՈՒԹՅԱՆ, ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎԱԾՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԲԱՆԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՎՏԻՎՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿԵՈՎԱԾ ԲԱԾԵՈՒՄՈՎ՝

- 1 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԻՆԳ
- 2 ՄԱՆՐԱԾԱՆ ԲԱՆԿԻՆԳ
- 3 ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- ▶ Սպասարկման գերազանց որակի ապահովում
- ▶ Շուկայի համեմատ աճի առաջանցիկ տեմպերի ապահովում
- ▶ Ֆինանսական արդյունավետությամբ (ROA, ROE) առաջատարների եռյակում դիրքերի ամրապնդում
- ▶ Հաճախորդների բազայի հետագա աճի և դիվերսիֆիկացման (ՓՄՁ-ների մասնաբաժնի ավելացմամբ) ապահովում՝ պահպանելով կապիտալի շահութաբերության ընդունելի մակարդակ
- ▶ Մասնաձյուղային ցանցի ընդլայնում տնտեսապես ակտիվ տարածաշրջաններում
- ▶ Ոչ տոկոսային եկամուտների մասնաբաժնի ավելացում՝ ծառայությունների տեսականու ընդլայնման շնորհիվ
- ▶ Դառնալ ավելի հասանելի և մոտ հաճախորդին՝ շնորհիվ նորարար ենթակառուցվածքային լուծումների
- ▶ Բանկային հիմնական ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում
- ▶ Հայկական Սփյուռքի հետ համագործակցության ընդլայնում
- ▶ Ոչ օրգանական աճի հնարավորությունների ակտիվ որոնում
- ▶ Ռեսուրսային բազայի շարունակական կատարելագործում և ավելացում
- ▶ Անձնակազմի մասնագիտական պատրաստվածության և մոտիվացման շարունակական բարելավում



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԱՃԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2014Թ.



17%

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ
ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ



5.7%

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ



0.3%

ԲԱՆԿԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ
ԵՎ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ



69.7%

ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ



3.6%

ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻՑ
ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ



1.8%


ՎԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ




1.9%

ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ




ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԶՈՒՏ ԵԱՅՈՒՅԹԸ



մլն ՀՀ դրամ

ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ



2014 թ. ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



8.5%

ԱՎԱՆԴՆԵՐ ԵՎ
ՀԱՇՎՆԵՐ ԲԱՆԿԵՐԻՑ



6%

ՎԵՐԱԳՆԱՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԵՐՔՈ
ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ԳՈՒՄԱՐՆԵՐ



58.4%

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎՆԵՐ ԵՎ
ԱՎԱՆԴՆԵՐ



4.3%

ԱՏՈՐԱԴԱՍ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ



21.7%


ԱՅԼ ՆԵՐԳՐԱՎԱԾ
ՄԻՋՈՑՆԵՐ
(ՄՖԿ, ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԿԲ)




1.1%

ԱՅԼ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



մլն ՀՀ դրամ



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2014թ. արդյունքներով
Ամերիաբանկն առաջ
անցավ այլ բանկերից չորս
հիմնական ցուցանիշներով՝

- ▶ ակտիվներով
- ▶ պարտավորություններով
- ▶ վարկերով
- ▶ շահույթով

2014թ. Բանկի ակտիվները 26.9% աճ արձանագրեցին, և Բանկը վերահաստատեց իր առաջատար դիրքը, որը զբաղեցնում էր 2013թ. 1-ին եռամսյակից ի վեր:

Ամերիաբանկը 21 բանկերի շարքում զբաղեցնում է 2-րդ դիրքն ըստ կանոնադրական կապիտալի (25,476 միլիոն դրամ)՝ մնալով երկրի ամենակապիտալացված բանկերից մեկը: 2014թ. Բանկն ապահովեց ընդհանուր կապիտալի 9.4%-ով աճ շահույթի հաշվին: Հաշվետու տարվա արդյունքներով Բանկի շահույթը կազմեց 7.1 մլրդ ՀՀ դրամ կամ 17.2 մլն ԱՄՆ դոլար: Այս ցուցանիշով Բանկն զբաղեցրեց առաջատարի դիրքը

ՀՀ բանկային համակարգում: 2014թ. Բանկի ընդհանուր կապիտալը կազմեց 42.4 մլրդ ՀՀ դրամ կամ 89.2 մլն ԱՄՆ դոլար, ներառյալ կուտակված շահույթը՝ 17.2 մլրդ ՀՀ դրամ կամ 35.8 մլն ԱՄՆ դոլար: 2014թ. Բանկի հաճախորդների բազան ավելացավ 22.5%-ով:

2014թ. տարեվերջի արդյունքներով Ամերիաբանկն առաջ է անցել բոլոր բանկերից չորս հիմնական ֆինանսական ցուցանիշներով: Այս արդյունքները ոչ միայն Բանկի առաջատար դիրքի և վստահելիության ապացույցն են, այլ նաև հետագա զարգացման և կատարելագործման նշանո՞ղ:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	Ընդամենը 31/12/14 դրությամբ (մլն ՀՀ դրամ)	Դիրքը ՀՀ բանկային համակարգում (բացարձակ)	2014թ. աճ (%)	Շուկայի մասնա- բաժինը (%)
Ընդհանուր ակտիվներ	399,744	1	26.88%	11.8%
Վարկեր	286,143	1	62.46%	13.38%
Պարտավորություններ	357,389	1	29.33%	12.27%
Շահույթ	7,149	1	18.03%	26.33%

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ամերիաբանկը մշտապես դիտում է նորարարությունը որպես զարգացման շարժիչ ուժ: Նորարարությունն ի սկզբանե ընկած է Բանկի առաքելության հիմքում: Այս առումով առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը Բանկի համար էլ ավելի արդիական է դարձել, հատկապես, եթե հաշվի առնենք, օրեցօր թեժացող մրցակցությունը և գլոբալացումը: Ամերիաբանկի նորարարական քաղաքականությունները հիմնված են հետևյալ երեք սկզբունքների վրա.

- ▶ Համապատասխանություն ռազմավարությանը՝ նորարարական ընդհանուր քաղաքականությունը և առանձին նախագծերը պետք է ուղղված լինեն որդեգրված ռազմավարության իրականացմանը և Բանկի հետագա զարգացման հենքերի ստեղծմանը:

- ▶ Ուղղվածություն դեպի միջազգային լավագույն փորձը և առաջադեմ տեխնոլոգիաներ

- ▶ Հաճախորդակենտրոն մոտեցում, որը Բանկի հաջողության գրավականն է

Հավատարիմ մնալով այս երեք սկզբունքներին՝ Ամերիաբանկը կարճ ժամանակում դարձավ Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը:

Ամերիաբանկը շարունակ ներդրումներ է իրականացնում նորարար տեղեկատվական տեխնոլոգիաներում՝ ամուր հիմքեր ստեղծելով հեռակառավարման բանկային համակարգերի սպասարկման համալիր լուծումների մշակման համար: Որպես ինտերնետ-բանկինգի ծառայություններ

մատուցող առաջին բանկերից մեկը՝ Ամերիաբանկը նաև առաջինն էր շուկայում, որ գործարկեց բանկի IOS հավելվածը: Ավելին, 2014թ. Բանկը մեծ ներդրումներ է կատարել հեռակառավարման բանկային համակարգերի զարգացման համար, ինչի շնորհիվ 2015թ. Բանկի կողմից ներդրվելու են մոբայլ և հեռախոսային բանկային ծառայությունները, ընդլայնվելու է էքսպրես բանկային սպասարկման տերմինալների ցանցը:

Բանկը նաև առաջիններից էր Հայաստանի բանկային համակարգում, որ ներդրեց հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման Terrasoft CRM համակարգ 2009թ., որը, ի թիվս այլ գործիքների, Բանկին հնարավորություն է տալիս համակարգել հաճախորդների տվյալները և կառավարել հարաբերությունները հաճախորդների

հետ: Մեր ծրագրավորման խումբը մեծ փոփոխություններ է կատարել Terrasoft CRM համակարգի սկզբնական տարբերակում՝ հաշվի առնելով Բանկի տարբեր ստորաբաժանումների պահանջները և հաճախորդների սպասարկման բարձր որակ ապահովելու անհրաժեշտությունը:

2014թ. Բանկը ներդրեց մի շարք տեխնոլոգիական նախագծեր.

- ▶ Verified by Visa՝ Visa-ի հետ համատեղ Բանկը ներդրել է անվտանգության համակարգ, որը թույլ է տալիս ապահովել ինտերնետային վճարումների անվտանգությունը: Բանկի հաճախորդները հնարավորություն ունեն 3D Secure ձևաչափով պաշտպանված գործարքներ իրականացնել համացանցում: Verified By Visa կամ 3D Secure նշանն ունեցող կայքերում գնումներ կատարելիս հաճախորդը միանգամյա ծածկագիր պարունակող հաղորդագրություն է ստանում իր բջջային հեռախոսահամարին, որը մոտեցրելուց հետո միայն իրականացվում է գործարքը:
- ▶ Ամերիա Թոքեն՝ Բանկը գործարկել է բջջային հեռախոսների համար նախատեսված հավելված, որն ավելի դյուրին է դարձնում բանկային ծառայություններից օգտվելը՝ տրամադրելով մեկանգամյա ծածկագրեր ցանկացած վայրում: Ամերիաբանկի ինտերնետ-բանկինգ համակարգի միջոցով շուրջօրյա ռեժիմով գործարքներ իրականացնելու համար: Ամերիաբանկն առաջինը ՀՀ շուկայում առաջարկեց այդ հնարավորությունն իր հաճախորդներին:

▶ Կոնտակտային կենտրոն՝ 2014թ. Բանկը բարեհաջող ներդրեց իր սեփական Կոնտակտային կենտրոնը, որը շուրջօրյա սպասարկում է առաջարկում Բանկի քարտապաններին: 2015թ. նախատեսվում է ընդլայնել կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակը, ինչի արդյունքում կստեղծվի Բանկի վիրտուալ մասնաճյուղ, որը հեռախոսով և համացանցով տրամադրելու է բանկային ծառայությունների համալիր փաթեթ:

▶ Բանկոմատներ՝ կանխիկ ընդունման գործառնությամբ՝ հաճախորդների համար սպասարկման առավել հարմար պայմաններ ստեղծելու նպատակով Բանկը ներդրել է էքսպրես բանկային ծառայություններ: Բանկի խոշոր մասնաճյուղերում տեղադրվել են ինտերնետ-բանկինգի, կանխիկացման, կանխիկ մուտքագրման և այլ գործարքների իրականացման հնարավորություն ընձեռող վճարային տերմինալներ, որոնց ցանցը նախատեսվում է ընդլայնել 2015թ. ընթացքում:

▶ Ինտրանետ պորտալ՝ առաջատար եվրոպական ընկերության հետ համատեղ Բանկը մշակել է և ներդրել SharePoint հարթակի հիման վրա ստեղծված ներքին պորտալ: Ամերիաբանկի Ինտրանետ պորտալը դրական է անդրադարձել տեղեկատվական հոսքերի վրա՝ նաև ստեղծելով յուրահատուկ միջավայր համագործակցության և շփման համար:

2014թ-ին Բանկի կողմից ներդրվել են այնպիսի նոր ծառայություններ, ինչպիսիք են՝

- ▶ «Ամերիա Պերսոնա» փաթեթը, որը ներառում է բոլոր այն հիմնական բանկային ծառայությունները, որոնք անհրաժեշտ են միջին սեգմենտը ներկայացնող հաճախորդներին:
- ▶ «Անկանխիկ ազատություն» քարտային արշավը, որի շրջանակներում վերջին 6 ամիսների ընթացքում ցանկացած քարտով առնվազն 80,000 ՀՀ դրամ միջին ամսական անկանխիկ շրջանառություն ունեցող քարտապանին հնարավորություն է ընձեռվում արագ և պարզեցված ընթացակարգով ստանալ հատուկ պայմաններով վարկային գիծ՝ առանց եկամուտները հաստատող փաստաթղթերի ներկայացման և առանց սպասարկման վճարի մինչև տարեվերջ:
- ▶ «Բումերանգ» վարկային արշավը, որի շրջանակներում այն ՓԱԶ-ներին, որոնք տեղափոխում են իրենց վարկն այլ բանկերից Ամերիաբանկ, Բանկը վերադարձնում է տեղափոխվող վարկի գումարի 1%-ը, և ընկերությունը հնարավորություն է ստանում այն տնօրինելու իր հայեցողությամբ: Երկրորդ փուլով արշավը տարածվեց նաև անշարժ գույքի գնման և վերանորոգման վարկերի վրա:
- ▶ Հաճախորդների լոյալության ծրագիրը, որը թույլ է տալիս քարտային գործառնությունների արդյունքում կուտակել միավորներ, որոնք կարող են օգտագործվել այլ բանկային ծառայություններից օգտվելիս:
- ▶ MetaTrader 4, առևտրային հարթակ միջազգային ֆինանսական շուկաներում բրոքերային գործառնությունների իրականացման համար:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ

2014թ. մարտին Բանկը մասնաճյուղ բացեց Երևանի մանրածախ առևտրի ամենաաշխույժ վայրերից մեկում՝ «Երևան Մոլ» առևտրի կենտրոնում: Ներկայումս մենք հաճախորդներին սպասարկում ենք Ամերիաբանկի գլխամասային գրասենյակում, Երևանի 6 մասնաճյուղերում, ինչպես նաև՝ Վանաձորի (ԼՈՁԻ), Դիլիջանի (Տավուշ),

Քաջարանի (Սյունիք) և Կապանի (Սյունիք) մասնաճյուղերում: Բոլոր մասնաճյուղերի և գլխամասային գրասենյակի միջև կապն ապահովվում է առցանց ռեժիմով՝ թույլ տալով Բանկի հաճախորդներին սպասարկվել ցանկացած մասնաճյուղում՝ անկախ նրանից, թե որ մասնաճյուղում են հաշիվ բացել:

Մասնաճյուղերի ցանցի զարգացմանը զուգընթաց Բանկը նաև ընդլայնում և բարելավում է իր բանկոմատների ցանցը, որը հանդիսանում է ենթակառուցվածքի անբաժանելի մաս: 2014թ. վերջի դրությամբ տեղադրված բանկոմատների ընդհանուր թիվը կազմում էր 97, իսկ POS-տերմինալներինը՝ 735:

Ամբողջականություն



ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԿՍՎՈՒՄ Է
ԻՑ

Ամբողջականություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԱՆԿԻՆԳ



Հաշվետու տարվա ընթացքում Ամերիաբանկին հաջողվեց 2013թ. համեմատ գրեթե 30%-ով ընդլայնել կորպորատիվ հաճախորդների բազան:

**Առհասարակ,
կորպորատիվ բանկային
ծառայությունների
շուկայում Ամերիաբանկն
ունի վստահելի
ռազմավարական
գործընկերոջ համբավ:**

Մենք ցուցաբերում ենք անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին և օգնում գտնել իր համար լավագույն լուծումը՝ բաղկացած տարբեր ֆինանսական գործիքներից:

**Ներկայումս
Ամերիաբանկը
շուկայի առաջատարն
է կորպորատիվ
հաճախորդների
վարկավորման
ծավալներով:**

2014թ. Բանկի կորպորատիվ վարկային պորտֆելը շարունակ աճել է՝ տարեվերջին հասնելով 234,930 մլն ՀՀ դրամի (ներառյալ վարկային գծերը, օվերդրաֆտները, լիզինգը և ֆակտորինգը):

2014թ. Բանկը շարունակեց վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման քաղաքականությունը՝ ընդլայնելով համագործակցությունը փոքր և միջին ընկերությունների հետ: ՓՄՁ-

**Մենք որդեգրել
ենք կորպորատիվ
հաճախորդների հետ
համագործակցության
հետևյալ սկզբունքները.**

- ▶ անհատական մոտեցում
- ▶ սպասարկման բարձր որակ
- ▶ գործընկերական հարաբերություններ, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատվություն ՀՀ և արտաքին շուկաներում՝ առկա լուծումների արդյունավետության վերաբերյալ
- ▶ աջակցություն հաճախորդների աճին
- ▶ թափանցիկություն նպատակային ծրագրային միջոցների հասանելիության ապահովում:

Գևորգ Էմինի «Սասունցիների պարը» ժամանակակից հայ գրականության ամենահզոր պոեմներից մեկն է: Այն ամբողջացնում է հայ ազգի կամքի ուժն ու միասնության ոգին՝

Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,
Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ.
Որ պար չէ սա, այլ՝ մի ազգի քաջ պատմություն,
Որ պարտությունն անգամ ունի հպարտություն.
Եվ չի՛ հաղթի ոչինչ այն հին ժողովրդին,
Որ այս քանքով
Ու այս կամքով
Պարել գիտի...

Եվ այս պարը
ՄԱՍԻՍ ԼԵՈՒՆ ԼԱՆՔԻՆ ՊԱՐԵՍ...

Կտավը՝ հայ անվանի նկարիչ Գ. Խանջյանի



ների վարկավորման ցուցանիշներով Բանկն առայժմ առաջատարների շարքում չէ, զբաղեցնում է միջին դիրք, քանի որ սկսել է ակտիվորեն համագործակցել փոքր և միջին ձեռնարկությունների հետ միայն 2011թ-ին՝ իր ռազմավարությունը փոխելուց հետո: 2014թ. Բանկին հաջողվեց դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը: Բանկի վարկային պորտֆելի դիվերսիֆիկացման տեսանկյունից 2014թ. բավականին ուշագրավ էր.

- ▶ Միջին ձեռնարկությունների վարկային պորտֆելն ավելացավ 68.8%-ով:
- ▶ Միջին ձեռնարկությունների վարկերի մասնաբաժինը ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելի մեջ կազմել է 21.7%:

ԼԻԶԻՆԳ

2014թ. վերջում Ամերիաբանկի լիզինգային պորտֆելը կազմեց 2,852 մլն ՀՀ դրամ (6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք): 2013թ. համեմատ հաճախորդների թիվն ավելացավ 9.3%-ով, իսկ լիզինգային գործառնությունների քանակը՝ 10%-ով, ինչի շնորհիվ լիզինգային պորտֆելն ավելացավ 5.8%-ով:

Գործարքների մեծ մասն իրականացվել է արդյունաբերական և բժշկական սարքավորումների, մարդատար և բեռնատար փոխադրամիջոցների ձեռքբերման նպատակով: Այսպիսով, Բանկը ձգտում է լիզինգառուներին ընձեռել գործունեությունն ընդլայնելու նոր հնարավորություններ: Ամերիաբանկի լիզինգային պորտֆելը ներառում է շինարարության, սննդի արդյունաբերության, լեռնահանքային արդյունաբերության, առողջապահության, առևտրի և սպասարկման ոլորտները:

ՖԱԿՏՈՐԻՆԳ

2014թ. տվյալներով Ամերիաբանկը առաջինն է առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի աճի տեմպերով:

2014թ. վերջի դրությամբ Բանկին զիջված պարտավորությունների ծավալն ավելացել է 25.3%-ով 2013թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, մինչդեռ շուկայի բաժինը ֆակտորինգային գործառնությունների ծավալով կազմում էր շուրջ 35%, ինչը ՀՀ ֆակտորինգային շուկայում լավագույն ցուցանիշներից է:

2014թ. Բանկին զիջված ընդհանուր պարտավորությունների գումարն ավելացավ 68%-ով՝ կազմելով 21 մլրդ ՀՀ դրամ: Տարվա արդյունքներով Բանկի ակտիվ ֆակտորինգային պորտֆելը կազմեց 4.5 մլրդ ՀՀ դրամ՝ 2013թ. 3.6 մլրդ ՀՀ դրամի համեմատ:

2014թ. Ամերիաբանկի ֆակտորինգային ֆինանսավորումն ուղղված էր այնպիսի ոլորտներին, ինչպիսիք են տրանսպորտը, առևտուրը, շինարարությունը, արտադրությունը, հանքարդյունաբերությունը, ընդ որում ֆակտորինգային ֆինանսավորման 35%-ը բաժին է ընկնում տրանսպորտի ոլորտին, իսկ 27%-ը՝ առևտրին: Բացի նրանից, որ մենք մեր հաճախորդներին առաջարկում ենք ֆակտորինգային ֆինանսավորման բավականին ձկուն պայմաններ, մենք չենք սահմանափակվում ստանդարտ լուծումներով և հաճախորդներին ցուցաբերում ենք անհատական մասնագիտական մոտեցում՝ կիրառելով ֆակտորինգի բոլոր հնարավոր սխեմաներն ու միջազգային հարուստ փորձը: Ֆակտորինգային գործարքների շրջանակներում Ամերիաբանկը համագործակցում է խոշոր մանրածախ ցանցերի, արդյունաբերական ձեռնարկությունների և հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ:

2013թ-ից Բանկը հանդիսանում է Factors Chain International միջազգային ֆակտորինգային միության անդամ, ինչը հաճախորդներին հնարավորություն է տալիս գործարար կապեր հաստատել աշխարհի շուրջ 80 երկրների կազմակերպությունների հետ և դուրս գալ նոր շուկաներ: Այն նաև թույլ է տալիս Բանկին ընդլայնել իր միջազգային ֆակտորինգային ծառայությունների շրջանակը: 2014թ. Բանկի ֆակտորինգային գործառնությունների 47%-ը կազմում էին միջազգային գործարքները: Միջազգային ֆակտորինգի շրջանակներում հիմնականում իրականացվում են արտահանման գործարքներ, ինչը խոսում է արտահանումը և տեղական ապրանքների սպառումը միջազգային շուկաներում խթանելու՝ Ամերիաբանկի դիրքորոշման մասին:

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ամերիաբանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ծառայություններ մատուցող հիմնական կառույցներից է: Թողարկված ակրեդիտիվների և երաշխիքների զգալի քանակի և դրանց սպասարկման բարձր մակարդակի շնորհիվ Բանկը բազմաթիվ մրցանակների է արժանացել հեղինակավոր միջազգային կազմակերպություններից:


Հաճախորդների հետ սերտ համագործակցության արդյունքում Բանկը կարողանում է հիմնավորված խորհրդատվություն և հաճախորդի ֆինանսական կարիքներից բխող նորարար ֆինանսական լուծումներ առաջարկել: Ամերիաբանկը Global Finance-ի կողմից չորրորդ տարին անընդմեջ ծանաչվել է Հայաստանի լավագույն բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում: Որպես ակրեդիտիվների և երաշխիքների թողարկման առաջատար, Բանկը նաև արժանացել է ՎՋԵԲ-ի՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին՝ նաև դառնալով առաջին հայկական բանկը, որն ստացավ ՎՋԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հաստատող բանկի կարգավիճակ:

2014թ. Ամերիաբանկի կողմից թողարկված ակրեդիտիվների ծավալն ավելացավ 151%-ով, երաշխիքներինը՝ 77.8%-ով: Ինկասայի ընդհանուր ծավալը կազմեց 2,037 մլն ՀՀ դրամ, իսկ գործարքների ծավալն աճեց 32.6%-ով:


Շնորհիվ ՄՖԿ-ից, ՎՋԵԲ-ից և մի շարք խոշոր առևտրային բանկերից ներգրավված միջոցների՝ Բանկը թողարկում է ակրեդիտիվներ և ֆինանսավորում հաճախորդների ներմուծման գործարքները շուկայականից ցածր տոկոսադրույքներով: Ընդհանուր առմամբ, 2014թ. Բանկը ֆինանսավորում էր առևտուրն ինչպես վճարային գործիքների թողարկման և արտահանման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից ռեսուրսների ներգրավման հաշվին հայրենական արտադրողների արտահանման և ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: Մասնավորապես, Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից բացված վարկային սահմանաչափերը 2014թ. գերազանցում էին 120 մլն ԱՄՆ դոլարը:

Հաշվետու տարվա ընթացքում Ամերիաբանկն իրագործեց ազգային նշանակության մի քանի նախագիծ՝ ՏՏ և հեռահաղորդակցման, արտադրության, ջերմոցային տնտեսության, ջերմային էներգիայի, հանքարդյունաբերության, մետաղագործության, կարծածավկետ ֆինանսավորման ոլորտներում: Այդ գործարքները թե՛ ծավալի, թե՛ նշանակության տեսանկյունից բավականին տպավորիչ էին և տեղական շուկայի, և՛ տարածաշրջանի մակարդակով:


**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2014 Թ.**
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




**ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ**
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐԿԱՅԻՆ
ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2014Թ.**
ՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ




**ԽՈՇՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ**
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




ՖԱԿՏՈՐԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



**ԹՈՂԱՐԿՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԵՎ
ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ**
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



Առատություն



ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԿՍՎՈՒՄ Է
ԻՑ

ՄԱՆՐԱԾԱՆ ԲԱՆԿԻՆԳ



Մանրածախ բանկային գործառնությունների շարունակական և դինամիկ աճն ու մանրածախ ոլորտում Բանկի դիրքերի ամրապնդումն արդեն մի քանի տարի է, ինչ գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում՝ որպես առաջնահերթ ռազմավարական ուղղություն: Թիրախային մանրածախ բանկային պրոդուկտներ մշակելու և Ամերիաբանկը որպես զուտ կորպորատիվ Բանկ ընկալելու կարծրատիպը կոտրելու մեր շարունակական ջանքերը անհատական մոտեցման հետ մեկտեղ բավականին արգասաբեր եղան: Չնայած դանդաղ տնտեսական աճին և 2014թ. վերջին ծառացած շուկայի մարտահրավերներին՝ Բանկը բարելավել է իր դիրքը հիմնական ցուցանիշներով՝ դառնալով մանրածախ բանկային հատվածի առաջատարներից մեկը:

բանկային մի շարք ծառայություններից և իրենց ժամանակը խնայելու կարիք ունեն: «Խելացի» ծառայությունների այս փաթեթը ներառում է հաճախորդներին անհրաժեշտ բոլոր հիմնական բանկային ծառայությունները և հնարավորություն ընձեռում Ամերիաբանկից օգտվելիս և գործարքներ իրականացնելիս ստանալ հատուկ սակագներ և պայմաններ: Բացի հիմնական ծառայություններից, «Ամերիա Պերսոնա» հաճախորդներին կցվում է հաճախորդի անհատական մենեջերը, ով համակարգում է բոլոր խնդիրների լուծումը: Ավելին, հաճախորդները հնարավորություն ունեն նախապես հանդիպում նշանակել իրենց սպասարկող մենեջերի հետ՝ էապես խնայելով սեփական ժամանակը:

2014թ. ներդրվել է Հաճախորդների լոյալության ծրագրի առաջին փուլը, որը քարտապաններին հնարավորություն է տալիս բոնուսային միավորներ կուտակել քարտային գործարքներից և հետագայում օգտագործել դրանք արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններից օգտվելու համար: Բոնուսային միավորները տրամադրվում են նաև այլ հաճախորդների Ամերիաբանկ ուղղորդման, հավատարմության (Ամերիաբանկի հաճախորդը լինելու տարիների թիվ) դիմաց, տոնական և ծննդյան օրերին: Հաճախորդները հնարավորություն են ստանում օգտվելու տարբեր բանկային ծառայություններից մինչև 100% զեղչով: Լոյալության ծրագիրը գործում է նաև համատեղ քարտերի դեպքում, ինչը համատեղ քարտերի տերերին գերազանց հնարավորություն է ընձեռում օգտագործել կուտակված միավորները Բանկի հետ համագործակցությունն ընդլայնելու համար (հաշիվների բացման, քարտերի ստացման, հեռակառավարման բանկային համակարգերից օգտվելու

ՆՈՐ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Արդեն մի քանի տարի է, ինչ Բանկը որդեգրել է հաճախորդների ամեն մի սեգմենտի կարիքները բացահայտելու և համապատասխան լուծումներով հանդես գալու սկզբունքը՝ միաժամանակ յուրաքանչյուր հաճախորդին ցուցաբերելով անհատական մոտեցում: 2013թ. «Ամերիա Գործընկեր» և «Ամերիա Պերսոնա» բարձրակարգ հաճախորդների համար նախատեսված փաթեթները հաջողությամբ ներդնելուց հետո Բանկը մշակեց և ներդրեց բանկային ծառայությունների երրորդ փաթեթը՝ հատուկ միջին դասի հաճախորդների համար: «Ամերիա Պերսոնա»-ն նախատեսված է այն հաճախորդների համար, ովքեր ակտիվորեն օգտվում են

Հայերը հայտնի են որպես ընկերասեր և հյուրասեր ազգ: Այցելելով այս գեղեցիկ երկիրը՝ մարդիկ չեն մոռանում խոհանոցի համեղ բազմազանությունն ու հայկական գինու հարուստ համր: Ըստ լեգենդի՝ երբ Նոյը ջրիեղեղից հետո իջավ Արարատ լեռան գագաթից, նա տնկեց խաղողի վազ և առաջին բերքից պատրաստեց մի յուրահատուկ խմիչք: 2011 թ. Արենիում անցկացված հնագիտական հետազոտությունների համաձայն հայկական գինեգործությունն ունի 6100 տարվա պատմություն:



ժամանակ): Երկրորդ փուլի ժամանակ մենք նախատեսում ենք ներդնել համատեղ քարտերի լոյալության ծրագիրը՝ առաջարկելով կուտակված միավորների օգտագործման տարբեր ձևեր:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԿԱԾ ՑԱՆՑ

Բանկն ակտիվորեն զարգացնում է բանկային սպասարկման ուղիները:

2015թ. մեր առաջնահերթ նպատակներից մեկը հեռակառավարման բանկային համակարգերի համալիր փաթեթի մշակումն է: Արդեն իսկ ընթացքում են մի շարք բարդ նախագծեր, որոնք նպատակ ունեն հզորացնելու Բանկի սպասարկման ցանցի կարողությունները և հեռակառավարման բանկային համակարգերի հնարավորությունները: Մոբայլ սարքերի և բջջային հեռախոսների միջոցով բանկային սպասարկման ծառայության մշակումը Բանկի ուշադրության կենտրոնում էր մի քանի տարի շարունակ և ամբողջությամբ կգործարկվի 2015թ.: 2014թ. իրականացվել են նաև հեռակառավարման բանկային համակարգերի զարգացման և բանկոմատների ու մասնաձյուղերի ցանցի ընդլայնման նախագծերը:

▶ Զեռակառավարման բանկային համակարգերի զարգացման նախագծի շրջանակներում Բանկը կատարելագործել է ինտերնետ-բանկինգ համակարգի հնարավորությունները՝ դրան զուգահեռ հատուկ սակագներ սահմանելով համակարգի միջոցով գործարքներ կատարող հաճախորդների համար:

▶ 2014թ. մարտին Ամերիաբանկը Երևանում բացեց «Արշակունյաց» մասնաձյուղը, որն իր գործունեությունը ծավալում է խոշոր առևտրային կենտրոնում: Դա Բանկի առաջին մասնաձյուղն է երկարաշխատանքային գրաֆիկով, որը հաճախորդների համար առավելագույն հարմարություն ապահովելու նպատակով աշխատում է առավոտյան ժամը 10-ից մինչև երեկոյան ժամը 10-ը՝ շաբաթվա բոլոր օրերին: Նորաբաց մասնաձյուղում գործում են արագ գործարքների համար նախատեսված ինքնասպասարկման տերմինալներ: Մասնաձյուղն իր հարմարավետ դիրքի, մեծ տարածքի, ժամանակակից տեխնիկական հագեցվածության և պրոֆեսիոնալ անձնակազմի միջոցով ապահովում է սպասարկման բարձր որակ և հաճախորդների բավարարվածությունը: 2015թ. Բանկը նախատեսում է մասնաձյուղ բացել

Սյունիքի մարզի Կապան քաղաքում:

▶ 2014թ. Ամերիաբանկի գործող բանկոմատների թիվը կազմում էր 97: Բանկոմատների ցանցի ընդլայնումը սպասարկման որակի բարձրացմանը և հարմարության ապահովմանն ուղղված միակ քայլը չէր: Մենք կատարելագործել ենք բանկոմատների միջոցով սպասարկումը՝ տեղադրելով կանխիկի մուտքագրման հնարավորությամբ բանկոմատներ, և նախատեսում ենք կանխիկի մուտքագրման այլ տերմինալներ տեղադրել նաև 2015թ.:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԲԱԶԱ ԵՎ ԱՎԱՆԴՆԵՐ

Հավատարիմ մնալով բարձրակարգ սպասարկում և ձկուն ու բարենպաստ պայմաններով բանկային ծառայությունների լայն տեսականի առաջարկելու իր քաղաքականությանը՝ Բանկը հաճախորդների յուրաքանչյուր սեգմենտին առաջարկում է հատուկ այդ հատվածի համար մշակված ծառայություններ և նպատակային սպասարկում, ինչը հնարավորություն է տալիս բարձրացնել հաճախորդների բավարարվածության աստիճանը և հավատարմությունը: Արդյունքում՝ Ամերիաբանկի մանրածախ ֆիզիկական անձ հաճախորդների թիվն աճել է 23%-ով: Պրեմիում/Գործընկեր կարգավիճակ ունեցող հաճախորդների թիվը ևս աճել է շուրջ 25%-ով: Դրան զուգահեռ զգալի աճել է նաև ավանդատուների թիվը, ինչի արդյունքում «Ամերիա Գործընկեր» և «Պրեմիում» հաճախորդների կողմից ներդրված ժամկետային ավանդների ծավալն ավելացել է 38%-ով:

Ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալը տարվա կտրվածքով աճել է 25.7%-ով՝ 82.3 մլրդ ՀՀ դրամից մինչև 103.5 մլրդ ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ

Աշխատավարձային նախագծերի հետ կապված գործընթացների վերանայման արդյունքում մենք նվազագույնի ենք հասցրել նախագծի շուրջ բանակցելու և այն կազմակերպելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը: Միևնույն ժամանակ մենք ընդլայնել ենք աշխատավարձային նախագծերի շրջանակներում հաճախորդներին տրամադրվող ծառայությունների տեսականին և ավելի դյուրին ենք դարձրել սպասարկումը: Արդյունքում

մենք արձանագրեցինք մեզ հետ համագործակցող ընկերությունների թվի աճ: Մասնավորապես, աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի ֆիզիկական անձ հաճախորդների թիվն ավելացավ 33.4%-ով, իսկ համագործակցող ընկերությունների քանակը՝ 22%-ով:

ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Հաճախորդների համար հարմար ու բարձրակարգ սպասարկում ապահովելու նպատակով Ամերիաբանկը շարունակում է կատարելագործել մանրածախ վարկավորման ընթացակարգերը: Բոլոր մանրածախ վարկային պրոդուկտները համալրվել են նոր պայմաններով և հնարավորություններով:

2014թ. ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ընդհանուր գումարն ավելանալով 45.3%-ով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմեց 51,213 մլն ՀՀ դրամ:


2014 թ. մանրածախ ՓՄՁ վարկերի պորտֆելն աճել է 105%-ով:

Ամերիաբանկը հանդես է եկել ՓՄՁ-ների վարկավորման «Բուներանգ» հատուկ արշավով, որը ՓՄՁ-ներին թույլ տվեց օգտվել Ամերիաբանկի կողմից առաջարկվող վարկավորման արտոնություններից: «Բուներանգ» արշավի շրջանակում հիմնալի հնարավորություն ստացան այն վարկառու ՓՄՁ-ները, ովքեր իրենց վարկը տեղափոխեցին այլ բանկերից Ամերիաբանկ: Մասնավորապես, տեղափոխվող գումարի 1%-ը վերադարձվում էր վարկառուներին: Հետագայում «Բուներանգ» արշավը տարածվեց նաև հիփոթեքային վարկերի վրա:


Քարտով տրամադրված վարկերի պորտֆելն արձանագրել է 56.3% աճ: Հիփոթեքային վարկերը կազմում են ընդհանուր մանրածախ վարկային պորտֆելի 33%-ը: 2014թ. հիփոթեքային վարկերի ծավալն ավելացավ 67.3%-ով՝ կազմելով 16,931 մլն ՀՀ դրամ:

Բանկը վարկեր է տրամադրում ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկաներում ավտոմեքենա ձեռք բերելու համար: Մենք համագործակցում ենք Հայաստանի բոլոր առաջատար ավտոդիլերների հետ: Մասնավորապես, 2014թ. Բանկը համագործակցում էր 14 ընկերության հետ: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավտովարկերը կազմում էին ընդհանուր մանրածախ պորտֆելի 8%-ը (4,087 մլն ՀՀ դրամ):


ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՎԱՆԴՆԵՐ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԵՎ ՑՊԱՀԱՆՋ ԱՎԱՆԴՆԵՐ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, 2014Թ.



ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԲԱՆԿՈՄԱՏՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

68,890
2014

55,903
2013



Մանրածախ վարկավորման ընդլայնմանը զուգընթաց Բանկը վարկավորման ողջ գործընթացը ենթարկում է խիստ մոնիթորինգի՝ վարկային պորտֆելի բարձր որակ ապահովելու նպատակով:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

Ամերիաբանկն էքստենսիվ և ինտենսիվ ձևով անդադար զարգացնում է քարտային գործառնությունները: Մենք թողարկում ենք և սպասարկում MasterCard և Visa միջազգային համակարգերի բոլոր տեսակի քարտերը՝ ստանդարտից մինչև Platinum և Infinite տեսակները: Քարտային գործառնությունների զարգացման հիմքում ընկած են հաճախորդների սպասարկման բարձր որակը և հարմարությունը: Բացառիկ սպասարկում ապահովելու նպատակով մենք ներդրել ենք քարտային գործառնությունների շուրջօրյա մոնիթորինգի համակարգ և տեխնիկական օժանդակման ծառայություն, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս օրվա ցանկացած ժամի դիմել մասնագետի օգնությանը: Արդյունքում՝ Բանկը բարելավել է իր դիրքերը գրեթե բոլոր ցուցանիշներով:

2014թ. Բանկի թողարկած քարտերի քանակն ավելացավ 20%-ով: Վճարային քարտերից ստացված միջնորդավճարներն ավելանալով 21.2%-ով՝ կազմեցին Բանկի ընդհանուր միջնորդավճարների 44.5%-ը (2013թ.՝ 41.2%): Հաշվետու տարվա ընթացքում վճարային քարտերով իրականացված ընդհանուր շրջանառությունը կազմեց 100.1 մլրդ ՀՀ դրամ (240.9 մլն ԱՄՆ դոլար)՝ արձանագրելով 31.5% աճ 2013թ. 76.1 մլրդ ՀՀ դրամի համեմատ (185.9 մլն ԱՄՆ դոլար):

2014թ. Ամերիաբանկն զգալիորեն ավելացրեց վարկային քարտերի պորտֆելը, որը կազմեց Բանկի ընդհանուր

մանրածախ վարկային պորտֆելի 37.6%-ը: 2014թ. ընթացքում քարտով տրամադրված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային գծերի օգտագործված մասերի ընդհանուր ծավալն աճեց 56.3%-ով՝ կազմելով 16.2 մլրդ ՀՀ դրամ:

Ամերիաբանկն ի սկզբանե շուկայի առաջատարներից էր քարտերի արդյունավետության ցուցանիշներով, մասնավորապես, ըստ անկանխիկ շրջանառության ծավալի և մեկ քարտին բաժին ընկնող գործարքների գումարի: 2014թ. Ամերիաբանկը ներկայացրեց անկանխիկ շրջանառության խրախուսմանն ուղղված՝ «Անկանխիկ ազատություն» արշավը: Արշավը նախատեսված էր ՀՀ բանկային համակարգի բոլոր քարտապանների համար: «Անկանխիկ ազատություն» քարտային արշավի շրջանակներում քարտապաններին առաջարկվում էր վարկային գիծ՝ առանց եկամուտը հաստատող փաստաթղթերի և սպասարկման վճարի մինչև տարեվերջ: Վարկային գիծ ստանալու համար հիմնական նախապայմանը քարտով համապատասխան անկանխիկ շրջանառության առկայությունն էր՝ անկախ նրանից, թե քարտը որ Բանկի կողմից է թողարկվել: 2014թ. Բանկի քարտերով իրականացված անկանխիկ գործարքների ընդհանուր ծավալն առաջանցիկ աճ է ցուցաբերել կանխիկ գործարքների համեմատ: Առևտրի կետերում Ամերիաբանկի քարտերով կատարված վճարումների ծավալը 2013թ. համեմատ աճել է 34.6%-ով, մինչդեռ բանկոմատներով և POS-տերմինալներով իրականացվող կանխիկացման գործարքներն ավելացել են 19.9%-ով:


Դրան զուգընթաց Բանկը նաև մեծ ուշադրություն է դարձնում համապատասխան ենթակառուցվածքի զարգացմանը, որը ևս նպաստում է քարտային պորտֆոլիտների և ծրագրերի առաջնորդմանը: 2014թ. Ամերիաբանկի բանկոմատներով կատարված

գործարքների ծավալն աճեց 23.3%-ով:

2014թ. Բանկը շարունակում էր ակտիվ համագործակցությունը միջազգային վճարային համակարգերի հետ, որի շրջանակներում հանդես եկավ մի շարք համատեղ մարքեթինգային արշավներով: Մասնավորապես, հատուկ արշավ էր կազմակերպվել Visa քարտերի առաջնորդման համար: FIFA World Cup Brazil TM-ը Visa վճարային համակարգի աջակցությամբ 2014թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությանն ընդառաջ հանդես եկավ հատուկ առաջարկով: Արշավի շրջանակներում Ամերիաբանկի Visa քարտերով կատարելով անկանխիկ վճարումներ՝ քարտապանները հնարավորություն ստացան մասնակցելու Բրազիլիայում կայացած 2014թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությանը: MasterCard համակարգի հետ կազմակերպված համատեղ արշավի շրջանակներում 19 ամենաակտիվ քարտապաններն ստացան պլանշետ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

2014թ. Բանկն ամրապնդեց իր համագործակցությունը դրամական փոխանցումների 2 միջազգային համակարգերի՝ MoneyGram-ի և Unistream-ի հետ: Ֆիզիկական անձանց՝ Բանկի միջոցով կատարված դրամական փոխանցումների ընդհանուր ծավալն ավելացավ 28.4%-ով՝ կազմելով 55,732 մլն ՀՀ դրամ, ընդ որում 26,948 մլն ՀՀ դրամը բաժին է ընկնում արտերկրից դեպի Հայաստան, իսկ 28,784 մլն ՀՀ դրամը՝ Հայաստանից դեպի արտերկիր կատարվող փոխանցումներին:



ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԿՍՎՈՒՄ Ե
ԻՅ



Արագացում

ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ներդրումաբանկային և առևտրային գործառնությունները ՀՀ բանկային համակարգում առայժմ բավական զարգացած չեն: Այնուամենայնիվ, վերջին մի քանի տարիների ընթացքում Ամերիաբանկը՝ որպես ներդրումաբանկային և առևտրային ծառայություններ տրամադրող առաջին հաստատություններից մեկը և տվյալ ոլորտի ջատագովը Հայաստանում, շարունակաբար աշխատում է ոլորտը զարգացնելու, ծառայությունների արդյունավետությունը և համաշխարհային շուկաների մասին հաճախորդների իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ:

Բարեհաջող կերպով իրականացնելով բազմաթիվ աննախադեպ և նշանակալի գործարքներ և նոր հնարավորություններ ստեղծելով ներդրողների համար՝ Ամերիաբանկը վաստակել է նորարար ներդրումային բանկի համբավ:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամերիաբանկի կորպորատիվ ֆինանսների բաժինն առաջարկում է ընթացիկ օժանդակություն կորպորատիվ ֆինանսների ոլորտում և լուծումների մշակում ոչ միայն Ամերիաբանկի Տնօրնության և Տնօրենների խորհրդի, այլև Բանկի՝ բարձր եկամտային սեգմենտի հաճախորդների համար: Մեր թիմը համախմբել է փորձառու բազմակողմանի մասնագետների, ովքեր կարող են խորհրդատվություն տրամադրել ամենատարբեր բնագավառներում՝ պարտքային և փայտիտիական ֆինանսավորում կապիտալի փակ շուկաներից, կառուցվածքային

Ամերիաբանկը տրամադրում է ներդրումաբանկային և առևտրային ծառայությունների ամենալայն տեսականին Հայաստանում: Այն ընդգրկում է կորպորատիվ ֆինանսները, կապիտալի շուկաները, միաձուլումներն ու ձեռքբերումները, ուղղակի ներդրումները, արտարժույթային և բրոքերային գործառնությունները, միջնորդություն Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի ռեեստրավարման և պահառության ծառայությունների ժամանակ:

Երվանդ Քոչարը քսաներորդ դարի հայտնի նկարիչ-քանդակագործ է: «Տարածական նկարչություն» հավաքածուի հիմնադիրը, որտեղ միահյուսվում են քանդակն ու նկարչությունը՝ թույլ տալով վայելել աշխատանքի հմայքը բոլոր կողմերից: Նա եղել է նորարարական արվեստի զարգացման և վերափոխման հեղինակներից մեկը: Երվանդ Քոչարը ստեղծել է հայկական ազգային էպոսի հերոս Սասունցի Դավթի արձանն իր ձիու վրա, որը դարձել է Երևանի խորհրդանշներից մեկը:



ֆինանսական լուծումներ, վարկանիշի ստացում և բանկային ֆինանսավորման ռազմավարության մշակում:

2014թ. կորպորատիվ ֆինանսների թիմը հաջողությամբ ներգրավեց փոխարկելի ստորադաս փոխառություն FMO-ից, որի արդյունքում Բանկի բաժնետերերի կազմում ընդգրկվելու է AAA վարկանիշ ունեցող բաժնետեր: Դա աննախադեպ գործարք էր ՀՀ բանկային համակարգի համար և շատ կարևոր քայլ Ամերիաբանկի միջնաժամկետ կապիտալացման ծանապարհին: 2014թ. ստորագրվել են 20 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով առաջնային փոխառությունների ներգրավման պայմանագրեր: Եվս 90 մլն դոլարի փոխառություններ բանակցությունների փուլում են:

Նախորդ 5 տարիների ընթացքում Ամերիաբանկն, ընդհանուր առմամբ, ներգրավել է 300 մլն ԱՄՆ դոլար տարբեր միջազգային ֆինանսական հաստատություններից և զարգացման գործակալություններից, որոնց թվում են Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Հոլանդիայի զարգացման բանկը (FMO), Գերմանական ներդրումների և զարգացման ընկերությունը (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), Եվրասիական զարգացման բանկը (EDB), Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), Ավստրիական զարգացման բանկը (ՕԵԵԲ), «Պրոպարկո» ֆրանսիական գործակալությունը և Առևտրի և զարգացման սևծովյան բանկը (BSTDB): 2014թ. 4-րդ եռամսյակում Բանկը բանակցություններ սկսեց ՕՊԵԿ-ի Միջազգային զարգացման հիմնադրամի (OFID) հետ, որի արդյունքում ակնկալում է 2015թ. երկրորդ կիսամյակում ներգրավել առաջնային փոխառություն: Միջազգային կառույցներից և զարգացման գործակալություններից ներգրավված միջոցներն ուղղվել են ՓՄՁ-ների, էներգաարդյունավետության/վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսական նախագծերի ֆինանսավորմանը: Այսպիսով՝ Ամերիաբանկը ևս մեկ անգամ ընդգծեց, որ մեծ կարևորություն է տալիս Հայաստանում ՓՄՁ-ների, էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսական նախագծերի աջակցությանը: Մենք վստահ ենք, որ միջազգային ֆինանսական միջոցներն ուղղվելով դեպի այդ ոլորտները՝ մենք էապես նպաստում ենք երկրի կայուն տնտեսական աճին: Մեր թիմի կողմից ներգրավված ներդրողների ցանկը չի սահմանափակվում միայն միջազգային ֆինանսական կառույցներով և զարգացման գործակալություններով, այլև ներառում է միջազգային ներկայություն ունեցող խոշոր ընկերություններ, որոնք համագործակցում են Բանկի հետ նաև գործառնական հարցերով:



Մասնավոր հատվածում ներկայումս մենք իրականացնում ենք խորհրդատվական նախագիծ ՀՀ խոշոր ջերմոցային տնտեսություն վարող ընկերության համար, ինչի արդյունքում ընկերությունը ներգրավելու է և կառուցվածքավորելու 50 մլն ԱՄՆ դոլարի միջոցներ՝ ընդլայնման մեծածավալ նախագծի համար: Նախագծի ավարտը նախատեսվում է 2015թ.:

ԿԱԴԵՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Որպես կապիտալի տեղական շուկայի առաջատար Ամերիաբանկը միակ հայաստանյան բանկն է, որն ունի կապիտալի շուկաներում մեծ փորձառություն ունեցող անձնակազմ և պարտքային ու փայտափրական կապիտալի շուկաներում գործունեություն ծավալող անձանց առաջարկում է ծառայությունների ամբողջական փաթեթ, ներառյալ կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը, ֆոնդային բորսաներում արժեթղթերի առաջնային և երկրորդային տեղաբաշխումը, մարքեթ-մեյքերի (շուկա ստեղծող) ծառայությունները, խորհրդատվությունը:

Բանկը պահպանել է Հայաստանում կորպորատիվ պարտատոմսերի շուկայի առաջատարի իր դիրքերը՝ հանդես գալով որպես ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի ՀՀ դրամով առաջին պարտատոմսերի թողարկման գլխավոր համակազմակերպիչ և շուկա ստեղծող:

ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի դրամային պարտատոմսերի թողարկումը AAA վարկանիշ ունեցող ոչ ռեզիդենտ հաստատության կողմից ՀՀ ազգային արժույթով պարտատոմսերի թողարկման աննախադեպ գործարք էր պարտքային

կապիտալի շուկայում, ընդ որում ՎԶԵԲ-ի պարտատոմսերը լողացող տոկոսադրույքով առաջին արժեթղթերն էին, որոնք ներկայացվել էին ՀՀ բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին որպես իրացվելիության կառավարման նոր գործիք: Նշված բոլոր թողարկումները ցուցակվել էին «Նասդաք ՕԷմԷքս Արմենիա» ֆոնդային բորսայում, և Ամերիաբանկի ջանքերի շնորհիվ բոլոր պարտատոմսերն ակտիվորեն շրջանառվում են երկրորդային շուկայում: Ամերիաբանկը «Նասդաք ՕԷմԷքս Արմենիա» բորսայի ամենաակտիվ մարքեթ-մեյքերն էր՝ 2014թ. ապահովելով ՄՖԿ-ի 3 տարի մարման ժամկետով դրամային պարտատոմսերի, ՎԶԵԲ-ի 1 տարի մարման ժամկետով դրամային պարտատոմսերի, «Շեն Հոլդինգ» ընկերության 5 տարի մարման ժամկետով դոլարային պարտատոմսերի և «ՍԱՍ Գրուպի» 2 տարի մարման ժամկետով դոլարային պարտատոմսերի տեղաբաշխումն ու շրջանառությունը շուկայում: Ավելին, Ամերիաբանկի մարքեթ-մեյքերի ծառայությունների շնորհիվ «ՍԱՍ Գրուպի» պարտատոմսերը դարձան «Նասդաք ՕԷմԷքս Արմենիա» բորսայում ամենաակտիվորեն շրջանառվող կորպորատիվ արժեթղթերը: 2014թ. դեկտեմբերին պարտատոմսերի մարման պահին ընդհանուր շրջանառությունը կազմում էր 6.8 մլն ԱՄՆ դոլար (96%), իսկ գործարքների թիվը՝ 100:



Ամերիաբանկը Հայաստանում և տարածաշրջանում հանդես է գալիս որպես կապիտալի շուկաների զարգացման ջատագով: Համոզված լինելով, որ Հայաստանի փայտիտրական և պարտքային կապիտալի շուկաներն ունեն խոստումնալից ապագա, մենք շարունակաբար աշխատում ենք դրանք զարգացնելու ուղղությամբ:

ՄԻԱԶՈՒԼՈՒՄՆԵՐ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը տրամադրում է ընկերությունների վաճառքի, ձեռքբերման և միաձուլման ծառայությունների համալիր փաթեթ: Մենք մասնագիտանում ենք այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի գնահատումը, ֆինանսական և կոմերցիոն ստուգումները (due diligence), խորհրդատվությունը և վաճառքի/ձեռքբերման նախագծերի կառավարումը: «Ամերիա» ընկերությունների խմբի գործունեության ավելի քան 15 տարիների ընթացքում մենք ձեռք ենք բերել շուկայի լավ իմացություն և լայն կապեր ՀՀ և արտերկրի գործարար շրջանակների հետ, ինչը մեծապես նպաստում է մեր հաջողությանը:

2014թ. մենք խորհրդատվական ծառայություններ ենք տրամադրել տարբեր ոլորտներում, ներառյալ հյուրանոցային և ռեստորանային բիզնեսը, ֆինանսական ծառայությունները, հանքա-արդյունաբերությունը, մասնագիտացած մանրածախ առևտուրը, նավթի առևտուրը և սննդի արդյունաբերությունը:

Բանկը մշտապես հետևում է տնտեսության զարգացումներին և համագործակցում տարբեր ոլորտների խոշոր մասնակիցների հետ՝ միաձուլումների և ձեռքբերումների նոր հնարավորություններ բացահայտելու նպատակով:

2014թ. Հայաստանը միացավ ԵՏՄ-ին՝ միաժամանակ շարունակելով ԵՄ հետ քաղաքական և տնտեսական կապերի ամրապնդմանն ուղղված աշխատանքները: Երկիրը շարունակում է զարգանալ, և միջնաժամկետ հեռանկարում ակնկալվում են միջինից բարձր աճի տեմպեր, ինչը, մեր համոզմամբ, կնպաստի Հայաստանի և ԵՏՄ ու Եվրամիության երկրների միջև կապերի ամրապնդմանը՝ նոր հնարավորություններ ստեղծելով օտարերկրյա ընկերությունների հետ միաձուլումների և ձեռքբերումների համար: Առաջիկա տարում մենք ուղղելու ենք մեր ջանքերը Հայաստանում ներքին և արտաքին միաձուլումների և ձեռքբերումների սպասարկմանը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014թ. արդյունքների համաձայն՝ Բանկն առաջատարն էր ՀՀ շուկայում ըստ արտարժույթային գործառնությունների և ոսկով գործարքների: Առևտրային գործառնություններից (արտարժույթի փոխանակում, ոսկով և արժեթղթերով գործառնություններ) ստացված զուտ եկամուտն աճել է 50.5%-ով, մինչդեռ բանկային համակարգի ցուցանիշը կազմում էր 30.3%: Բանկի ընդհանուր գործառնական եկամուտն առևտրային գործառնությունների մասնաբաժինը 2014թ. կազմեց 15.9%, մինչդեռ բանկային համակարգում՝ 13.4%: Ամերիաբանկի հաճախորդների արտարժույթային ակտիվությունը ևս ավելի բարձր էր, քան ընդհանուր բանկային համակարգինը:

Բանկը հայկական եվրապարտատմների շուկայի, ինչպես նաև ոչ պետական արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակից էր: 2014թ. տարեվերջին Բանկը երրորդն էր ՀՀ բանկային համակարգում ոչ պետական պարտատմներում իրականացված ներդրումների ծավալով:

Ամերիաբանկը բրոքերային ծառայություններ է մատուցում 23 երկրի 100-ից ավել մասնագիտացված առևտրային հարթակներում, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել տարատեսակ արժեթղթերի առքուվաճառք ֆոնդային բորսաներում և մշտապես տեղեկացված լինել ֆինանսական շուկայի զարգացումներին:

Բացելով բրոքերային հաշիվ Ամերիաբանկում՝ հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են՝ NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ն, ARCA-ն, CBOT-ը (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն, LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանսիական բորսան (Գերմանիա), Վիեննայի բորսան (Ավստրիա), Բյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe-ը (Բելգիա), Euronext France-ը (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան (Չինաստան), Ավստրալիայի բորսան և այլն: Հաճախորդը հնարավորություն է ստանում նաև իրականացնել տարբեր արժեթղթերով գնանշվող արժեթղթերի առքուվաճառքի գործարքներ և ստանալ միջազգային շուկաների արժեթղթերի գնանշումներն իրական ժամանակում:

2014թ. Ամերիաբանկն առաջինը ՀՀ բանկային համակարգում իր հաճախորդներին առաջարկեց բրոքերային գործարքներ իրականացնել


MetaTrader4 առևտրային տերմինալի միջոցով: MetaTrader4 համակարգը հնարավորություն է ընձեռում նվազագույն միջոցներով մուտք գործել միջազգային ֆինանսական շուկաներ՝ դրանով հանդերձ բրոքերային գործառնություններն առավել հասանելի դարձնելով հանրության լայն հատվածներին: Meta Trader տերմինալը տրամադրում է CFD և արժույթային (Forex) շուկաներում առևտրային գործիքների լայն տեսականի, մասնավորապես՝ առևտրային պատվերների ամբողջական փաթեթ, ռազմավարության թեստավորում, առևտուրն ավտոմատացնելու հնարավորություն MQL4 ծրագրով գրված ռոբոտների միջոցով, MT4 mobile-ի միջոցով աշխարհի ցանկացած կետում գործարքների իրականացման հնարավորություն:

Բանկի գործունեության արդյունքում Ամերիաբանկը ծանաչվել է Հայաստանի՝ 2014թ. «Տարվա լավագույն բանկ արտարժույթային գործառնությունների գծով» "Global Finance" ամսագրի կողմից: 2015թ. սկզբին ՆԱՍՂԻԶ ՕԷՄԷԶՍ Արմենիան հայտարարեց «Բորսայի լավագույն անդամ 2014» մրցանակաբաշխության 12 անվանակարգերի հաղթողներին: Ամերիաբանկը հաղթող է ծանաչվել ներկայացված 12 անվանակարգերից 4-ում, այդ թվում՝ «Բորսայի լավագույն անդամ արտարժույթի շուկայում» և նոր սահմանված «Բորսայի լավագույն անդամ ռեպո և սվոպ գործառնությունների ոլորտում» անվանակարգերում, իսկ դեպոզիտար գործունեության մասով՝ ստացել «Դեպոզիտար համակարգի լավագույն հաշվի օպերատոր-պահառու օտարերկրյա արժեթղթերի շուկայում» տիտղոսը: Մրցանակաբաշխության ժամանակ առաջին անգամ ներկայացվել է նաև անհատական խրախուսման «Լավագույն գործընկեր առևտրի մասնակից» նոր անվանակարգը, որտեղ հաղթող է ծանաչվել Ամերիաբանկի գլխավոր դիրեկտոր Արգուման Դալլաբյանը: Հաղթողը որոշվել է գաղտնի բլեյնդային արդյունքում: Հինգերորդ տարին անընդմեջ կազմակերպվող «ՆԱՍՂԻԶ ՕԷՄԷԶՍ Արմենիայի լավագույն անդամ» մրցանակաբաշխությունը ներկայացնում է բորսայում և դեպոզիտարիայում ակտիվ ներգրավվածություն ունեցող և Հայաստանում կապիտալի շուկայի զարգացմանը նպաստող ընկերություններին:

Արվեստ

ԱՄԵՆ ԻՆՉ
ՄԱՍՎՈՐՄԷ
ԻՏ

Արվեստ



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՐՁ

Հարգելի գործընկերներ,

Ամերիաբանկը մշտապես հավատարիմ է մնում կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշներին: Բոլոր շահագրգիռ կողմերի և բաժնետերերի համար թափանցիկ և վերահսկելի միջավայր ապահովելու նպատակով մեր Խորհուրդը շարունակաբար աշխատում է կորպորատիվ կառավարման գործընթացների կատարելագործման և ճիշտ կիրառման ուղղությամբ:

Այդ գործընթացները հենվում են Բանկի ուրույն մշակույթի և համընդհանուր արժեքների, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև կառուցողական մարտահրավերների և համագործակցության վրա: Խորհուրդը շատ կարևոր դեր է խաղում այդ հարցում՝ օրինակ ծառայելով և սերմանելով այդ սկզբունքները Բանկի կառավարման ամենաբարձր օղակներում: Բանկի գլխավոր տնօրենն ու այլ տնօրենները, իրենց հերթին, պատասխանատու են այդ մշակույթը Բանկում տարածելու համար: Կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգն ամուր հիմքեր է ստեղծում Ամերիաբանկի գործունեության համար՝ հանդես գալով որպես հաջողության գրավական: Կորպորատիվ կառավարման համակարգը ապահովում է վերահսկողությունը, հաշվետվողականությունը, ամրապնդում ենք ին և արտաքին հարաբերությունները, վստահություն ենք ձևում մեզ հետ կապված անձանց և գործում ի օգուտ բաժնետերերի երկարաժամկետ շահերի: Խորհրդի և կառավարման համակարգի փիլիսոփայությունը կառուցվում է մի քանի հիմնական գաղափարների շուրջ. Բանկի Խորհրդի նախագահի և գլխավոր տնօրենի պաշտոնները տարանջատված են և չեն կարող զբաղեցվել միևնույն անձի կողմից: Մեր տնօրեններից և բարձր օղակի ղեկավարներից յուրաքանչյուրը Բանկում ունի իր ուրույն դերը՝ որպես իր մասնագիտական կարիերայի կարևորագույն նվաճում, ինչը բացառում է շահերի բախման ցանկացած հավանականություն: Մենք կարևորում ենք Խորհրդի ղիվերսիֆիկացված կազմը՝ թե՛ անդամների փորձի, թե՛ աշխարհագրական

արմատների և թե՛ սեռի տեսանկյունից: Խորհրդի անդամների փոխարինելիությունը Բանկի կայունության ևս մեկ երաշխիք է և գտնվում է անընդհատ վերահսկողության տակ (օրինակ՝ Խորհրդի անդամների գործունեության պարբերական վերլուծության միջոցով): Մենք արժանացել ենք մեր գործընկերների և հաճախորդների վստահությանը, ովքեր գիտեն, որ «Ամերիա» խմբում ձիկները հասցված են նվազագույնի և ներքին գործընթացների հետ մեկտեղ խստորեն վերահսկվում են Խորհրդի կողմից: Խորհրդի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, առաջնորդվելով կորպորատիվ կառավարման նորագույն միջազգային չափանիշներով՝ 2014թ. Բանկը ծավալում աշխատանքներ իրականացրեց՝ վերանայելով Խորհրդի կանոնակարգը և այլ ներքին իրավական ակտեր, ինչը կօգնի բարձրացնել Բանկի գործունեության թափանցիկությունը մեր հայ և օտարերկրացի բաժնետերերի համար: Մենք վստահ ենք, որ մեր Խորհուրդն անշեղորեն հետևում է կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշներին և 2015թ. և այդուհետ կշարունակի աճել և ինքնակատարելագործվել՝ «Ամերիա» խմբի երկարաժամկետ հաջողությունն ապահովելու համար:



Ասդրես Մկրտչյան
Խորհրդի նախագահ



Բոգդան Ֆոն Ռեկովսկի
Խորհրդի անկախ անդամ

Հայ վարդապետ, երաժշտագետ, երգահան և երգիչ Կոմիտասը էթնոերաժշտագրության ռափվորաններից մեկն է: Ուսումնասիրելով և վերծանելով հայկական հնագույն նոտագրությունը՝ խազերի համակարգը նա գրի է առել ավելի քան 3000 հայկական ազգային երաժշտական գործեր: Նա համարվում է հայկական ազգային երաժշտական դպրոցի հիմնադիրը: Կոմիտասի ստեղծագործական աշխատանքը դարձրել է շարունակ ծառայել է որպես բազմաթիվ հետազոտությունների հիմք: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Եվրոպայի բազմաթիվ կոմպոզիտորներ Կոմիտասի երաժշտության միջոցով բացահայտել են ստեղծագործական նոր ուղիներ:



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ

Բանկի Տնօրենների խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը: Խորհրդի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

- ▶ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը
- ▶ ընդհանուր ժողովի նիստերի գումարումն ու օրակարգի հաստատումը
- ▶ Բանկի Տնօրինության անդամների և Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենի ու գլխավոր հաշվապահի նշանակումը
- ▶ ներքին հսկողության չափանիշների և մարմինների ձևավորումը
- ▶ Բանկի կանոնադրական կապիտալի համալրումը, շահաբաժինների վճարման վերաբերյալ առաջարկությունների մշակումը
- ▶ ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և այլն:

Բանկի Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը չի կարող հինգ տարուց պակաս լինել: Համաձայն Բանկի կանոնադրության՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք տիրապետում են Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի 10 և ավել տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Բանկի Տնօրենների խորհրդի կազմում կամ նշանակել իրենց ներկայացուցչին:

Խորհրդի համընդհանուր գերակա պարտականությունն է Բանկի երկարա-

ժամկետ հաջողության ապահովումը՝ բաժնետիրական արժեքի ստեղծման հարցերում Բանկի գործադիր ղեկավարությանն ուղղորդելու միջոցով: Այդ նպատակով Խորհուրդը սահմանում է Բանկի ռազմավարությունը և վերահսկում ղեկավարության կողմից այն իրականացնելու գործընթացը: Իր հիմնական խնդիրը համարելով երկարաժամկետ աճը՝ Բանկն, այնուամենայնիվ, չի անտեսում նաև կարճաժամկետ նպատակները՝ ձգտելով պահպանել երկուսի միջև առողջ հավասարակշռություն: Այդ իսկ պատճառով երկարաժամկետ և միջնաժամկետ, իսկ որոշ դեպքերում նաև կարճաժամկետ նշանակության առավել կարևոր որոշումներն ընդունվում են Բանկի Խորհրդի կողմից: Դրանց թվին են դասվում, մասնավորապես, Բանկի ռազմավարության սահմանումը, ռիսկի ախորժակի հաստատումը, կապիտալին և իրացվելիությանն առնչվող հարցերը, շահերի բախման հավանականությունն առաջացնող խոշոր գործարքների հաստատումը և այլն:

Հաշվի են առնվում նաև ընդունված որոշումների անդրադարձը բոլոր շահագրգիռ կողմերի՝ աշխատակիցների, բաժնետերերի, հաճախորդների, ինչպես նաև շրջապատի վրա: Ռազմավարությունը սահմանելու և իրականացնելու ընթացքում Խորհուրդը հետևում է, որ ղեկավարության կողմից արդյունավետ կերպով կիրառվեն ներքին վերահսկողության և ռիսկերի կառավարման համակարգերը, ինչը թույլ կտա ապահովել Բանկի վերահսկելի և կայուն աճը: Խորհուրդը հավաստիացնում է, որ էական ռիսկերի, այդ թվում՝ սոցիալական, բնապահպանական և էթիկական ռիսկերի բացահայտումը, նրանց գնահատումը և կառավարումը

Բանկում կրում է շարունակական բնույթ: Մինչդեռ Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի և հսկողության ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման համար, Բանկի ղեկավարությունն ստանձնել է դրանց ներդրման և իրականացման պարտավորությունը: Ներքին հսկողության համակարգերի և դրանց արդյունավետության գնահատման պատասխանատվությունը նույնպես կրում է Խորհուրդը:

Խորհուրդը պարտավոր է մշտապես ապահովել իր աշխատանքի պատշաճ կատարման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների համապատասխան պաշար: Խորհրդի արդյունավետության համար առանցքային դեր է խաղում դրա անդամների հասանելիությունը տեղեկատվությանն ու ղեկավարման գործընթացին: Խորհրդի բոլոր անդամները մշտապես ձգտում են ապահովել իրենց մասնակցությունը բոլոր նիստերին, եթե ոչ առկա, ապա հեռակա կարգով: Բացի այդ, յուրաքանչյուր նիստից հետո Խորհրդի նախագահը հանդիպում է ունենում Բանկի գլխավոր տնօրենի հետ՝ նիստի արդյունավետությունը և հետագա քայլերը քննարկելու նպատակով: Խորհրդի անդամները և նախագահը հաճախակի այցելում են Բանկ և շփվում բոլոր օղակների աշխատակիցների հետ, ինչը նրանց հնարավորություն է տալիս տեղում ծանոթանալ ընկերության մշակույթին և արժեքներին, ինչպես նաև գործնական համատեքստ ստեղծում նիստերի ընթացքում քննարկվող հարցերի համար: Իր պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներին Խորհուրդն ուսումնասիրում է ղեկավարության բոլոր գործողությունները՝ դրանց հիմնավորվածությունը գնահատելու նպատակով: Այդ հարցում առավել կարևոր

դեր է խաղում հորհրդի նախագահը, ով հնարավորություն է տալիս հորհրդի բոլոր անդամներին արտահայտել իրենց դիրքորոշումը: Այս մոտեցումը դրականորեն է անդրադառնում Բանկի ընդհանուր արդյունավետության վրա:

ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԹԻՎԸ, ԿԱԶՄԸ, ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՋԱՏՈՒՄԸ

2014թ. և սույն հաշվետվությունը կազմելու պահին Բանկի հորհուրդը բաղկացած էր հինգ անդամներից՝ նախագահ, մեկ անկախ անդամ և երեք անդամ: Խորհրդի կազմը, անդամների թիվը և որակավորումը, ինչպես նաև փոխադասող փորձառությունն ու հմտություններն ամփոփված են անդրադառնում են Խորհրդի արդյունավետության վրա: Մենք պարբերաբար վերանայում ենք Խորհրդի կառուցվածքը՝ հասկանալու համար, թե ինչպիսի մարդիկ են մեզ անհրաժեշտ ներկայում և կարող են անհրաժեշտ լինել ապագայում՝ հաջողության հասնելու համար: Մեր նպատակն է ապահովել կառուցողական քննարկումների և արդյունավետ որոշումների ընդունման համար Խորհրդի ճիշտ կազմը:

Գիտակցելով դիվերսիֆիկացված խորհուրդ ունենալու բոլոր առավելությունները՝ Խորհրդում ընդգրկվել են միայն Բանկը հավուր պատշաճի կառավարելու համար անհրաժեշտ ունակություններով և փորձառությամբ օժտված անձինք: Խորհրդի փոխարինելիությունը պլանավորելով՝ հաշվի են առնվում աշխարհագրական բազմազանությունը, բանկային գործի, ակտիվների կառավարման, խորհրդատվության, ֆինանսների և միջազգային բիզնեսի ոլորտներում հարուստ մասնագիտական փորձը:

Արդյունավետ պլանավորման և փոխարինելիության ապահովման միջոցով հնարավոր է նվազեցնել բարձր որակավորում և հարուստ փորձ ունեցող առանձին մասնագետների՝ ընկերությունից հեռանալու կամ այդպիսիների բացակայության հետ կապված ռիսկերը: Այդ պատճառով 2013թ. Անդրեյ Մկրտչյանը փոխարինեց Ռուբեն Վարդանյանին Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնում: Ռ. Վարդանյանը մնում է թիմի կազմում որպես Խորհրդի անդամ՝ շարունակելով ներդնել իր հարուստ փորձն ու գիտելիքը, ինչպես նաև առաջնորդական հմտությունները Բանկի զարգացման գործում:

Ռազմավարության արդյունավետ և հաջող իրականացման նպատակով Խորհրդի և Տնօրենության կազմում ներդրաված են բացառապես հմուտ և փորձառու մասնագետներ: Գիտակցելով, որ նոր մարդիկ կարող են նոր շունչ հաղորդել առօրյա գործընթացներին և հանդես գալ նոր գաղափարներով՝ բարձր են գնահատվում նաև համբուր բազմամյա փորձ ունեցող անդամները, ովքեր առավել խոր գիտելիք և պատկերացում ունեն համբի ամեն մի գործընթացի մասին: Խորհրդի անդամների փոխարինման օպտիմալ ժամկետն առնվազն հինգ տարին մեկ է:

Խորհրդի արդյունավետ աշխատանքը Բանկի հաջողության հիմնական գրավականներից է: Բանկում գործում է տնօրենների շարունակական զարգացման ծրագիր՝ յուրաքանչյուրի կարիքներին համապատասխան: Մեր նպատակն է ապահովել տնօրենների վերապատասխանումը և զարգացումը՝ շարունակաբար հարստացնելով նրանց փորձը և ոլորտի խորին իմացությունը:

ՇԱՋԵՐԻ ԲԱՆԽԱՆ ԲԱՅԱՌՈՒՄ

Մեր ներքին կանոնակարգերի համաձայն՝ Բանկի Խորհրդի անդամները պարտավոր են խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնք կարող են առաջացնել շահերի բախում Բանկի հետ, եթե առկա չէ Խորհրդի այլ անդամների համաձայնությունը: Շահերի բախում կարող է առաջանալ, մասնավորապես, տնօրենի կողմից այլ ընկերությունում պաշտոն զբաղեցնելու դեպքում: Մենք ընդունում ենք, սակայն, որ տարատեսակ

գործունեությունից ստացված փորձն ու գիտելիքը կարող են անփոխարինելի ներդրում դառնալ Տնօրենների խորհրդի աշխատանքում: Այսպիսով, նախքան այլ ընկերություններում պաշտոն զբաղեցնելը, Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ձեռք բերել այլ անդամների համաձայնությունը և ապահովել երկու աշխատանքների արդյունավետ համատեղումը և ժամանակի ճիշտ բաշխումը, որպեսզի նոր աշխատանքը բացասաբար չանդրադառնա Բանկի նկատմամբ իր պարտականությունների վրա:

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՋԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիաբանկի ներդրողների հետ հարաբերությունների բաժնի հիմնական նպատակը թափանցիկ և հետևողական տվյալների և ինտերակտիվ հաղորդակցության ապահովումն է: Մենք ձգտում ենք բաց երկխոսության մեջ մտնել ֆինանսական կառույցների, ՋԼՄ-ների և բոլոր շահագրգիռ անձանց հետ՝ Բանկի մասին ճիշտ պատկերացում ձևավորելու և ռիսկերն ու հնարավորությունները բացատրելու նպատակով: Ամերիաբանկը մշտապես իրազեկում է բոլոր շահագրգիռ անձանց իր հիմնական արժեքների, ռազմավարության, ռիսկերի և հնարավորությունների, արդյունավետության ցուցանիշների և դրանց փոփոխությունների մասին:





ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



Անդրեյ Սկրտչյան

խորհրդի նախագահ 2013թ. նոյեմբերից

Միաժամանակ նաև զբաղեցնում է «Ամերիա» ընկերությունների խմբի գործադիր տնօրենի պաշտոնը: Ամերիաբանկի հիմնադրման պահից (2007թ.) մինչև 2013թ. նոյեմբերը հանդիսացել է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամ:

Անդրեյ Սկրտչյանի մասնագիտական ուղին ընդգրկում է ավելի քան 18 տարվա փորձ խորհրդատվական և ներդրումային գործունեության ոլորտում: Նա աշխատել է այնպիսի կազմակերպություններում, ինչպիսիք են Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը (GTZ), ԵՄ ԱԴՀ պետություններին տեխնիկական աջակցման ծրագիրը (EU TACIS) և «Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոնը, որի նպատակն է ներդրումային խորհրդատվություն տրամադրել և Հայաստանում բիզնեսի զարգացմանն աջակցել: Անդրեյ Սկրտչյանը «Ամերիա» ներդրումախորհրդատվական ընկերության հիմնադիրն է և ղեկավար գործընկերը: Նա նաև հանդիսանում է Դիլիջանի միջազգային դպրոցի խորհրդի անդամ, Հայաստանի ազգային մրցումակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ և Գործարարության աջակցման խորհրդի անդամ:

Անդրեյ Սկրտչյանի ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրան: Ուսանել է ԱՄՆ Քոլորադոյի համալսարանի տնտեսագիտական բաժնում և Լոնդոնի Քինգսթոուն համալսարանի բիզնեսի դպրոցում:



Ռուբեն Վարդանյան

խորհրդի անդամ 2013թ. նոյեմբերից

Ռուբեն Վարդանյանը Բանկի վերակազմավորման պահից մինչև 2013թ. զբաղեցրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը: Ռուբեն Վարդանյանը հայտնի ներդրումային բանկիր է՝ ավելի քան 21 տարվա փորձով, նշանակալից դեր է խաղացել Ռուսաստանի կապիտալի շուկաների կայացման գործում: Հանդիսանում է Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի հիմնադիր-գործընկեր, խորհրդատվական միջազգային խորհրդի նախագահի տեղակալ, Զարգացող շուկաների հետազոտության ինստիտուտի նախագահ, «ՍԿՈԼԿՈՎՈ» բիզնես-դպրոցի հարստության կառավարման և բարեգործության կենտրոնի փորձագիտական խորհրդի նախագահ, մի շարք կազմակերպությունների խորհրդի անդամ Ռուսաստանում և այլուր, այդ թվում՝ Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածն սպասարկող անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի Տնտեսական խորհրդատվական խորհրդի անդամ:

Նախքան 2012թ. հունվարին Սբերբանկի հետ միավորումը, զբաղեցնում էր Ռուսաստանի և ԱԴՀ առաջին և խոշորագույն ներդրումային բանկերից մեկի՝ «Տրոյկա Դիալոգ»-ի տնօրենների խորհրդի նախագահ - գլխավոր տնօրենի պաշտոնը: Ռուբեն Վարդանյանը նաև անդամակցում է մի շարք ընկերությունների, այդ թվում՝ «ԿԱՍԱԶ»-ի, «ՍԻԲՈՒՐ Զոլդինգ»-ի, «Ջոուկմենթիթեդ»-ի, Ռոսգոստրախի, Ամերիաբանկի և «Միացյալ հացահատիկային ընկերություն» ԲԲԸ խորհուրդներին, հանդիսանում է «Ավիգա Փրոփերթի Ինվեսթորս Ինթերնեշնլ» ընկերության ներդրումային կոմիտեի անդամ: Նա նաև ՌԴ Պետական դումայի նախագահին աջընթեր ներդրումային խորհրդի և Արդյունաբերության և առևտրի նախարարությանն աջընթեր նոր ոլորտներում ներդրումների ռազմավարական խորհրդի անդամ է: Պարոն Վարդանյանը հանդիսանում է International Christian University (Ճապոնիա) համալսարանի և Fundagxio Dom Cabral (FDC) բիզնես-դպրոցի (Բրազիլիա) միջազգային խորհրդատվական խորհուրդների, Ռուսաստանի ազգային տնտեսության և պետական ծառայության նախագահական աշխատակազմի և Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի հոգաբարձուների խորհուրդների անդամ է: Հայ Առաքելական Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է:

2011թ. ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է Սբ. Մեսրոպ Մաշտոց շքանշանով:

Ռուբեն Վարդանյանն ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, որից հետո ուսանել է մի շարք միջազգային ինստիտուտներում և դպրոցներում, այդ թվում՝ INSEAD-ում, Հարվարդի բիզնես-դպրոցում, Յեյլի համալսարանում և Սթենֆորդում:



Նուբար Աֆեյան

խորհրդի անդամ 2010թ. հուլիսից

Նուբար Աֆեյանը Flagship Ventures ընկերության ղեկավար գործընկեր է: Ընկերությունը ներդրումներ է կատարում գործունեության սկզբնական փուլում գտնվող նախաձեռնություններում, և ներկա պահին դրա պորտֆելի արժեքը գերազանցում է 600 մլն ԱՄՆ դոլարը: Ընկերության գործունեության հիմնական ուղղություններն են առողջապահությունը և կայուն զարգացումը: Պարոն Աֆեյանը նաև Flagship Venture Labs տեխնոլոգիական ընկերության նախագահը և գործադիր տնօրենն է. ընկերության կողմից վերջին տասնամյակում հիմնադրվել և գործարկվել է 22 նոր վենչուրային նախաձեռնություն: Պարոն Աֆեյանը նաև Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Սլոունի մենեջմենթի դպրոցում (MIT Sloan School of Management) «ձեռներեցություն» առարկայի ավագ դասախոս է: Վերջին երկու տասնամյակի ընթացքում պարոն Աֆեյանը մասնակցել է կենսաբանական ուղղվածություն ունեցող 20-ից ավել հաջողակ գիտական և տեխնոլոգիական հաստատությունների հիմնադրմանը և կայացմանը: Նա կենսաբանական սարքավորումների և գործիքների արտադրության ոլորտի առաջատար PerSeptive Biosystems-ի հիմնադիրն էր և գործադիր տնօրենը: Applera Corporation-ի կողմից PerSeptive-ի ձեռքբերումից հետո պարոն Աֆեյանը դարձավ Applera-ի գլխավոր փոխնախագահը և տնօրենը, նախաձեռնեց և վերահսկեց Celer Genomics ընկերության ստեղծումը: Ներկայում Նուբար Աֆեյանը հանդիսանում է մի շարք պետական և մասնավոր ընկերությունների խորհրդի անդամ: Նա Flagship-ի ներդրումային պորտֆելի կազմի մեջ մտնող Affinova, BG Medicine, Bind Biosciences, Ensemble Discovery, Helicos BioSciences, Joule Biotechnologies, LS9 և Eleven Biotherapeutics ընկերությունների տնօրեն է: Պարոն Աֆեյանը մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի տեխնոլոգիական նորամուծությունների Deshpande կենտրոնի, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Ուայթեդ ինստիտուտի և Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի խորհրդատվական կոմիտեների անդամ, ինչպես նաև Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և Դիլիջանի միջազգային դպրոցի խորհրդի անդամ է: Հայրենասիրական գործունեության համար պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով: Ստացել է կենսատեխնիկական գիտությունների դոկտորի աստիճան (Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ), բազմաթիվ գիտական հոդվածների և արտոնագրերի հեղինակ է:



Գոռ Նահապետյան

խորհրդի անդամ 2007թ. դեկտեմբերից

Գոռ Նահապետյանը ձեռներեց է, բարերար՝ սոցիալական ձեռներեցության, մարդկային կապիտալի, ստեղծարար ոլորտների և այլընտրանքային կրթության բնագավառներում՝ լայն հետաքրքրություններով: 2006թ.-ից Մոսկվայի ՍԿՈԼԿՈՎՈ կառավարման դպրոցի Համակարգող խորհրդի անդամ է, նաև՝ դպրոցի գլխավոր հիմնադիր անդամներից մեկը: Հանդիսանում է Նաև Մուլտիմեդիա Արտ Թանգարանի դիտորդ խորհրդի անդամ: Պարոն Նահապետյանն իր աշխատանքային գործունեությունն սկսել է «Դիալոգ բանկում» 1992թ.: Մասնակցել է Մոսկվայի բորսայի առաջին սակարկություններին: 1993թ.՝ ընկերության հիմնադրման առաջին օրերից, սկսեց իր աշխատանքը «Տրոյկա Դիալոգ»-ում: Գործունեությունն սկսելով վաճառքների վարչությունում՝ 1994թ. ստեղծում է գործառնական վարչություն, որն էլ հետո գլխավորում է: Հետագայում ղեկավարում էր հատուկ ծրագրերի մշակման բաժինը, որի հիման վրա ստեղծվեց «Տրոյկա Դիալոգ» ակտիվների կառավարման ընկերությունը: 1996թ. պարոն Նահապետյանը ստանձնեց ընկերության տնօրենի պաշտոնը: 2001-2003թթ. պարոն Նահապետյանն զբաղեցրել է «Ռոսգոսստրախ» ԲԲԸ-ի փոխնախագահի պաշտոնը՝ ղեկավարելով աշխատակազմի և հոլդինգի մի շարք ստորաբաժանումների աշխատանքը: Ղեկավարում էր նաև ընկերության ռեբրենդինգի նախագիծը: Պարոն Նահապետյանն անմիջական մասնակցություն է ունեցել Քաղաքային հիփոթեքային բանկի բացմանը՝ Տրոյկա Դիալոգի և «Ռոսգոսստրախ» ԲԲԸ-ի համատեղ նախագծի շրջանակներում: Զբաղեցրել է «Աբերբանկ» կորպորատիվ-ներդրումային բանկի (մինչև 2012թ. հոկտեմբերը՝ Տրոյկա Դիալոգ) նախագահի աշխատակազմի ղեկավարի և կառավարող տնօրենի պաշտոնը՝ վերահսկելով ռազմավարական զարգացման հարցերը, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների՝ հասարակության հետ կապերի, անձնակազմի կառավարման, անվտանգության, մարքեթինգի վարչությունների, կոնսակտային և տեղեկատվական կենտրոնի և ներքին հաղորդակցման վարչության աշխատանքը:

Պարոն Նահապետյանն ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: Ստացել է գործարար կառավարման մագիստրոսի աստիճան Հայաստանի ամերիկյան համալսարանում, մասնակցել է INSEAD բիզնես-դպրոցի դասընթացին:



Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի

Խորհրդի անկախ անդամ 2012թ.
հոկտեմբերից

Համաշխարհային ակտիվների կառավարման ոլորտում ավելի քան 23 տարվա փորձառությամբ՝ Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին հանդիսանում է Fidelity Investments ընկերության զարգացող շուկաների ռազմավարության բաժնի փոխնախագահը և նաև ընկերության պորտֆելի կառավարիչը: Ներկայում կառավարում է ամերիկյան և կանադական ներդրողների մի շարք ինստիտուցիոնալ և մանրածախ ներդրումային հիմնադրամներ՝ զարգացող շուկաներում:

1989թ-ին ընդունվել է Fidelity Investments ընկերության ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների բաժին: 1995թ-ին զարգացող շուկաների պարտքային գործարքների կառավարման խմբի հետ տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների բաժին՝ որպես սովորական պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996թ-ից մինչև 1998թ. կեսերը ընկերության լոնդոնյան գրասենյակում զբաղվել է եվրոպական շուկայում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ՝ միաժամանակ շարունակելով զբաղեցնել վերլուծաբանի իր պաշտոնը: 2002-2004թթ. եղել է զարգացող շուկաների հիմնադրամների՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանների գծով պատասխանատու առաջատար կառավարիչ: 2004թ-ին տեղափոխվել է Բոստոն, ուր ստանձնել է ընկերության զարգացող շուկաներում կապիտալի ներդրումային հիմնադրամների կառավարումը (ներկայումս 4.0 միլիարդ ԱՄՆ դոլար արժեքով):

Պարոն Ֆոն Ռեկովսկին հանդիսանում է Russian Investment Review ամսագրի 2003թ. հունիս-հոկտեմբերի համարում տպագրված Investor's Outlook նյութի հեղինակը: 2001, 2002, 2003 թվականներին հաղթող է ձանաչվել Institutional Investor ամսագրի Best of the Buyside (լավագույն գնորդ) անվանակարգում:

Պարոն Ֆոն Ռեկովսկին ավարտել է Նյու-Յորքի Նահանգային համալսարանն Օլբանիում (SUNY)՝ ստանալով բակալավրի կոչում, ինչպես նաև Հյուսիսարևելյան համալսարանը՝ ստանալով մագիստրոսի կոչում: Ունի նաև ֆինանսների մագիստրոսի աստիճան, որն ստացել է Բրենդայզ համալսարանում:



Արտակ Յանեսյան

Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն

2007թ. հոկտեմբերին ստանձնել է «Հայներարտբանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը: Արտակ Հանեսյանն իր աշխատանքային ուղին սկսել է 1993թ. Պետական գյուղ-արդյունաբերական տեսչությունում որպես պլանային բաժնի տնտեսագետ՝ այնուհետև աշխատելով «Արմինփոտբանկ» ՓԲԸ-ում՝ որպես ինժեներ: Փոխելով աշխատանքի բնույթը՝ նա ՀՀ Վեներտրական բանկում ստանձնում է Վերահսկողության, կարգավորման և լիցենզավորման վարչության մասնագետի, ավագ մասնագետի, իսկ այնուհետև՝ Վերահսկողության վարչության Առաջին բաժնի պետի պարտականությունները (1995-1998թթ.): Ընդլայնելով փորձառությունը բանկային համակարգում՝ տեղափոխվել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ՝ սկզբում որպես Ֆինանսական գլխավոր վարչության պետ, հետագայում՝ Վարչության նախագահի տեղակալ (1998-2006թթ.): Ցուցաբերելով աշխատանքային լավագույն հատկանիշները՝ Հանեսյանն ստանձնել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի պաշտոնը (05.2006-10.2007):



Գևորգ Թառումյան

Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական տնօրեն

Պարոն Թառնույանն աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 2012թ. հունիսից՝ որպես Գլխավոր տնօրենի տեղակալ և Ֆինանսական տնօրեն: 2012թ. օգոստոսին նշանակվել է Տնօրինության անդամ: Բանկային համակարգում իր գործունեությունն սկսել է 1994թ. ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկողության ծառայությունում, որտեղ զբաղեցրել է տարբեր դեկավար պաշտոններ, ինչպես նաև իրականացրել է Միջին Ասիայի և Կովկասի բանկերի վերահսկողության բազելյան կոմիտեի՝ Հայաստանում տարածաշրջանային խմբի համակարգումը: 1999թ. տեղափոխվել է «Հայներարտբանկ» ՓԲԸ՝ որպես Ֆինանսական տնօրեն, իսկ 2006թ. նշանակվել է նույն բանկի Գլխավոր տնօրենի տեղակալ: 2007թ. ապրիլից աշխատել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Գլխավոր տնօրեն-տնօրինության նախագահի տեղակալ և Ֆինանսական դեպարտամենտի տնօրեն: 2008թ. ապրիլին տեղափոխվել է «Էլշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ՝ որպես Գլխավոր ֆինանսական տնօրեն: 2012թ. մարտի 6-ին նշանակվել է «Էլշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ: Բանկային համակարգում աշխատանքը Գևորգ Թառնույանը համատեղել է դասախոսական գործունեության հետ՝ բանկային համակարգի աշխատողների համար կարողալով դասախոսություններ ֆինանսական վերլուծության և ռիսկերի կառավարման թեմաներով: Հանդիսանում է բանկային գործ, ֆինանսական վերլուծություն և ռիսկերի կառավարում թեմաներով մի շարք դասագրքերի հեղինակ և համահեղինակ:



Գագիկ Սահակյան

Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն

Ամերիաբանկում աշխատանքային գործունեության ընթացքում Գազիկ Սահակյանն զբաղեցրել է խորհրդականի (2008-2010թթ.), Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրենի (2010-2012թթ.), Տնօրնության անդամ-Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրենի (2012թ-ից առ այսօր) պաշտոնները: Գազիկ Սահակյանը միացել է «Ամերիա» ՓԲԸ-ին 1999թ. և այդուհետ թիմի գլխավոր անդամներից է՝ սկզբից ի վեր մասնակից լինելով ընկերության զարգացման բոլոր գլխավոր փուլերին: «Ամերիա» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես, աշխատել է որպես ավագ խորհրդակատու և կառավարման խորհրդատվության ղեկավար (1999 - 2012թթ.): Կուտակելով բավականին մեծ փորձ՝ նա տեղափոխվեց «Ամերիաբանկ» ՓԲԸ, որտեղ աշխատում է առ այսօր:



Արման Բարսեղյան

Տնօրինության անդամ, Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն

Պարոն Բարսեղյանը ստանձնել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի մանրածախ գործառնությունների գծով տնօրենի պաշտոնը 2012թ. հունիսին: 2012թ. սեպտեմբերին նշանակվել է Տնօրինության անդամ:

Արման Բարսեղյանն իր աշխատանքային ուղին սկսել է 1997 թ. հոկտեմբերին «Էջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում (նախկինում Միդլենդ Արմենիա Բանկ ԲԸ)՝ որպես Ֆինանսական վերահսկողության բաժնի մասնագետ: Այնուհետև զբաղեցրել է տարբեր պաշտոններ, մասնավորապես՝ Ֆինանսական վերահսկողության բաժնի գործառնությունների կառավարիչ (2001-2004 թթ.), մասնաձյուղի կառավարիչ (2004-2008 թթ.) և Մանրածախ ծառայությունների ղեկարտամենտի տնօրեն (2008-2012 թթ.):



Տիգրան Զրբաշյան

Տնօրինության անդամ, Զարգացման գծով տնօրեն

Պարոն Զրբաշյանն ընդունվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ որպես խորհրդական (2008թ. հուլիս), հետագայում զբաղեցրել հետևյալ պաշտոնները՝ Զարգացման գծով տնօրեն (2008թ. օգոստոս - նոյեմբեր), Տնօրինության անդամ - Զարգացման գծով տնօրեն (2008թ. նոյեմբեր - 2011թ. դեկտեմբեր), Զարգացման գծով տնօրեն (2011թ. դեկտեմբեր - 2013թ. հունիս), Տնօրինության անդամ - Զարգացման գծով տնօրեն (2013թ. հունիսից առ այսօր): Զբաղեցրել է ավագ տնտեսագետի և ղեկավարի պաշտոններ AEPLAC Տնտեսական քաղաքականության և օրենսդրական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնում (DMI Associates-ի կողմից գլխավորած կոնսորցիումի նախագիծ), Steinbeis GmbH & Co. KG für Technologietransfer ընկերությունում, ՄԱԿ-ի զարգացման ծրագրում, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունում, ԱՄՆ ՄՀԳ-ի կողմից ֆինանսավորվող Կրթության զարգացման ակադեմիայում, Երևանի բորսայում և «Սեդ Մարսեդ» ներդրումային խորհրդատվական ընկերությունում:

Հեղինակել է ավելի քան 130 գիտական հոդվածներ և հրապարակումներ ինստիտուցիոնալ տնտեսագիտության, արդյունաբերական տնտեսագիտության, ներդրումային և ֆինանսական շուկայի զարգացման, առևտրային քաղաքականության զարգացման, մակրոտնտեսական տեսության, Հայաստանի՝ ԵՄ-ին ինտեգրման և ԱՀԿ-ին անդամակցության խնդիրների վերաբերյալ, որոնք տպագրվել են տեղական և միջազգային ամսագրերում և հանդեսներում:



Սամվել Աղաբաբյան

Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար

2007թ. հոկտեմբերին ընդունվել է աշխատանքի «Հայնեբարտբանկ» ՓԲԸ-ում՝ ներկայումս՝ Ամերիաբանկ, որտեղ սկզբում զբաղեցրել է Գլխավոր տնօրենի՝ անվտանգության գծով խորհրդականի (2007թ. հոկտեմբեր - 2007թ. դեկտեմբեր), այնուհետև Անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնները: 2012թ. փետրվարից առ այսօր հանդիսանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության անդամ՝ միաժամանակ զբաղեցնելով Անվտանգության ծառայության ղեկավարի պաշտոնը: 1996-2007թթ. աշխատել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունում:



Բուրաստան Մովսիսյան

Տնօրինության անդամ, տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն

Բուրաստան Մովսիսյանն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2013թ. սեպտեմբերից՝ որպես Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն: 2014 թ. հունիսի 11-ին նշանակվել է Տնօրինության անդամ - Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն:

Իր աշխատանքային ուղին սկսել է 1996թ. մարտ ամսին «ԱրմենՏել» ՓԲԸ-ում, որտեղ աշխատել է մինչև 2013թ.՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ, այդ թվում՝ Շարժական կապի վարչության պետի, Վաճառքի տնօրենի և Հաճախորդների սպասարկման ծառայության ղեկավարի պաշտոնները: Անմիջական և առանցքային մասնակցություն է ունեցել կապի ոլորտում մի շարք նախագծերի ներդրման գործում, ներառյալ բջջային կապի և ռոմանիզի ծառայությունները:



Գոհար Խաչատրյան

Տնօրինության անդամ, գլխավոր հաշվապահ

Ընդունվել է «Հայներարտբանկ» ՓԲԸ, ներկայումս՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ, որտեղ աշխատելով առ այսօր, զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ Հաշվեկշիռների և հաշվետվությունների վերլուծության բաժնի պետ (2000թ.), Ֆինանսական հաշվետվությունների և ծախսերի վերահսկման վարչության պետ (2000-2001թթ.), Կառավարչական հաշվապահության վարչության պետ (2001-2003թթ.), գլխավոր կառավարչական հաշվապահ (2003-2006թթ.), գլխավոր հաշվապահ-կառավարչական հաշվապահության ղեկավար (2006-2008թթ.), Տնօրինության անդամի ժամանակավոր պաշտոնակատար-գլխավոր հաշվապահ (2008 մարտ - հունիս), Տնօրինության անդամ-գլխավոր հաշվապահ (2008թ. հունիսից առ այսօր):

Գոհար Խաչատրյանն իր աշխատանքային ուղին սկսել է ՀՀ Կենտրոնական բանկում, որտեղ զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ Գործառնական վարչության հաշվեգործառնական բաժնի առաջին կարգի հաշվապահ (1991-1992թթ.), Գործառնական վարչության տնտեսագիտական վերլուծությունների բաժնի առաջին կարգի տնտեսագետ, այնուհետև գլխավոր տնտեսագետ (1992-1994թթ.), Բանկերի և ֆինանսավարկային կազմակերպությունների վերահսկողության և աուդիտի վարչության աուդիտի բաժնի առաջատար մասնագետ (1994թ.), Բանկերի վերահսկողության, կարգավորման և լիցենզավորման վարչության տնտեսական վերլուծությունների և ուսումնասիրությունների բաժնի առաջատար մասնագետ (1994-1995թթ.), Վերահսկողության, կարգավորման և լիցենզավորման գլխավոր վարչության հաշվետվությունների ընդունման և հաշվապահական մեթոդոլոգիայի մշակման բաժնի առաջատար մասնագետ (1995-1998թթ.), Վերահսկողության վարչության Հաշվետվությունների ընդունման և փաստաթղթային վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ (1998-2000թթ.): Այնուհետև շարունակել է իր աշխատանքային ուղին «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում (ներկայումս՝ Ամերիաբանկ):



Արթուր Բաբայան

Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն

Պարոն Բաբայանը նշանակվել է Ամերիաբանկի Տնօրինության անդամի պաշտոնակատար (2013 թ. նոյեմբերի - դեկտեմբեր), ապա Տնօրինության անդամ-առևտրային գործառնությունների գծով տնօրեն (2013 թ. դեկտեմբերից առ այսօր):

Բանկային համակարգում իր մասնագիտական ուղին սկսել է 1999թ. «Հայներարտբանկ» ՓԲԸ-ում, ներկայումս՝ Ամերիաբանկ: Զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ Արտարժույթային և ֆոնդային գործառնությունների վարչության ղիլեր (1999թ. նոյեմբերից-2001թ. հունվար), գլխավոր ղիլեր (2001թ. հունվարից-2002թ. հունիս), Դիլինգային կենտրոնի ղեկավար՝ (2002թ. հուլիսից-2013թ. հոկտեմբեր), առևտրային գործառնությունների գծով տնօրեն (2013թ. նոյեմբերից առ այսօր):



Անդրանիկ Բարսեղյան

Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ում աշխատանքի է անցել 2009թ. հունիսից՝ որպես Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար, իսկ 2009թ. դեկտեմբերին նշանակվել Բանկի Տնօրինության անդամ:

Պարոն Բարսեղյանն իր աշխատանքային ուղին սկսել է ուսանողական տարիներին՝ Հայաստանի պետական ծարտարագիտական համալսարանի հաշվիչ տեխնիկայի ֆակուլտետում՝ որպես լաբորանտ: Ընդունվել է աշխատանքի «Հայագրոբանկ» ԲԲԸ-ում՝ որպես Բանկային տեխնոլոգիաների ավտոմատացման վարչության առաջին կարգի, այնուհետև՝ ավագ և առաջատար մասնագետ, Իրացվելիության և ռեսուրսների կառավարման բաժնի գլխավոր տնտեսագետ և այնուհետև՝ բաժնի պետ, Բանկային ռիսկերի կարգավորման վարչության պետ, Ավտոմատացման վարչության պետ (1995-2002թթ.): 2003-2009թթ. աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես Հաշվետվությունների և վերլուծությունների բաժնի պետ, այնուհետև՝ Ռիսկերի կառավարման վարչության պետ և Բանկի Վարչության անդամ:


Պարոն Բարսեղյանը մի շարք գիտական հոդվածների և հրապարակումների, այդ թվում՝ բանկային կառավարման խնդիրներին վերաբերող նյութերի (նաև միջազգային) հեղինակ է: Հանդիսանում է EURO ֆինանսական մոդելավորման եվրոպական աշխատանքային խմբի անդամ (Erasmus համալսարան, Ռոտերդամ):



ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԱՍՎՈՒՄ Է
ԻՑ

Առանցք

Առանցք



ՄԵՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ



Անկեղծ, ստեղծարար, նվիրված և բարձր որակավորում ունեցող մասնագետները մեր գործունեության գլխավոր ակտիվներից են՝ երկարաժամկետ աճի և զարգացման հիմնաքարը: Մեզ հաջողվել է ձևավորել երիտասարդ և ակտիվ մասնագետների միասնական թիմ: Մեր հաջողության հիմնական գրավականը երիտասարդ, բայց առաջնորդ, փորձառու, նպատակասլաց ու նվիրված մասնագետներից կազմված թիմի հաջողության հասնելու ձգտումն ու մեծ կամքն է:


Մեր պրոֆեսիոնալ ԵՐԱԶԱՆՔԻ թիմի անդամներն իրենց ներուժով, թիմային գաղափարախոսությամբ, նախաձեռնողականությամբ չեն վախենում դժվարություններից և ամենայն նվիրվածությամբ ու պատասխանատվությամբ կարողանում են ծավալել արդյունավետ գործունեություն և հաղթահարել բոլոր խոչընդոտները:

Մենք ողջունում ենք եռանդով լի, նվիրված, համարձակ ու նպատակասլաց անձանց և պատրաստ ենք ուսուցանել նրանց՝ փոխանցելով միաժամանակ և՛ տեսական, և՛ գործնական գիտելիքներ՝ աջակցելով նրանց մասնագիտական առաջխաղացմանը: Մենք հնարավորություն ենք ստեղծում մեր աշխատակիցների համար՝ շարունակելու իրենց կրթությունը և բարձրացնելու որակավորումը ՀՀ և արտերկրի ծանաչված ուսումնական հաստատություններում և դրա համար ֆինանսավորում ենք:


Հայերը պատմականորեն տեղակայված են եղել խոշոր գերտերությունների խաչմերուկում և եղել քաղաքական ճնշման ներքո: Ուստի, հայերն ունեն համախմբվելու և արդարության ու խաղաղության համար պայքարելու յուրահատուկ ունակություն: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ձևավորվեցին հայ ֆիդայական խմբերը: Զաղաքացիական անձինք, կամավոր կերպով լքում էին իրենց ընտանիքները՝ միավորվելով ինքնապաշտպանական խմբերում: Նրանց հիմնական նպատակը Հայաստանի անկախության ապահովումն էր: Հայ ֆիդայիները եղել են ապագա հայկական բանակի առանցքը: Նրանց կամքի ուժը, ռազմավարական մտածողությունը, կարգապահությունն ու վճռականությունը մշտապես եղել են հույսի ճրագ և ծառայել որպես օրինակ միլիոնավոր հայերի համար:



ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՄԵԿ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ՇԱՅՈՒՅԹԸ, ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ



ՄԵԿ ԱՇԽԱՏԱԿՑԻՆ ԲԱԺԻՆ ԸՆԿՆՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԸ, ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ




▶ Ամերիաբանկ

▶ Բանկային ոլորտ


ԱՇԽԱՏՈՒԺԻ ԲԱՇԽՈՒՄ ԸՍՏ՝

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ




ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ


60 ՄԱՐԶԵՐ




ՏԱՐԻՔԻ



ՊԱՇՏՈՆԻ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ



Մենք վստահ ենք, որ ցանկացած ընկերության կորպորատիվ մշակույթը կերտում են առաջնորդները, ովքեր նաև արդյունավետության շարժիչ ուժն են:

Բացի արդյունավետության կիսամյակային գնահատումից, յուրաքանչյուր տարի մեր բոլոր աշխատակիցներն անցնում են իրենց անձնական հատկանիշների գնահատում 360 աստիճան մեթոդով: Այս մեթոդը թույլ է տալիս բացահայտել իսկական առաջնորդների և խրախուսել գերազանց արդյունքների ապահովումը: Այս մեթոդի առավելությունն այն է, որ ինքնագնահատումից բացի, յուրաքանչյուր աշխատակից կարողանում է տեսնել իր անձի համապարփակ ընկալումն այլ անձանց կողմից և կազմել ամբողջական պատկեր:

Առաջնորդության զարգացման ռազմավարության շրջանակներում 2014թ. մենք կազմակերպեցինք Առաջնորդության զարգացման աշխարհի խոշորագույն կենտրոններից մեկի՝ INSEAD բիզնես-դպրոցի պրոֆեսոր, KDVI առաջնորդության զարգացման հանրաժանաչ խորհրդատվական ընկերության նախագահ Մանֆրեդ Կետ դե Վոլենի վարպետության դասընթացը խմբի միջին և բարձր օղակների ղեկավարների համար: Վարպետության դասի մասնակիցների ցանկում ներառված էին նաև խմբի հաճախորդները և

գործընկերները, պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Երկու օր տևողությամբ այս դասընթացը հնարավորություն տվեց ավելի լայն պատկերացում կազմել բարձր արդյունավետության նախապայմանների, կորպորատիվ մշակույթի առանձնահատկությունների և փոփոխությունների իրականացման վերաբերյալ:

«Ամերիա» ընկերությունների խումբը, կարևորելով ղեկավարների արդյունավետ կառավարման հմտությունները և բարձրակարգ մասնագետների առկայությունը, առանձնահատուկ ուշադրության է արժանացնում անձնակազմի մասնագիտական աճը և զարգացումը, ուստի նման միջոցառումները կրում են ամենամյա բնույթ: Նախորդ տարիներին առաջնորդության վերաբերյալ վարպետության դասընթացներ և քննարկումներ են անցկացվել «Սկոլկովո» կառավարման դպրոցի հետ համատեղ՝ «Զելլոգ» կառավարման դպրոցի կառավարման պրոֆեսոր, «Բեռլինի ստեղծագործ առաջնորդության» դպրոցի պատվավոր

դեկան Պիեր Կասսի, «Սկոլկովո» կառավարման դպրոցի ղեկավարների վերապատրաստման ծրագրի տնօրեն Ելիզավետա Սադովայի և այլոց մասնակցությամբ: Ուշագրավ է, որ բանկի խորհրդի անդամները, ովքեր հարուստ միջազգային փորձ ունեն, պարբերաբար հաղորդակից են դարձնում անձնակազմին առաջնորդության և կառավարման իրենց պատկերացումներին և առկա խնդիրներին: Իրենց փորձով և առաջնորդության գաղափարներով հանդես են եկել Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի գործընկեր-հիմնադիր և Միջազգային խորհրդատվական խորհրդի փոխնախագահ Ռուբեն Վարդանյանը, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Սլոունի մենեջմենթի դպրոցի «Ձեռներեցություն» առարկայի ավագ դասախոս Նուբար Աֆեյանը, Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի շրջանավարտների հետ հարաբերությունների խորհրդի նախագահ Գոռ Նահապետյանը, մի շարք ընկերությունների հիմնադիր-տնօրեն, Fidelity Investments ընկերության պորտֆելի կառավարիչ Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին:

ԱՄԵՐԻԱ ՍԵՐՈՒՆԴ

2014 թ. Ամերիաբանկն իրականացրեց «Ամերիա Սերունդ» 3-րդ ծրագիրը, որը 2012թ. սկսած մեծ մասսայականություն է վայելում երիտասարդների շրջանում: «Ամերիա Սերունդ»-ը հնարավորություն է տալիս 20-25 տարեկան նորավարտ և աշխատանքային փորձ չունեցող երիտասարդներին ստանալու տեսական և գործնական գիտելիքներ ֆինանսական

ուղղությամբ, մասնավորապես՝ բանկային գործի վերաբերյալ, աշխատանքային միջավայրում շփվելու փորձառու մասնագետների հետ, ծանոթանալու կորպորատիվ մշակույթի առանձնահատկություններին և իրենց աշխատանքային ուղին սկսելու Ամերիաբանկում:

Նախորդ տարիներին անցկացրած 3 ծրագրերի արդյունքում ավելի քան 70 երիտասարդ մասնագետներ արդեն իսկ աշխատանքի են անցել Ամերիաբանկի տարբեր ստորաբաժանումներում:

Առողջություն

ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԱՀՄԱՆՈՒՄ Է
ԻՑ

Առողջություն

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



2014թ. ևս Ամերիաբանկի համար դինամիկ և կայուն զարգացման տարի էր, չնայած տարածաշրջանի աշխարհաքաղաքական և տնտեսական անկայունությանը: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի գործունեությունն ուղղված էր՝

- ▶ Ռիսկի ախորժակի հայեցակարգի մշակմանն ու ներդրմանը
- ▶ Ռիսկերի և կապիտալի համարժեքության արդյունավետ կառավարմանը
- ▶ Վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացման նվազեցմանը
- ▶ Պորտֆելի դիվերսիֆիկացմանը, այն է՝ մանրածախ վարկավորման ընդլայնմանը
- ▶ Շուկայական ռիսկերի կառավարմանը ռիսկի ընդունելի ախորժակի սահմաններում
- ▶ Իրացվելիության օպտիմալ կառավարմանը, Բանկի գործառնական ռիսկերի կառավարման գործող մոդելի արդյունքների համակարգմանը
- ▶ Բանկի՝ ռիսկերի բացահայտմանն ուղղված հսկողությանը և աուդիտին:

Հաշվետու տարում Բանկի գործունեությունը ծավալվում էր ռիսկի ընդունելի սահմաններում: Առաջնահերթ կարևորություն տալով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությանը՝ Ամերիաբանկը 2014թ. ևս հետամուտ էր գործող համակարգերի, մոդելների և մեթոդաբանության բարելավմանը և զարգացմանը:

Միջնադարյան հայկական բժշկության հիմնադիր, բժշկապետ Մխիթար Հերացին գրել է մարդակազմությանը, կենսաբանությանը, ախտաբանությանը, դեղագիտությանը վերաբերող աշխատություններ: Հայ բժշկապետը մեծ նշանակություն է տվել ինչպես արտաքին միջավայրի անբարենպաստ գործոններին, այնպես էլ ներքին ազդակներին:



ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿ

Ինչպես նախորդ տարիներին, 2014թ. ևս Ամերիաբանկում վարկային ռիսկերի կառավարումը հանդիսանում էր կարևոր ռազմավարական խնդիր: Հաշվետու տարում հատուկ ուշադրություն էր դարձվում մանրածախ վարկավորման ընդլայնման և Բանկի ունիվերսալացման միջոցով վարկային ռիսկերի դիվերսիֆիկացմանը, դրանց կառավարման համակարգի կատարելագործմանը: Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքում ներկայացված էին տնտեսության բազմաթիվ ճյուղեր՝ կենտրոնացման ցածր մակարդակով:

Բանկը կարողացել է նախապես կանխել որոշ ռիսկեր՝ մի շարք դեպքերում բացահայտելով արտարժույթային ռիսկերի ազդեցությունը կրող ընկերությունները, որոնք, չունենալով սթրես-թեստերի դիմադրելու մեխանիզմ, չէին կարողանում դիմակայել արտարժույթային տատանումներին: Դա հնարավոր դարձավ ռիսկերի կառավարման ձիշտ համակարգերի և գործիքների շնորհիվ, որոնց թվում են վաղ հայտնաբերման համակարգերը, ռիսկի հիմնական ցուցանիշները, սթրես-թեստերը և այլն: Բանկը նաև բացահայտեց վարկային պորտֆելի թույլ կողմերը և պարբերական վերահսկողություն ապահովելու նպատակով ներդրեց շուկայի մոնիթորինգի հավելյալ համակարգեր: Որպես հավատարիմ գործընկեր՝ Ամերիաբանկն իր պարտաճանաչ հաճախորդներին ներկայացրեց մի շարք ձևեր՝ սխեմաներ՝ արտարժույթային ռիսկերը կանխելու և նվազեցնելու համար:

Բանկը յուրաքանչյուր ամիս տարբեր սցենարներով սթրես-թեստեր է իրականացնում՝ շուկայական, վարկային, գործառնական և իրացվելիության ռիսկերի հնարավոր ազդեցությունը գնահատելու համար: Այդ թեստերի արդյունքները հետազայում հաշվի են առնվում Բանկի ղեկավարության կողմից գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող որոշումների ընդունման ժամանակ: 2014թ. Բանկը վերանայեց կիրառվող սթրես-թեստերի տեսակները և ներկայացրեց նոր սթրես-թեստեր, այդ թվում՝ միաժամանակ մի քանի ռիսկերի ի հայտ գալու սցենարները: Ռուսաստանի, ինչպես նաև Հայաստանի շուկաներում բացասական զարգացումները և դրանց արդյունքում եկամտաբերության կորի ու արտարժույթային փոխարժեքի կտրուկ փոփոխությունը ցույց տվեցին, որ ճգնաժամի հնարավոր ազդեցությունը շուկայի ցուցանիշների վրա մինչ այդ թերագնահատվում էր, ուստի Բանկը վերանայեց սթրես-թեստերի ձևերը և ռիսկերի պարամետրերը:

Ընդհանուր վարկային ռիսկի առումով 2014թ. Ամերիաբանկն ապահովեց ոչ

միայն կապիտալի համարժեքության բարձր մակարդակ, այլև ռիսկերին դիմակայելու ամրության զգալի պաշար: Տարեվերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը կազմում էր ակտիվների 72%-ը, իսկ կապիտալի համարժեքության գործակիցը՝ 13.14%: Բանկի վարկային պորտֆելի աճը թելադրում էր վարկային ռիսկերի բացահայտման, նվազեցման, կառավարման և մոնիթորինգի համակարգի արդիականացում: Հաշվի առնելով վարկային քաղաքականության վերանայումը դեպի մանրածախ վարկավորման ինտենսիվ ընդլայնում՝ հաշվետու տարվա ընթացքում:

► Բանկը կիրառեց ցուցանիշների (պարտքի սպասարկման գործակից, «գրավ/վարկ» հարաբերակցություն, իրացվելիություն, պարտավորությունների հարաբերությունը եկամտին, մնացորդային եկամուտ և այլն) վրա հիմնված սթրես-թեստերի մոտեցում՝ արտարժույթային ցնցումներին արագ արձագանքելու նպատակով:

► Վերանայվեց մանրածախ վարկային հայտերի սպասարկման համակարգը, և ներդրվեց դրանց վարկային ռիսկի գնահատման նոր մեթոդաբանություն:

► Կատարելագործվեց պորտֆելի մակարդակով վարկային ռիսկի մոնիթորինգի, հսկողության և վերլուծության համակարգը (ըստ պրոդուկտների, մասնաճյուղերի, որոշում կայացնողների, վարկային մասնագետների, տնտեսության ճյուղերի, շեղումների տեսակի):

► Կատարելագործվեցին վաղ հայտնաբերման ցուցանիշները և վարկային ռիսկի հիմնական հայտանիշները, մանրածախ վարկավորման գործընթացում ներդրվեց ԱՋԸԱ-Սքոր ազգային սքորինգային համակարգը:

Կորպորատիվ վարկավորման ոլորտում.

► Բանկը ներդրեց վարկային հայտերի հետ կապված վարկային ռիսկերի գնահատման նոր մեթոդաբանություն, կատարելագործվեցին վարկառուների վարկունակության (վարկային ռիսկի) գնահատման չափանիշները:

► Բարելավվեցին վարկային պորտֆելի մոնիթորինգի համակարգը/մեթոդաբանությունը, մոնիթորինգի միջոցով վարկային ռիսկի նվազեցման մոտեցումները:

► Բանկը շարունակեց կատարելագործել կորպորատիվ վարկերի պորտֆելային վերլուծության գործընթացը, մշակվեցին կորպորատիվ վարկառուների ռիսկի վարկանիշի համակարգեր:

► Կատարելագործվեցին վարկավորման և վարկային ռիսկի գնահատման ընթացակարգերը, գործընթացները և մեթոդները:

Կապիտալի համարժեքության գնահատման և պլանավորման պահանջները խստացվեցին: Մասնավորապես, շուկայական տատանումների ժամանակ անվտանգության պաշար ստեղծելու նպատակով ներդրվեցին ավելի խիստ սթրես-թեստեր կապիտալի և ռիսկերի գնահատման գծով:

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Շուկայի կարևորագույն բնութագրիչների՝ եկամտաբերության կորի և փոխարժեքի վտանգավոր տատանումների ազդեցության ներքո Բանկը մշակեց և վերահսկեց ռիսկի մի շարք պարամետրեր, որոնք ապահովում էին Բանկի գործունեությունը ռիսկի ցածր գոտում: Ամենավտանգավոր ռիսկերից էին պարտատոմսերի պորտֆելի ժամկետայնությունը, բացասական ձեռքվածքը, փոփոխական տոկոսադրույքով չհեջավորված պորտֆելը, որոնք կառավարվում էին՝ հաշվի առնելով Բանկի ռիսկի ախորժակի չափը:

2014թ. Բանկը մշակեց ռիսկի ախորժակի հայեցակարգը և սահմանեց ռիսկի ախորժակի չափի ըստ ռիսկի տեսակների, ներգրավված մասնագետների և պատասխանատու անձանց: Ներդրվեցին մի շարք նոր պարամետրեր: Շուկայական ռիսկերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկն ամբողջությամբ վերանայեց շուկայական ռիսկերի կառավարման քաղաքականությունը: Ներկայացվեց շուկայական ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդական ցուցումը, մշակվեց առևտրային ռիսկերի կառավարման հայեցակարգը: Բանկը վերանայեց գործընկեր ֆինանսական հաստատությունների վարկային ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը՝ ներդնելով ավելի ձկուն և ճշգրիտ մոտեցումներ:

Կարևորելով շուկայական և գնային ռիսկերի հնարավոր ազդեցությունը՝ Բանկը գործում էր ռիսկի զսպված ախորժակի սահմաններում: Բանկում պարբերաբար անցկացվում էին փոխարժեքի անբարենպաստ տատանումների ազդեցության սթրես-թեստեր, որոնք ցույց տվեցին, որ Բանկը համարյա զերծ է արժույթային ռիսկերից, բացառությամբ փոխարժեքի՝ կապիտալի համարժեքության ցուցանիշի վրա ազդեցությունից, որը բացատրվում է նրանով, որ հաշվարկներում արտարժույթային ակտիվների կշիռը կազմում է 150%: Բայց և այդպես,

Բանկի կապիտալի համարժեքության կառավարելի նորմատիվի պաշարը բավարար էր փոխարժեքի անգամ զգալի տատանումներին դիմակայելու համար՝ միաժամանակ մնալով անընդհատ հսկողության տակ և ենթարկվելով սթրես-թեստերի:

2014թ. անշարժ գույքի գները մնում էին կայուն՝ չնայած որոշ տատանումների, սակայն տեղական ֆինանսական շուկայում ի հայտ եկած ճգնաժամի պատճառով տարեվերջին 2015թ. կանխատեսումները կտրուկ փոխվեցին: Այդ կապակցությամբ Բանկը միջոցներ ձեռնարկեց գրավի ընդունման պայմանները և քաղաքականությունը խստացնելու ուղղությամբ՝ ձկուն մնալով, սակայն, իր ամենավստահելի հաճախորդների հանդեպ:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿ

Ողջ հաշվետու տարվա ընթացքում Բանկի իրացվելիության նորմատիվներն ունեին ամրության բավարար պաշար՝ ապահովելով Բանկի անխափան գործունեությունը: ՀՀ ԿԲ նորմատիվների կայունությունը ևս ապահովված էր ամրության զգալի պաշարի հաշվին:

- ▶ ՀՀ ԿԲ ընդհանուր իրացվելիության նվազագույն նորմատիվը կազմում է 15%, մինչդեռ Ամերիաբանկի ցուցանիշը տարեվերջի դրությամբ 25.6% էր:
- ▶ ՀՀ ԿԲ ընթացիկ իրացվելիության նվազագույն նորմատիվը կազմում է 60%, Ամերիաբանկի ցուցանիշը՝ 94.34%:

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Հիմնական գործառնական ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, ներառում են արտաքին միջավայրի անբարենպաստ փոփոխությունների ռիսկերը, համակարգերի աշխատանքի և դրա՝ մարդկային գործոնով պայմանավորված խափանումների ռիսկը, ինչպես նաև դինամիկ զարգացող բանկերին բնորոշ ներքին գործընթացների կազմակերպմանն առնչվող ռիսկերը:

Ռիսկերի կառավարումը Բանկում խաղում է պրոակտիվ դեր: Մենք հետամուտ ենք նվազագույնի հասցնել ինչպես Բանկի բնականոն գործունեության ընթացքում, այնպես էլ արտաքին իրադարձությունների ազդեցության ներքո առաջացող վնասը՝ ապահովելով ռիսկերի արդյունավետ կառավարում Բանկի բոլոր մակարդակներում: Այդ նպատակով պարբերաբար իրականացվում են ռիսկերի

բացահայտմանն ու գնահատմանն ուղղված հետևողական աշխատանքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է մեկ միասնական համակարգի միջոցով, որի հիմքում ընկած է հսկողության մեթոդների ընտրության ընթացքում ռիսկի և օգուտի հարաբերակցությունը:

Գործառնական ռիսկերի կառավարումը Բանկում հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- ▶ Գործընթացների մանրամասն նկարագրում
- ▶ Իրավասությունների և սահմանափակումների հստակ սահմանում
- ▶ Շահերի բախման բացառում
- ▶ Հաշվետվողականության հստակ մեխանիզմ
- ▶ Կրկնակի ստուգման սկզբունք և այլն:

Բանկը նաև հաշվարկել է պրոդուկտների նշանակալիությունը և Բանկի՝ դրանց գործառնական ռիսկերի նկատմամբ զգայունությունը: Մենք նաև ներդրել ենք կապիտալի՝ ըստ պրոդուկտների բաշխման մոդելը՝ սեփական մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս սահմանել տվյալ պրոդուկտին առնչվող գործընթացների և համակարգերի գնահատման խնդիրներն ըստ առաջնահերթության: Հաշվետու տարվա ընթացքում Բանկում գործառնական ռիսկերի բացահայտման նպատակով նախապես կազմված ծրագրին համաձայն իրականացվեց մի շարք գործընթացների և տեղեկատվական համակարգերի գնահատում, որը թույլ տվեց բացահայտել և վերլուծել համակարգերի և գործընթացների թույլ կողմերը, կայացնել դրանք բարելավելու և դրանց հետ կապված ռիսկերը կառավարելու վերաբերյալ որոշումներ, նվազեցնել գործառնական կորուստների հավանականությունը և դրանց հետևանքները՝ միաժամանակ ապահովելով Բանկի ղեկավարության և անձնակազմի առավելագույն տեղեկացվածությունը գործառնական ռիսկերի մասին: Կատարված աշխատանքներից հարկ է նշել մանրաձայն վարկավորման վերանայված գործընթացի ռիսկերի գնահատումը, պլաստիկ քարտերի գործառնական ռիսկերի նվազեցման ծրագիրը:

Խոշոր պատահարներից պաշտպանվելու նպատակով Բանկը համաշխարհային պրակտիկային համապատասխան ապահովագրել է իր ակտիվները, գործառնությունները, պարտավորությունները և որոշ աշխատակիցների: Ապահովագրական ծածկույթը ներառում է, մասնավորապես, մի շարք ռիսկեր, այդ թվում՝ հրդեհի, կայծակի, հեղեղման, հափշտակման, վանդալիզմի ռիսկը, ինչպես նաև երրորդ անձի պատասխանատվության

ապահովագրությունը: Բանկը նաև ունի ֆինանսական հաստատությունների համապարփակ BBB ապահովագրությունը և իր տնօրենների և ղեկավարների պատասխանատվության ապահովագրություն:

Գործընթացների և համակարգերի ռիսկերի գնահատման մեջ առանցքային դեր է խաղում տարբեր դեպքերի հավանականության և դրանց ազդեցության հաշվարկը, որի ճշգրտությունն ապահովելու նպատակով Բանկը 2011թ. սկսած վարում է գործառնական պատահարների և կորուստների տվյալների շտեմարան: Այն թույլ է տալիս վերլուծել ռիսկի աղբյուրները, դրանց բնույթը, պատճառները և միտումները, հաշվարկել հետագա գործառնական կորուստների վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսները: 2014թ. Բանկի՝ գործառնական ռիսկերով պայմանավորված կորուստներն աննշան էին՝ մի քանի անգամ ավելի ցածր, քան Խորհրդի կողմից հաստատված գործառնական կորուստների ռիսկի ախորժակը և համաշխարհային պրակտիկայում ընդունված առավելագույն թույլատրելի շեմը:

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկում շարունակում էր գործել էկոլոգիական և սոցիալական (ԷՍՍ) ռիսկերի կառավարման համակարգը: Բանկի ԷՍՍ ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է միջազգային լավագույն փորձի վրա և համաձայնեցված է Բանկի հետ համագործակցող ֆինանսական հաստատությունների հետ (FMO, UBS, ՎՋԵԲ, ԱՋԲ): Այն նաև ներառում է ԷՍՍ ռիսկերի մոնիթորինգի համակարգ: Բանկի համապատասխան մասնագետները պարբերաբար մասնակցում են սեմինարների և վերապատրաստման դասընթացների:

Շրջակա միջավայրի վրա փոքր ազդեցություն ունեցող վարկառուներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր վարկային պորտֆելի 64.1%, իսկ ցածր սոցիալական ռիսկ ունեցող վարկառուներին տրամադրված վարկերինը՝ ընդհանուր վարկային պորտֆելի 55.2%:

Էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը տնտեսապես շահավետ է Բանկի համար՝ պահպանելով ռիսկերն ընդունելի և կառավարելի սահմաններում:

ԱՄԵՆ ԻՆՉ
ՍԱՀՄԱՆՈՒՄ Է
ԻՑ

Ակունք

Ակունք

Ֆինանսական հաշվետվություններ

2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին



Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության Բաժնետերերին և Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պարապհանաբարությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Աուդիտորի պարապհանաբարությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը հիմնված են աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցներ բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:
A member firm of Ernst & Young Global Limited

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական վիճակը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝ ի դեմս լիազորված անձ է Հայրապետյանի (գործող 2013թ.-ի հուլիսի 31-ին տրված լիազորագրի հիման վրա)

2015 թ. փետրվարի 20

Սերգեյ Տասկան

Էրիկ Հայրապետյան

Հայկական լեռնաշխարհը համարվում է ինքնատիպ ջրագրական ակունք, որտեղից սկիզբ են առնում ավանդաբար դրախտի գետերը համարվող Առաջավոր Ասիայի չորս խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Արաքսը և Ճորոխը: Հայկական ջուրը համարվում է աշխարհի ամենամաքուր ջրերից մեկը: Հայաստանի ամենահայտնի ջրվեժը Զերմուկի ջրվեժն է: Զերմուկը նաև հայտնի է իր հանքային ջրերով, որոնք ունեն առողջարար հատկություններ:

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

	Ծան.	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	4	27,711,993	23,164,643
Տոկոսային ծախս	4	(13,086,733)	(11,110,094)
Զուտ տոկոսային եկամուտ		14,625,260	12,054,549
Միջնորդավճարների գծով եկամուտ	5	2,306,764	2,055,424
Միջնորդավճարների գծով ծախս	6	(431,643)	(413,461)
Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ		1,875,121	1,641,963
Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ (վնաս)/ օգուտ	7	(4,592,239)	146,439
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտ	8	7,596,530	1,821,577
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ		177,614	146,423
Այլ գործառնական զուտ եկամուտ	9	371,007	401,129
Գործառնական եկամուտ		20,053,293	16,212,080
Արժեզրկումից կորուստներ	10	(1,731,323)	(1,959,550)
Անձնակազմի գծով ծախսեր		(6,011,844)	(3,391,800)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	11	(3,284,221)	(3,173,969)
Շահույթ մինչև շահութահարկ		9,025,905	7,686,761
Շահութահարկի գծով ծախս	12	(1,877,035)	(1,629,573)
Հաշվետու տարվա շահույթ		7,148,870	6,057,188
Այլ համապարփակ (վնաս) / եկամուտ հարկումից հետո			
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
<i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ</i>			
Իրական արժեքի զուտ փոփոխություն		(509,682)	615,817
Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն		(177,614)	(146,423)
Շահութահարկի ազդեցություն		137,459	(93,879)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		(549,837)	375,515
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ հարկումից հետո		(549,837)	375,515
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		6,599,033	6,432,703

6-ից 74-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են դեկլարության կողմից 2015թ. փետրվարի 20-ին և ստորագրվել են մերժելիս անունից՝

Տնօրինության նախագահ – Գլխավոր տնօրեն

Արտակ Հանեսյան

Գլխավոր հաշվապահ

Գոհար Խաչատրյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	68,115,676	98,815,692
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
- Բանկի կողմից պահվող	14	-	43,406
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	14	-	844,660
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Բանկի կողմից պահվող	15	518,781	3,525,900
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	15	7,092,783	5,815,585
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	16	1,157,853	3,106,483
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	17	1,526,358	8,441,159
Հաճախորդներին տրված վարկեր	18	278,808,949	169,861,420
Արժեթղթի գծով ստացվելիք գումարներ	19	14,216,567	8,966,815
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	20	2,852,570	2,696,869
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	21	4,481,019	3,575,063
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
- Բանկի կողմից պահվող	22	920,668	885,566
- Հետգնման պայմանագրերով գրավադրված	22	14,114,862	3,361,500
Վաճառքի համար պահվող ակտիվներ		420,928	254,192
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	23	2,830,644	2,894,285
Հետաձգված հարկային ակտիվներ	12	142,617	-
Այլ ակտիվներ	24	2,543,863	1,959,501
Ընդամենը ակտիվներ		399,744,138	315,048,096
Պարտավորություններ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	14	673,732	234,160
Բանկերի ավանդներ և մնացորդներ	25	30,204,324	16,911,817
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	26	21,301,407	16,013,140
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	27	208,696,931	169,942,151
Ստորադաս փոխառություններ	28	15,380,080	4,967,435
Այլ փոխառություններ	28	77,625,847	65,391,149
Ընթացիկ հարկային պարտավորություններ		685,795	502,824
Հետաձգված հարկային պարտավորություններ	12	-	166,410
Այլ պարտավորություններ	29	2,821,256	2,213,277
Ընդամենը պարտավորություններ		357,389,372	276,342,363
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	30	25,447,680	25,447,680
Էմիսիոն եկամուտ		28,571	28,571
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		(132,315)	417,522
Զբաղիչված շահույթ		17,010,830	12,811,960
Ընդամենը կապիտալ		42,354,766	38,705,733
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		399,744,138	315,048,096

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծան.	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		25,864,025	22,149,666
Վճարված տոկոսներ		(11,133,566)	(9,948,831)
Ստացված միջնորդավճարներ		2,307,052	2,055,424
Վճարված միջնորդավճարներ		(431,643)	(413,461)
Զուտ մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից		912,281	146,423
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնականություններից		2,344,808	1,478,075
Մուտքեր այլ եկամտի գծով		404,854	796,365
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(5,110,592)	(3,461,347)
Այլ գործառնական ծախսեր		(2,554,065)	(2,496,917)
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/ նվազում			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		(4,350,621)	(716,784)
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		(904,455)	(2,818,225)
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ		4,128,484	7,861,085
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		6,889,382	(7,455,244)
Հաճախորդներին տրված վարկեր		(77,290,901)	(29,607,736)
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ		(4,060,959)	1,161,610
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		448,168	742,383
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ		(649,666)	(1,900,512)
Վաճառքի նպատակով պահվող ակտիվներ և այլ ակտիվներ		(236,308)	1,057,805
Գործառնական պարտավորությունների ավելացում / (նվազում)			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		346,654	(163,813)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		7,491,140	(1,894,973)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		4,934,599	15,999,428
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		22,898,046	46,354,734
Այլ պարտավորություններ		(1,221,592)	(859,790)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից (մինչև շահութահարկը)		(28,974,875)	38,065,365
Վճարված շահութահարկ		(1,865,632)	(1,411,860)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից		(30,840,507)	36,653,505
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ		(696,832)	(1,051,970)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք		707	2,906
Հոսքեր մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից		(7,538,838)	2,859,914
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ ստացված ներդրումային գործունեությունում		(8,234,963)	1,810,850
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		-	320
Վճարված շահաբաժիններ		(2,950,000)	(4,500,000)
Ստացված ստորադաս փոխառություններից		8,139,600	4,870,920
Մուտքեր այլ փոխառություններից		23,234,764	8,753,144
Այլ փոխառությունների մարում		(19,789,715)	(5,271,574)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված ֆինանսավորման գործունեությունից		8,634,649	3,852,810
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		(30,440,821)	42,317,165
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(259,195)	(1,068,688)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		98,815,692	57,567,215
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում	13	68,115,676	98,815,692

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2014 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազ. դրամ)	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը կապիտալ
Մնացորդն առ 2013թ. հունվարի 1	25,447,360	28,571	42,007	11,254,772	36,772,710
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	6,057,188	6,057,188
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի	-	-	492,653	-	492,653
Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի	-	-	(117,138)	-	(117,138)
Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	375,515	-	375,515
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	375,515	-	375,515
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	375,515	6,057,188	6,432,703
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ					
Թողարկված բաժնետոմսեր	320	-	-	-	320
Հայտարարված շահաբաժիններ (Ծան. 30)	-	-	-	(4,500,000)	(4,500,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	320	-	-	(4,500,000)	(4,499,680)
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,447,680	28,571	417,522	12,811,960	38,705,733
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	25,447,680	28,571	417,522	12,811,960	38,705,733
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք					
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	7,148,870	7,148,870
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի	-	-	(407,746)	-	(407,746)
Որպես շահույթ կամ վնաս վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություններ՝ առանց հետաձգված հարկի	-	-	(142,091)	-	(142,091)
Ընդամենը հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	-	-	(549,837)	-	(549,837)
Ընդամենը այլ համապարփակ վնաս	-	-	(549,837)	-	(549,837)
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	(549,837)	7,148,870	6,599,033
Կապիտալում ուղղակիորեն գրանցված գործարքներ սեփականատերերի հետ					
Հայտարարված շահաբաժիններ (Ծան. 30)	-	-	-	(2,950,000)	(2,950,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(2,950,000)	(2,950,000)
Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,447,680	28,571	(132,315)	17,010,830	42,354,766

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:



2014թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (նախկին «Հայնթերարտբանկ» ՓԲԸ) (այսուհետ «Բանկ») հիմնադրվել է 1992թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ օրենսդրության համաձայն: 2007թ-ին Բանկը ձեռք բերվեց «ԹԻ-ԴԻ-Էյ Յոլդինգս Լիմիթիդ» ընկերության կողմից, որը գնեց Բանկի բաժնետիրական կապիտալի 96.15%-ը: 2011թ. ընթացքում «ԹԻ-ԴԻ-Էյ Յոլդինգս Լիմիթիդ» ընկերությունը վերանվանվեց «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ): 2013թ-ին «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ) ընկերությունը ձեռք բերեց Բանկի բաժնետիրական կապիտալի 100%-ը:

Բանկի հիմնական գործունեությունն է հանդիսանում ավանդների ներգրավումը, հաճախորդների հաշիվների սպասարկումը, վարկերի ու երաշխիքների տրամադրումը, դրամավճարային գործառնությունների իրականացումը, ինչպես նաև արժեթղթերով ու արտարժույթով գործարքների իրականացումը: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Բանկն ունի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ավանդների երաշխավորման

համակարգի անդամ: Բանկի ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը տեղակայված է Հայաստանի Հանրապետությունում:

Բանկն ունի տասը մասնաճյուղ, որոնց միջոցով իրականացնում է իր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Բանկի գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 9: Բանկի աշխատողների միջին քանակը 2014թ.-ին 590 է (2013: 533):

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հիմնական բաժնետերերն է «Ամերիա Գրուպ» (Սի-Ուայ), որին պատկանում է Բանկի բաժնետոմսերի 100%-ը:

Բանկի վերջնական վերահսկող անձը Ռուբեն Վարդանյանն է, ով իրավասու է կառավարել Բանկի գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 36-ում:

Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան: Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

2014թ. 4-րդ եռամսյակում Հայաստանի տնտեսության վրա բացասական ազդեցություն ունեցավ հայկական դրամի զգալի արժեզրկումը, ինչը հանգեցրեց կապիտալի արժեքի բարձրացմանը, գնաճի և հետագա տնտեսական աճի նկատմամբ անորոշության ավելացմանը, ինչը կարող էր բացասաբար ազդել Բանկի ապագա ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և բիզնես հեռանկարների վրա:

Ղեկավարության կարծիքով Բանկի ֆինանսական վիճակը համապատասխանում է ներկա հանգամանքներում մարտահրավերների հաղթահարմանը, և այն ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ ընթացիկ հանգամանքներում Բանկի կայունության ապահովման համար:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ա. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՀՀՄՍ») պահանջների համաձայն:

Բ. ՉԱՓՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով: Բացառություն են կազմում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, որոնք ներկայացված են իրական արժեքով:

Գ. ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

2014թ.-ի ներկայացմանը համապատասխանելու նպատակով 2013թ.-ի մնացորդների գծով կատարվել են հետևյալ վերադասակարգումները.

	Նախկինում գրանցված	Վերադասակարգում	Ճշգրտված
Բանկերի ավանդներ և մնացորդներ	22,935,230	(6,023,413)	16,911,817
Այլ ներգրավված միջոցներ	59,367,736	6,023,413	65,391,149
Տոկոսային եկամուտ	22,769,407	395,236	23,164,643
Այլ գործառնական եկամուտ	796,365	(395,236)	401,129

Դ. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ

Բանկի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է («ՀՀ դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է իրադարձությունների և դրանց առնչվող հանգամանքների տնտեսական էությունը: ՀՀ դրամը նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

Ե. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՀՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը պետք է կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի գծով ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ծանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ գնահատման և կարևոր դատողությունների հետ կապված զգալի անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 18-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր»:

Ֆինանսական գործիքների իրական արժեք

Երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները չեն կարող որոշվել ակտիվ շուկաներից ելնելով, դրանք որոշվում են բազմաթիվ գնահատման մեթոդներով՝ ներառյալ մաթեմատիկական մոդելներով: Այս մոդելներում օգտագործվող մուտքագրվող տվյալները հնարավորության դեպքում վերցվում են տեսանելի շուկաներից, հակառակ դեպքում իրական արժեքը որոշելու համար պահանջվում է որոշակի մակարդակի դատողություն: Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 37-ում:

Զ. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԶԱՆԴԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ

Բանկը կիրառել է հետևյալ վերանայված ՀՀՄՍ-ները և ՀՀՄՄԿ-ները, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՀՀՄՍ 32 «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում»՝ ՀՀՄՍ 32 ստանդարտի փոփոխություններ

Ստանդարտի սույն փոփոխությունները պարզաբանում են «տվյալ պահին ունի ծանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք» արտահայտությունը և հաշվանցման չափանիշները քլիրինգային համակարգերի համար, որոնց շրջանակներում օգտագործվում են ոչ միաժամանակյա մարումների մեխանիզմներ:

ՀՀՄՄԿ 21 «Տուրքեր»

ՀՀՄՄԿ 21 Մեկնաբանությունը պարզաբանում է, որ կազմակերպությունը ծանաչում է տուրքը որպես պարտավորություն այն դեպքում, երբ տեղի է ունենում համապատասխան օրենսդրությամբ նախատեսվող վճարում պահանջող գործողությունը: Այն դեպքում, երբ տուրքը առաջանում է նվազագույն շեմին հասնելիս, մեկնաբանությունը պարզաբանում է, որ ոչ մի պարտավորություն չի ծանաչվում նախքան նշված նվազագույն շեմին հասնելը: Նշված ՀՀՄՄԿ-ն ազդեցություն չունի Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Բանկը նախորդ տարիներին կիրառել է ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի ծանաչման սկզբունքները՝ ՀՀՄՄԿ 21-ի պահանջներին համապատասխան:

ՀՀՄՍ 39 «Ածանցյալ գործիքների նորացում և հեջի հաշվառման շարունակում»՝ ՀՀՄՍ 39 ստանդարտի փոփոխություններ

Սույն փոփոխություններն ազատում են հեջի հաշվառումը դադարեցնելուց այն դեպքերում, երբ հեջավորման գործիքը հանդիսացող ածանցյալ գործիքի նորացումը համապատասխանում է որոշակի չափանիշների և կիրառվում են առաջընթաց մեթոդով: Ստանդարտի սույն փոփոխությունը կիրառելի չէ Բանկի համար, քանի որ Բանկը չի նորացրել իր ածանցյալ գործիքները ընթացիկ ժամանակաշրջանում:

ՀՀՄՍ 36 «Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարի բացահայտումներ»՝ ՀՀՄՍ 36 ստանդարտի փոփոխություններ

Այս փոփոխությունները վերացնում են ՀՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում» ստանդարտի՝ չնախատեսված հետևանքները ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեքը կապում» ստանդարտով անհրաժեշտ բացահայտումների վրա: Բացի այդ, սույն փոփոխությունները պահանջում են բացահայտել այն ակտիվների կամ դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարները, որոնց գծով արժեքը կապվում է ծանաչվել կամ տեղի է ունեցել արժեքը կապող հակադարձում հաշվետու ժամանակաշրջանում: Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Բանկի ֆինանսական վիճակի կամ գործունեության արդյունքների վրա:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ Ծանոթագրություն 2-ի (զ) կետում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

Ա. ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Արտարժույթով իրականացվող գործարքները վերահաշվարկվում են Բանկի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքների կատարման օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով փոխարժեքային օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամօրտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով վերահաշվարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամօրտիզացված արժեքի միջև տարբերությունը: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերահաշվարկի արդյունքում առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերահաշվարկման արդյունքում առաջացած տարբերությունների, բացի այն դեպքերից, երբ տարբերությունն առաջանում է արժեզրկման պատճառով, որի դեպքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված արտարժույթային տարբերությունները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս, կամ դրամական միջոցների հոսքերի հեջավորման գործիքներ որակված դրամային հոդվածների գծով փոխարժեքային տարբերությունների, որոնք ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

Բ. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները՝ ներառյալ պարտադիր պահուստները, և այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (նոստրո հաշիվներ): Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամօրտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Գ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԳՐԾԻՔՆԵՐ

i. Դասակարգում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքը, իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն, որը՝

- ▶ ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարծ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով, կամ
- ▶ սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարծ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ, կամ
- ▶ ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված է որպես արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- ▶ սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից նախատեսվել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները կարող է նախատեսել որպես շահույթի կամ վնասի միջոցով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ▶ ակտիվների կամ պարտավորությունների ներքին կառավարումը, գնահատումը և ներկայացումը իրականացվում է իրական արժեքի հիմունքով,
- ▶ այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որը այլապես կառաջանար, կամ
- ▶ ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Ֆինանսական գործիքների համապատասխան դասակարգումը ղեկավարությունը որոշում է սկզբնական ճանաչման ժամանակ: Ածանցյալ ֆինանսական գործիքները և իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնական ճանաչման պահին չեն վերադասակարգվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից: Ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վարկերի և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների կամ վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների դասից, եթե Բանկը մտադիր է և ի վիճակի է պահել այդ գործիքները մոտ ապագայում կամ մինչև մարման ժամկետը: Այլ ֆինանսական գործիքները կարող են վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի

միջոցով չափվող ֆինանսական գործիքների դասից հազվագյուտ հանգամանքներում: Հազվագյուտ հանգամանքներն ի հայտ են գալիս եզակի արտասովոր դեպքի արդյունքում, երբ գրեթե անհավանական է, որ այն կրկին տեղի կունենա մոտ ապագայում:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք Բանկը.

- ▶ մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- ▶ սկզբնական ծանաչման ժամանակ նախատեսել է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- ▶ սկզբնական ծանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- ▶ կարող է չփոխհատուցել ըստ էության ողջ իր սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան վարկային ռիսկի վատթարացումը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ նրանց՝

- ▶ որոնք Բանկը սկզբնական ծանաչման ժամանակ նախատեսում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, կամ
- ▶ որոնք Բանկը դասակարգում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- ▶ որոնք բավարարում են վարկերի կամ դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ, որոնք Բանկի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

ii. Ծանաչում

Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ծանաչում է այն և միայն այն դեպքում, երբ դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները կամ վաճառքները հաշվառվում են գործարքի ամսաթվի դրությամբ:

iii. Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ծանաչման պահին այն չափվում է իրական արժեքով՝ գումարած՝ այն դեպքում, երբ դա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ծանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք Բանկը կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

- ▶ վարկեր և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- ▶ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, և
- ▶ բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնք իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաժանանման ենթակա:

iv. Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ծանաչման պահին՝ հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ, գումարած կամ հանած սկզբնական ծանաչված գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ հանած ֆինանսական ակտիվի արժեքը կամ ցանկացած նվազեցում: Հավելավճարները և գեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

v. Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ, ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական, կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվել շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվել պարտավորությունը փոխանցելու դիմաց: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:



Հնարավորության դեպքում, Բանկը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Բանկը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեն նման հանգամանքներում: Սկզբնական ծանաչման ժամանակ ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն վկայությունը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Բանկը որոշում է, որ սկզբնական ծանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ծանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգմամբ: Հետագայում, տարբերությունը ծանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ համապատասխան հիմունքով, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով, կամ երբ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Բանկը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով: Բանկի՝ շուկայական և վարկային ռիսկին ենթակա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների պորտֆելները կառավարվում են շուկայական կամ վարկային ռիսկի զուտ ենթարկայության սկզբունքով և չափվում են հիմք ընդունելով զուտ երկար դիրքի վաճառքի գինը (կամ այն գինը, որը կվճարվեր զուտ կարճ դիրքը փոխանցելու դիմաց): Պորտֆելի մակարդակով կատարվող այս ճշգրտումները բաշխվում են առանձին ակտիվների և պարտավորությունների միջև՝ պորտֆելի յուրաքանչյուր առանձին գործիքի համապատասխան ռիսկերի ճշգրտման հիման վրա:

vi. Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ծանաչվում է հետևյալ կերպ.

- ▶ շահույթում կամ վնասում ծանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- ▶ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ծանաչվում է կապիտալում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ծանաչվել էր կապիտալում, ծանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ծանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ծանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

vii. Ապաճանաչում

Բանկն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կամ որում Բանկը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմաններին բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Բանկի կողմից, ծանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Բանկն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Բանկը կատարում է գործարքներ, որոնցով փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ծանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները կամ դրանց մի մասը: Եթե ակտիվի սեփականության հետ կապված բոլոր կամ ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են, ապա փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում: Գործարքներում, որոնցում Բանկը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Բանկը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Բանկը շարունակում է ծանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը: Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

viii. Բանկը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները

Հետգնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որի դեպքում արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, իսկ պայմանագրային կողմի նկատմամբ պարտավորությունը ներառվում է հետգնման գործարքների գծով վճարվելիք գումարների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ծանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման

պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով (հակադարձ ռեպո) ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում: Ձեռքբերման և վերավաճառքի գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ և ճանաչվում է շահույթում կամ վնասում հետգնման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Եթե հակադարձ վաճառք նախատեսող պայմանագրի շրջանակներում գնված ակտիվները վաճառվում են երրորդ անձանց, ապա արժեթղթերը վերադարձնելու պարտավորությունն արտացոլվում է որպես առևտրական նպատակներով պահվող պարտավորություն և չափվում է իրական արժեքով:

ix. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են սվոպերը, ֆորվարդները, ֆյուչերսները, տոկոսադրույքների, արտարժույթների փոխարժեքների, թանկարժեք մետաղների, բորսաներում շրջանառվող օպցիոնները, ինչպես նաև այս գործիքների ցանկացած համակցություն:

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը կատարվում է ածանցյալ գործիքի պայմանագրի կնքման օրը գործող իրական արժեքով: Հետագայում ածանցյալ գործիքները վերաչափվում են իրական արժեքով: Բոլոր ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ՝ դրական իրական արժեքի դեպքում և որպես պարտավորություն՝ բացասական իրական արժեքի դեպքում:

Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում: Թեև Բանկն ածանցյալ գործիքների առք ու վաճառք իրականացնում է ռիսկի հեջավորման նպատակով, այս գործիքները չեն համապատասխանում հեջի հաշվառման պահանջներին:

x. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Դ. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

i. Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

ii. Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

վարձակալված գույքի բարելավումներ	5-ից 10 տարի
համակարգիչներ և հեռախոսադրույքային սարքեր	1-ից 7 տարի
տնտեսական գույք	3-ից 10 տարի
փոխադրամիջոցներ	7 տարի

Վարձակալված միջոցների բարելավումների գծով մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության գործողության ժամկետից նվազագույնի ընթացքում:

Ե. ՈՉ ՆՈՅԻԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Համակարգչային ծրագրերի, լիցենզիաների ձեռքբերման ծախսերը կապիտալացվում են որպես առանձին ծրագրի ձեռքբերման և ներդրման գծով ծախսումներ:

Ամորտիզացիան ճանաչվում է որպես ծախս շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 1-ից 10 տարի:

2. ՎԱՃԱՌՔԻ ՀԱՍՄԱՐ ՊԱՅՎՈՂ ԱԿՏԻՎՆԵՐ

Ոչ ընթացիկ ակտիվները կամ ակտիվներից և պարտավորություններից բաղկացած օտարման ենթակա խմբերը, որոնց վերականգնումն ակնկալվում է հիմնականում վաճառքի, այլ ոչ՝ շարունակական օգտագործման միջոցով, դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ակտիվներ: Ամփոփապես նախքան որպես վաճառքի համար պահվող դասակարգումը, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերի բաղադրիչները վերաչափվում են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այնուհետև, որպես կանոն, ակտիվները կամ օտարման ենթակա խմբերը չափվում են հետևյալ արժեքներից նվազագույնով՝ հաշվեկշռային արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը:

Է. ԱՐԺԵԶՐԿՈՒՄ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է արժեզրկված լինել: Նման վկայության առկայության դեպքում, Բանկը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստները ծանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է որևէ հայտանիշ ֆինանսական ակտիվի արժեզրկման մասին, որը հանդիսանում է սկզբնական ծանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Բանկն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեքում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

i. Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով: Բանկը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ չկա, ապա Բանկը ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ծանաչվում կամ շարունակվում է ծանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է օբյեկտիվ հայտանիշ, որ վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորուստ է տեղի ունեցել, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն, ներառյալ սպասվող դրամական հոսքերը երաշխիքներից և գրավներից, զեղչված վարկի նախնական արդյունավետ տոկոսադրույքով: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա կատարվել են ձգգրումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք: Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Բանկն օգտագործում է իր փորձը և դատողությունները: Վարկի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ծանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկումից կորստի ծանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը: Այն դեպքերում, երբ վարկի հավաքագրումը հնարավոր չէ, վարկը դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Բանկը վարկի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստները) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ վարկը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են վարկի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

ii. Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներում ընդգրկված չգնանշվող բաժնային գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանք արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի օբյեկտիվ հայտանիշ, ապա կորստի գումարը չափվում է որպես ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների՝ ներկա շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ծանաչվում են շահույթում կամ վնասում և ենթակա չեն հակադարձման:

Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ծանաչվում են՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ծանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ձգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ եկամտից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու ամորտիզացիան, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթի կամ վնասի կազմում ծանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն վերագրել շահույթի կամ վնասի կազմում արժեզրկումից կորստի ծանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ծանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուհանդերձ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ծանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

iii. Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ նվազեցված վաճառքի ծախսերով, ու օգտագործման արժեքից առավելագույնի տարբերությունը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ծանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ծանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ծանաչված չլինի:

Ը. ՊԱՅՈՒՍՏՆԵՐ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ծանաչվում է, երբ Բանկը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Վերականգնվող ման գծով պահուստը ծանաչվում է, երբ Բանկը հաստատում է վերականգնվող ման մանրամասն պաշտոնական պլանը և երբ սկսվում է վերականգնվողումը կամ դրա մասին հայտարարվում է հանրությանը: Ապագա գործառնական ծախսերի գծով պահուստ չի ձևավորվում:

Թ. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնականոն գործունեության ընթացքում Բանկը հանձն է առնում վարկային պարտավորվածություններ, որոնք ներառում են վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները, ակրեդիտիվները և երաշխիքները, ինչպես նաև տրամադրում է վարկային ապահովագրման այլ տեսակներ:

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Բանկին կատարել սահմանված վճարումներ, փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի պարտապանի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունն ի սկզբանե ծանաչվում է իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսումները և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ ի սկզբանե ծանաչված գումարը հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխավորության գծով ցանկացած կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխավորության գծով կորուստների պահուստը և վարկային այլ պարտավորվածությունները ծանաչվում են, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունները և վարկային այլ պարտավորվածությունների գծով պահուստները ներառվում են այլ պարտավորությունների կազմում:

Վարկային պարտավորվածությունները չեն ծանաչվում, բացառությամբ հետևյալ պարտավորվածությունների.

- ▶ վարկային պարտավորություններ, որոնք Բանկը դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ,
- ▶ եթե Բանկն ունի իր վարկային պարտավորություններից առաջացող ակտիվների՝ դրանց առաջացումից կարճ ժամանակ անց



վաճառելու նախկին փորձ, ապա նույն դասում գտնվող բոլոր վարկային պարտավորությունները դիտվում են որպես ածանցյալ գործիքներ,

- ▶ վարկային պարտավորություններ, որոնք կարող են մարվել զուտ հիմունքով՝ դրամական միջոցներով կամ մեկ այլ ֆինանսական գործիք մատակարարելով կամ թողարկելով,
- ▶ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկ տրամադրելու պարտավորություններ:

Ժ. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԱԿՊԻՏԱԼ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ծանաչվում են որպես կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

i. Էմիսիոն եկամուտ

Թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքից ավել վճարվող ցանկացած գումար ծանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

ii. Բաժնետիրական կապիտալի հետզնում

Երբ որպես կապիտալ ծանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարված հատուցման գումարը, ներառյալ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, ծանաչվում է որպես կապիտալի նվազում:

iii. Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Բանկի կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

Ի. ՀԱՐԿՈՒՄ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ծանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ծանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ծանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ծանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ծանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գույքի, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ծանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Բանկը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ծանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

Լ. ԵԿԱՄՏԻ ԵՎ ԾԱԽՍԻ ՃԱՆԱԶՈՒՄ

Տոկոսային եկամուտը և ծախսը ձանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով հաշվեգրված զեղչերը և հավելվածարները ձանաչվում են իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով ֆինանսական գործիքներից ստացված զուտ եկամտում:

Վարկերի տրամադրման, սպասարկման և այլ վճարները, որոնք գործարքի հետ կապված ծախսերի հետ միասին դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ վճարները, միջնորդավճարների գծով եկամուտը և ծախսը ձանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Շահաբաժինների տեսքով եկամուտը ձանաչվում է շահույթում կամ վնասում՝ շահաբաժնի հայտարարման ամսաթվին: Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ձանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ձանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժան մաս վարձակալության ժամկետի ընթացքում:

Խ. ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձակալ

Բանկը ձանաչում է ֆինանսական վարձակալությունը որպես ակտիվներ և պարտավորություններ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից վարձակալվող գույքի իրական արժեքի չափով, կամ, ցածր լինելու դեպքում, նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքով: Նվազագույն վարձակալական վճարների ընթացիկ արժեքը հաշվարկելու համար որպես զեղչման գործակից օգտագործվում է վարձակալության ներքին տոկոսադրույքը, երբ այն հնարավոր է կիրառել, հակառակ դեպքում՝ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ակտիվի արժեքի մեջ: Վարձակալական վճարները համաչափորեն բաշխվում են ֆինանսական ծախսերի և չմարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական ծախսը տարածվում է վարձակալության ողջ ժամանակահատվածի վրա այնպես, որ հաշվարկվի հաստատուն դրույքաչափ պարտավորության յուրաքանչյուր ժամանակաշրջանի մնացորդային արժեքի նկատմամբ: Վարձակալի կողմից ֆինանսական վարձակալության գործունեությանը ուղղակիորեն վերագրելի ծախսումներն արտացոլվում են վարձակալված ակտիվների կազմում:

Ֆինանսական վարձակալություն՝ Բանկը որպես ֆինանսական վարձատու

Բանկը ձանաչում է վարձակալության գծով դեբիտորական պարտքերը վարձակալության զուտ ներդրման գումարի չափով՝ վարձակալության պայմանների ուժի մեջ մտնելու պահից սկսած: Ֆինանսական եկամուտը հիմնված է զուտ չմարված ներդրման հաստատուն եկամտաբերության գործակցի օգտագործման մոդելի վրա: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են վարձակալությունից դեբիտորական պարտքի հաշվարկման մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի ժամանակ ռիսկերը և հատույցները արդյունավետորեն պահվում են վարձակալի կողմից, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության գծով վարձավճարները ձանաչվում են ծախսեր հավասարաչափ մասհանումների միջոցով վարձակալության ժամկետի ընթացքում և ընդգրկվում այլ գործառնական ծախսերի մեջ:

Գործառնական վարձակալություն՝ Բանկը որպես վարձատու

Բանկը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ձանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ: Վարձակալներին տրամադրված զեղչերի համախառն գումարը արտացոլվում է որպես վարձակալությունից եկամտի նվազեցում՝ հավասարաչափ վարձակալության ժամկետի ընթացքում: Գործառնական վարձակալության պայմանագրի հետ կապված սկզբնական ուղղակի ծախսումները ավելացվում են վարձակալության առարկա հանդիսացող ակտիվի հաշվեկշռային արժեքին:

Ծ. ԴԵՌԵՎՍ ԶԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թողարկված, բայց մինչև Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների թողարկումն ուժի մեջ չմտած ստանդարտները և մեկնաբանությունները ներկայացված են ստորև: Բանկը մտադիր է կիրառել այս ստանդարտները (եթե դրանք կիրառելի են Բանկի համար) այն ժամանակ, երբ դրանք ուժի մեջ կմտնեն:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի վերջնական տարբերակը, որն արտացոլում է ֆինանսական գործիքներին վերաբերող նախագծի բոլոր փուլերն ու փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «Ֆինանսական գործիքներ. ձանաչում և չափում», և ՖՀՄՍ 9-ի բոլոր նախկին տարբերակներին: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, արժեզրկման և

հեջավորման հաշվառման նոր պահանջներ: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: Հետընթաց կիրառումը պարտադիր է, բայց համեմատական տեղեկատվությունը պարտադիր չէ: ՖՀՄՍ 9-ի ավելի վաղ տարբերակների (2009, 2010 և 2013) կիրառումը թույլատրելի է, եթե սկզբնական կիրառման ամսաթիվը 2015թ. փետրվարի 1-ից շուտ է:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն ազդեցություն կունենա Բանկի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն ազդեցություն չի ունենա Բանկի ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա:

ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտների փոփոխություններ՝ «Մաշվածության և ամորտիզացիայի ընդունված մեթոդների պարզաբանում»

Փոփոխությունները հստակեցնում են ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի այն սկզբունքը, որ հասույթը արտացոլում է գործունեության (որի մի մասն է հանդիսանում օգտագործվող ակտիվը) ընթացքում ձևավորված, այլ ոչ թե ակտիվի օգտագործման ընթացքում սպառվող տնտեսական օգուտները: Արդյունքում, առաջացած հասույթի հարաբերությունը ակնկալվող ընդհանուր հասույթին չի կարող օգտագործվել հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի համար և եզակի դեպքերում կարող է օգտագործվել ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի համար: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Ակնկալվում է, որ այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունենա Բանկի վրա, քանի որ Բանկը ոչ նյութական ակտիվների նկատմամբ չի կիրառում հասույթի վրա հիմնված մաշվածության հաշվարկի մոտեցումը:

Տարեկան բարեփոխումներ՝ 2010-2012 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա: Դրանք ներառում են՝

ՀՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ»

Այս բարեփոխումը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է մի շարք հարցեր՝ կապված արդյունավետության և ծառայության պայմանների սահմանումների հետ, մասնավորապես՝ աշխատակիցների կողմից բաժնետոմս ձեռք բերելու պայմանների հետ, ինչպիսիք են՝

- ▶ Կատարողականի պայմանը պետք է պարունակի ծառայության պայման,
- ▶ Կատարողականի թիրախին պետք է հասնել, մինչ գործընկերը ծառայություն է մատուցում,
- ▶ Կատարողականի թիրախը կարող է վերաբերել կազմակերպության կամ խմբի այլ կազմակերպության գործընթացներին կամ գործունեությանը,
- ▶ Կատարողականի պայմանը կարող է լինել շուկայական կամ ոչ շուկայական,
- ▶ Եթե գործընկերը, անկախ պատճառներից, իրավունքի առաջացման ժամանակահատվածում հրաժարվում է ծառայություն մատուցելուց, ծառայության պայմանը համարվում է չբավարարված:

ՀՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ բոլոր պայմանական փոխհատուցումները, որոնք դասակարգվել են որպես ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջացող պարտավորություն (կամ ակտիվներ), պետք է հետազայում չափել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ անկախ այն հանգամանքից, արդյոք դրանք ՀՀՄՍ 9-ի (կամ ՀՀՄՍ 39-ի) շրջանակներում են գտնվում, թե՛ ոչ:

ՀՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ»

Փոփոխությունները կիրառվում են հետընթաց և պարզաբանում են, որ.

- ▶ Կազմակերպությունը պետք է բացահայտի ՀՀՄՍ 8 ստանդարտի 12-րդ հոդվածով սահմանվող սեզմենտների միավորման չափանիշների կիրառման հետ կապված ղեկավարության դատողությունները, ներառյալ՝ միավորված գործառնական սեզմենտների կարծ նկարագրերը և տնտեսական բնութագրերը (օրինակ՝ վաճառքը և համախառն մարժան), որոնք օգտագործվում են սեզմենտների համանման լինելը գնահատելու համար:
- ▶ Սեզմենտի ակտիվների և ընդհանուր ակտիվների համաձայնեցման բացահայտումը պահանջվում է միայն այն դեպքում, երբ համաձայնեցումը զեկուցվում է գլխավոր գործառնական որոշումներ կայացնողին: Նույնը վերաբերում է սեզմենտի պարտավորություններին:

ՀՀՄՍ 13 «Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքեր»՝ Փոփոխություններ ՀՀՄՍ 13-ում

ՀՀՄՍ 13-ի փոփոխությունը «Եզրակացության հիմքեր» բաժնում պարզաբանում է, որ կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը՝ առանց որոշակի տոկոսադրույքների, կարելի է չափել հաշիվ-ապրանքագրի գումարով, երբ զեղչման ազդեցությունը էական չէ:

ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ ՀՀՄՍ 16-ում և ՀՀՄՍ 38-ում ակտիվը կարող է վերագնահատվել ինչպես համախառն, այնպես էլ զուտ հաշվեկշռային արժեքի վերաբերյալ դիտարկելի տեղեկատվությանը հղում կատարելով: Ի լրումն, կուտակված մաշվածությունը կամ ամորտիզացիան իրենից ներկայացնում է ակտիվի համախառն և հաշվեկշռային արժեքների միջև տարբերությունը:

ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ»

Փոփոխությունը կիրառվում է հետընթաց և պարզաբանում է, որ կառավարման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (որը մատուցում է առանցքային կառավարչական անձնակազմի ծառայություններ) հանդիսանում է կապակցված կողմ և, համապատասխանաբար, պետք է բացահայտվի կապակցված կողմերի բացահայտումներում: Բացի այդ, կազմակերպությունը, որն օգտվում է կառավարման ծառայությունների մատուցող կազմակերպության ծառայություններից, պետք է բացահայտի կառավարման ծառայությունների գծով ծախսերը:

Տարեկան բարեփոխումներ՝ 2011-2013 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա: Դրանք ներառում են՝

ՀՀՄՍ 3 «ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և հստակեցնում է ՀՀՄՍ 3-ի կարգավորման շրջանակի բացառությունները.

- ▶ Բոլոր համատեղ ձեռնարկումները, այլ ոչ միայն համատեղ կազմակերպությունները, ՀՀՄՍ 3-ի շրջանակից դուրս են,
- ▶ Այս բացառությունը կիրառվում է միայն համատեղ ձեռնարկումների ֆինանսական հաշվետվությունների նպատակներով հաշվապահական հաշվառման համար:

ՀՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»

Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ ՀՀՄՍ 13-ի բացառությունը կազմակերպությունների համար, որոնք պահում են ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խումբ (պորտֆել), կարող է կիրառվել ոչ միայն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, այլ նաև այլ պայմանագրերի համար, որոնք գտնվում են ՀՀՄՍ 9-ի (ՀՀՄՍ 39, եթե կիրառելի է) շրջանակներում:

ՀՀՄՍ 40 «Ներդրումային գույք»

ՀՀՄՍ 40 ստանդարտում օժանդակ ծառայությունների նկարագրությունը տարբերում է ներդրումային գույք և սեփականատիրոջ կողմից զբաղեցված գույք (այսինքն՝ հիմնական միջոց) հասկացությունները: Փոփոխությունը կիրառվում է առաջընթաց կերպով և պարզաբանում է, որ որոշելու համար թե արդյոք գործարքը ակտիվի գնում է, թե ձեռնարկատիրական գործունեության միավորում, օգտագործվում է ՀՀՄՍ 3-ը, այլ ոչ թե ՀՀՄՍ 40 ստանդարտի օժանդակ ծառայությունների նկարագիրը:

Արդյունավետ ՀՀՄՍ-ի նշանակությունը՝ ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ

Փոփոխությունը «Եզրակացության հիմքեր» բաժնում պարզաբանում է, որ կազմակերպությունը կարող է ընտրել կիրառել ներկայիս ստանդարտը կամ նոր ստանդարտը, որը դեռևս պարտադիր չէ, բայց թույլ է տալիս վաղաժամ կիրառություն, այն պայմանով, որ ստանդարտներից ցանկացածը կիրառվում է հետևողականորեն կազմակերպության առաջին՝ ՀՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների մեջ ներկայացված բոլոր ժամանակաշրջանների ընթացքում: ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունն ազդեցություն չունի Բանկի վրա, քանի որ Բանկը հանդիսանում է ՀՀՄՍ-ի ընթացիկ կիրառող:

Տարեկան բարեփոխումներ՝ 2012-2014 շրջան

Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հունվարի 1-ից հետո և ակնկալվում է, որ էական ազդեցություն չեն ունենա Բանկի վրա: Դրանք ներառում են՝

ՀՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն»՝ օտարման մեթոդների փոփոխություններ

Ակտիվները (կամ օտարման խմբերը) ընդհանուր առմամբ օտարվում են կամ վաճառքի, կամ սեփականատերերի միջև բաշխման միջոցով: ՀՀՄՍ 5-ի փոփոխությունը պարզաբանում է, որ նշված օտարման մեթոդներից մեկը մյուսով փոխարինելը չի նշանակի օտարման նոր պլան, այլ այն կհանդիսանա սկզբնական ծրագրի շարունակություն: Հետևաբար ՀՀՄՍ 5-ի պահանջների կիրառման ընդհատում չի լինի: Փոփոխությունը նաև պարզաբանում է, որ օտարման մեթոդի փոփոխությունը չի հանգեցնի դասակարգման ամսաթվի փոփոխությանը: Փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ՀՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ». Ծառայությունների մատուցման պայմանագրերի բացահայտումներ

ՀՀՄՍ 7 պահանջում է կազմակերպությունից տրամադրել բացահայտումներ ցանկացած փոխանցված և ամբողջովին ապաժանացված ակտիվի նկատմամբ շարունակական ներգրավվածության մասին: Խորհրդին հարցրել են, թե արդյոք ծառայությունների մատուցման պայմանագրերը բավարարում են շարունակական ներգրավվածության նպատակով կիրառվող այս բացահայտման պահանջներին: Փոփոխությունը պարզաբանում է, որ ծառայությունների մատուցման պայմանագիրը, որը ներառում է միջնորդավճար, կարող է հաստատել ֆինանսական ակտիվի մեջ շարունակական ներգրավվածություն: Կազմակերպությունը պետք է գնահատի միջնորդավճարի բնույթը և ճշտի շարունակական ներգրավվածության համար անհրաժեշտ բացահայտումների համապատասխանությունը ՀՀՄՍ 7.Բ30 և ՀՀՄՍ 7.42Գ կետերում ներկայացված ցուցումներին: Փոփոխությունը պետք է կիրառվի 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Փոփոխությունը պետք է կիրառվի այնպես, որ շարունակական ներգրավվածություն կազմող ծառայությունների մատուցման պայմանագրերի գնահատումը կատարվի հետընթաց: Սակայն, պահանջվող բացահայտումները չպետք է կատարվեն ավելի վաղ ժամանակահատվածներում, քան այն տարեկան ժամանակաշրջանը, երբ կազմակերպությունն առաջին անգամ կիրառում է փոփոխություններ:

ՖՅՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. միջանկյալ հաշվետվությունների համար հաշվանցման բացահայտումների կիրառելիությունը

2011թ. դեկտեմբերին ՖՅՄՍ 7-ում կատարվել են փոփոխություններ, որպեսզի ավելացվի ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման ուղեցույց: ՖՅՄՍ 7-ի փոփոխությունների կիրառման ամսաթվի դրությամբ նշվում է, որ կազմակերպությունը պետք է կիրառի նշված փոփոխությունները տարեկան հաշվետվությունների և նրանց միջանկյալ հաշվետվությունների համար 2013 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ԴՅՄՍ 34-ը՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», չի անդրադառնում բացահայտման այս պահանջին, և պարզ չէ՝ հարկավոր են արդյոք բացահայտումները ամփոփ միջանկյալ հաշվետվությունների համար:

Փոփոխությունը դուրս է մղում «այդ հաշվետու ժամանակաշրջանների միջանկյալ ժամանակաշրջանների ընթացքում» արտահայտությունը՝ պարզաբանելով, որ ՖՅՄՍ 7-ի բացահայտումները պարտադիր չեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում: Փոփոխությունը պետք է կիրառվի հետևյալ 2016 թվականի հունվարի 1-ին կամ հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

ԴՅՄՍ 34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություն». Տեղեկատվության բացահայտումը միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում

Փոփոխությունը նշում է, որ պահանջված միջանկյալ բացահայտումները պետք է կամ լինեն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կամ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները պետք է հղում պարունակեն ավելի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մաս կազմող այն փաստաթղթին, որտեղ դրանք կատարվել են (ղեկավարության մեկնաբանություններ կամ ռիսկերի հաշվետվություն): Խորհուրդը նշել է, որ միջանկյալ ֆինանսական հաշվետվության այլ բաղկացուցիչներում ներկայացված տեղեկատվությունը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն ժամանակ և միևնույն պայմաններով, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները: Եթե ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները այլ տեղեկատվությանը նմանօրինակ հասանելիություն չունենան, միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կլինեն ոչ ամբողջական: Փոփոխությունը պետք է կիրառվի հետևյալ 2016 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն ավելի վաղ կիրառումը թույլատրելի է:

4. ԶՈՒՏ ՏՈՎՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	23,363,086	19,421,429
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,182,273	666,449
Սկրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	923,406	635,798
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	764,705	826,031
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	707,560	395,236
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	344,753	350,256
Հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	282,580	302,775
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	108,342	539,927
Այլ	35,288	26,742
	27,711,993	23,164,643
Տոկոսային ծախս		
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	7,669,949	6,353,114
Այլ փոխառություններ և ստորադաս փոխառություններ	3,796,762	3,553,879
Բանկերի ավանդներ և մնացորդներ	661,980	480,639
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	259,924	150,115
Այլ	698,118	572,347
	13,086,733	11,110,094
Զուտ տոկոսային եկամուտ	14,625,260	12,054,549

5. ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Վարկային քարտերի սպասարկման ծառայություններ	1,026,049	846,873
Կանխիկացման և հաշիվների սպասարկման ծառայություններ	415,636	254,231
Դրամական փոխանցումներ	406,384	383,366
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	276,437	257,395
Բրոկերային ծառայություններ	119,727	228,080
Հաշվարկային գործառնություններ	25,109	18,914
Այլ	37,422	66,565
	2,306,764	2,055,424

6. ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Վարկային քարտերի սպասարկման ծառայություններ	234,327	175,585
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	92,936	90,617
Դրամական փոխանցումներ	65,131	46,934
Այլ	39,249	100,325
	431,643	413,461

7. ՀՈՒՏ (ՎՆԱՍ)/ ՕԳՈՒՏ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ՝ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնասը՝ 4,592,239 հազար դրամ գումարով (2013 թ.՝ զուտ օգուտ 146,439 հազար դրամ գումարով) ներառում է արտարժույթի և տոկոսադրույքի գծով ածանցյալ գործիքների վերազնահատում, որոնք օգտագործվում են բաց արժույթային դիրքերը հեջավորելու համար:

8. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀՈՒՏ ՕԳՈՒՏ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Սկիզբ գործարքներից զուտ օգուտ	2,344,808	1,478,075
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերազնահատումից զուտ օգուտ	5,251,722	343,502
	7,596,530	1,821,577

9. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ/(ԾԱԽՍԵՐ)

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ստացված տույժեր և վնասներ	1,298,535	1,105,480
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից զուտ եկամուտ	587	1,053
Այլ եկամուտ	76,085	102,883
Տույժերի և տուգանքների գծով ծախսեր	(40,870)	(1,058)
Ինկասացիա	(53,825)	(47,520)
Արժեթղթային և բրոքերային գործունեություն	(99,025)	(166,078)
Երաշխիքային վճարներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին	(184,121)	(138,120)
Ծրագրային ապահովման սպասարկում	(201,053)	(168,725)
Վճարման համակարգի գծով ծախսեր	(260,917)	(222,232)
Այլ ծախսեր	(164,389)	(64,554)
	371,007	401,129

10. ԱՐԺԵՀՐԿՈՒՄԻՑ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հաճախորդներին տրված վարկեր	(1,650,911)	(1,863,614)
Այլ ակտիվներ	(80,412)	(95,936)
	(1,731,323)	(1,959,550)

11. ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	821,362	759,811
Մաշվածություն և ամորտիզացիա	760,473	677,053
Գովազդ և մարքեթինգ	581,983	571,474
Վերանորոգման և պահպանման ծախսեր	196,411	166,274
Բարեգործություն և հովանավորություն	136,173	323,596
Կապի և տեղեկատվական ծառայություններ	94,608	122,877
Ուսուցում և կրթություն	88,456	31,832
Մասնագիտական ծառայություններ	77,505	40,551
Էլեկտրականության և կոմունալ ծախսերի վճարներ	75,380	51,691
Անվտանգության ծառայություն	58,733	57,402
Գործուղման ծախսեր	47,817	57,252
Հարկեր (բացառությամբ աշխատավարձին վերաբերող հարկերի և շահութահարկի)	28,734	13,199
Ներկայացուցչական ծախսեր	24,761	28,274
Գրասենյակային ծախսեր	22,816	25,113
Սպահովագրություն	20,486	14,522
Այլ	248,523	233,048
	3,284,221	3,173,969

12. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	2,048,603	1,606,718
Հետաձգված հարկի գծով ծախս		
Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ` ժամանակավոր տարբերությունների առաջացման և հակադարձման հետևանքով	(171,568)	22,855
Ընդամենը ծախս շահութահարկի գծով	1,877,035	1,629,573

2014թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2013թ-ին` 20%):

Արդյունավետ հարկային դրույքի համաձայնեցում

	2014 հազ. դրամ	%	2013 հազ. դրամ	%
Շահույթ մինչև հարկումը	9,025,905		7,686,761	
Շահութահարկ` կիրառելի հարկային դրույքով	1,805,181	20%	1,537,352	20%
Նախորդ տարիների շահութահարկի գումարի ճշգրտում	33,024	0.40%	-	-
Չնվազեցվող ծախսեր	38,830	0.80%	92,221	1.2%
	1,877,035	20.8%	1,629,573	21.2%

Ա. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային ակտիվներ 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (2013թ.-ի զուտ հետաձգված հարկային պարտավորություններ):

Գործող հարկային օրենսդրության համաձայն նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարման ժամկետ չունեն:

Ստորև ներկայացված է ժամանակավոր տարբերությունների շարժը 2014թ. և 2013թ. ընթացքում:

2014 հազ. դրամ	Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ձանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ձանաչված	Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	46,263	(13,998)	-	32,265
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(104,380)	-	137,459	33,079
Հաճախորդներին տրված վարկեր	(205,556)	(32,094)	-	(237,650)
Այլ ստացվելիք գումարների պահուստներ և այլ պահուստներ	(137,466)	27,204	-	(110,262)
Հիմնական միջոցներ	41,148	19,717	-	60,865
Այլ ակտիվներ	13,107	(3)	-	13,104
Այլ պարտավորություններ	180,474	170,742	-	351,216
	(166,410)	171,568	137,459	142,617

2013 հազ. դրամ	Մնացորդն առ 2013թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ձանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ձանաչված	Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	60,709	(14,446)	-	46,263
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(10,501)	-	(93,879)	(104,380)
Հաճախորդներին տրված վարկեր	(239,562)	34,006	-	(205,556)
Այլ ստացվելիք գումարների պահուստներ և այլ պահուստներ	(73,721)	(63,745)	-	(137,466)
Հիմնական միջոցներ	26,693	14,455	-	41,148
Այլ ակտիվներ	13,207	(100)	-	13,107
Այլ պարտավորություններ	173,499	6,975	-	180,474
	(49,676)	(22,855)	(93,879)	(166,410)

13. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Կանխիկ միջոցներ	9,566,767	10,955,628
Նոստրո հաշիվներ ՀՀ ԿԲ-ում՝ ներառյալ պարտադիր պահուստները	50,575,892	68,814,293
Նոստրո հաշիվներ այլ բանկերում		
- ԱԱ- -ից ԱԱ+ վարկանիշով	2,883	12,010
- Ա- -ից Ա+ վարկանիշով	6,742,373	17,914,102
- ԲԲ- -ից ԲԲԲ+ վարկանիշով	1,148,984	1,084,152
- վարկանիշ չունեցող	78,777	35,507
Ընդամենը նոստրո հաշիվներ այլ բանկերում	7,973,017	19,045,771
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	68,115,676	98,815,692

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 2%-ի չափով և արտարժույթով ներգրավված գումարների 20%-ի չափով (սկսած 2014թ. դեկտեմբերի 24-ից): Օրենսդրությամբ չի սահմանափակվում այդ միջոցների ելքագրումը, սակայն եթե Բանկը չի ապահովում ՀՀ դրամով ներգրավված գումարների գծով նվազագույն միջին ամսական գումարը և արտարժույթով ներգրավված գումարների գծով նվազագույն օրական գումարը, ապա կարող են կիրառվել պատժամիջոցներ:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում նոստրո հաշիվների մեջ ներառված է պարտադիր պահուստի գումարը՝ 852,538 հազար դրամ ՀՀ դրամով ներգրավված միջոցների համար (2013 թ.՝ 1,216,532 հազար դրամ) և 43,153,758 հազար դրամ արտարժույթով ներգրավված միջոցների համար (2013 թ.՝ 21,180,070 հազար դրամ):
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամկետանց կամ արժեզրկված չեն: Բանկերի վերոնշյալ վարկանիշները նշված են ըստ Fitch rating agency-ի վարկանշմանը:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի գործընկեր բանկեր (2013 թ.՝ երկու բանկ), որոնց մնացորդները գերազանցեն կապիտալի 10%-ը: Այդ մնացորդների համախառն արժեքը 2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 13,957,925 հազար դրամ:
2014թ.-ի դեկտեմբերի 31-ի և 2013թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում Բանկի մնացորդները գերազանցում են կապիտալի 10%:

14. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ՝ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ակտիվներ		
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
Կորպորատիվ պարտատոմսեր		
- վարկանիշ չունեցող	-	43,406
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Այլ պայմանագրեր	-	-
	-	43,406
Հետգնման պայմանագրերով գրավադրված		
Կորպորատիվ պարտատոմսեր		
- վարկանիշ չունեցող	-	844,660
	-	844,660
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ		
Տոկոսադրույքի սվոպեր	161,325	231,316
Արտարժույթի պայմանագրեր	512,245	-
Այլ պայմանագրեր	162	2,844
	673,732	234,160

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական գործիքներ:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Տոկոսադրույքի սվոպեր

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի գումարները 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ներառյալ իրական արժեքը և անվանական գումարը: Ստորև ներկայացված արտարժույթով արտահայտված գումարները փոխարկվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ գործող փոխարժեքներով: Այս դեմս չմարված պայմանագրերի գծով չիրացված օգուտը և վնասը ձանաչվում է համապատասխանաբար շահույթում կամ վնասում:

	Իրական արժեք		Անվանական գումար	
	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույքի վճարում, ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի ստացում	(161,325)	(231,316)	13,817,309	15,027,118

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տոկոսադրույքի սվոպի երեք պայմանագիր՝ յուրաքանչյուրը 15,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով (2013թ.-ին՝ տոկոսադրույքի սվոպի երեք պայմանագիր՝ յուրաքանչյուրը 15,000,000 ԱՄՆ դոլար անվանական գումարով): Այս պայմանագրերի համաձայն՝ Բանկը վճարում է 2.1350%, 1.3125% և 0.9450% ֆիքսված տոկոսադրույքներ և ստանում է 6 ամիս USD-LIBOR-BBA (Բրիտանիայի բանկիրների ասոցիացիա) լողացող տոկոսադրույքներ՝ համապատասխանաբար յուրաքանչյուր պայմանագրի համար: Տոկոսադրույքի սվոպի պայմանագրերի մարման ժամկետը լրանում է 2018թ.-ին:

15. ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	268,753	2,187,976
Հայաստանի Հանրապետության եվրոպարտատոմսեր	-	818,558
- Կորպորատիվ պարտատոմսեր		
Միջազգային ֆինանսական հաստատություններ	104,832	375,876
Այլ	38,738	41,023
Բաժնային ներդրումներ		
- Չգնանշվող բաժնային արժեթղթեր	106,458	102,467
	518,781	3,525,900
ԿԲ-ի հետ հետգնման պայմանագրերով գրավադրված		
ՀՀ պետական արժեթղթեր	3,578,952	5,815,585
ՀՀ եվրոպարտատոմսեր	3,317,063	-
Միջազգային ֆինանսական հաստատությունների արժեթղթեր	196,768	-
	7,092,783	5,815,585

Վաճառքի համար մատչելի ակտիվներում ներառված են ստորև ներկայացվող չգնանշվող բաժնային արժեթղթերը:

Անվանումը	Գրանցման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		2014	2013
			2014	2013	հազ. դրամ	հազ. դրամ
ԱրՔա	Հայաստանի Հանրապետություն	Վճարային համակարգ	3.76%	3.76%	36,429	34,826
Արցախ Բանկ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	1.06%	1.06%	69,250	66,862
ՍՎԻՖՏ	Բելգիա	Դրամական փոխանցումներ	0.00%	0.00%	779	779
					106,458	102,467

Ա. ՈՐՈՇԵԼԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Սկզբնական արժեքով հաշվառվող վաճառքի համար մատչելի բաժնային ներդրումները ներառում են չգնանշվող բաժնային արժեթղթերը: Այս ներդրումների համար ակտիվ շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայություն տրամադրել դրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդի կիրառման արդյունքում ձևավորվում են մի շարք իրական արժեքներ, ինչը պայմանավորված է այս ոլորտում դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության հետ կապված անորոշությամբ:

Բ. ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

2014թ.-ի ընթացքում Բանկը վաճառքի համար մատչելի որոշ ակտիվներ, որոնք, վերադասակարգման ամսաթվի դրությամբ, Բանկը մտադրված էր և հնարավորություն ուներ պահել մինչև մարման ժամկետի լրանալը, վերադասակարգել է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների: Վերադասակարգված ակտիվներն իրենցից ներկայացնում են ՀՀ պետական արժեթղթեր և միջազգային ֆինանսական հաստատությունների արժեթղթեր:

Վերադասակարգումները կատարվել են 2014թ.-ի ընթացքում վերադասակարգման ամսաթվի գործող իրական արժեքով: Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս վերադասակարգման ամսաթվի դրությամբ վերադասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքները և դրանց ամփոփագրված արժեքը 2014թ.-ի դեկտեմբերի 31 դրությամբ:

2014 հազ. դրամ	Վերադասակարգ- ման ամսաթվի դրությամբ իրական արժեքը	Ամփոփագրված արժեքը դեկտեմբերի 31-ի դրությամբ
Որպես մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ վերադասակարգված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		
ՀՀ պետական արժեթղթեր	2,262,610	2,208,417
Միջազգային ֆինանսական հաստատությունների պարտատոմսեր	203,212	200,329
	2,465,822	2,408,746

2014թ.-ի ընթացքում վերադասակարգված ֆինանսական ակտիվների մարման ժամկետները հետևյալն են՝

	հազ. դրամ
1 տարուց պակաս	1,068,565
1-5 տարի	1,397,257
	2,465,822

Վերադասակարգված վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերի արդյունավետ տոկոսադրույքները տատանվում էին 9.7%-ից 15.7% սահմաններում և վերադասակարգված մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթերի նոր արդյունավետ տոկոսադրույքները տատանվում են 8.7%-ից 10.6% սահմաններում:

Բանկը 2014թ.-ի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում վերադասակարգված ակտիվների իրական արժեքների գծով ծանաչել է վնաս 99,240 ՀՀ դրամի չափով (2013 թ.՝ 300,832 ՀՀ դրամ): Ֆինանսական ակտիվները չվերադասակարգելու դեպքում իրական արժեքի գծով վնասը, որը կծանաչվեր այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, կկազմեր 75,693 հազար դրամ:

16. ԲԱՆԿԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Պահանջներ ՀՀ ԿԲ նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների իրականացման գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ -ում	820,000	720,000
Վարկեր և ավանդներ այլ բանկերի հետ		
Հայկական բանկեր	-	2,030,799
ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկեր	295,220	322,994
Օտարերկրյա այլ բանկեր	42,633	32,690
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և ավանդներ	337,853	2,386,483
Ընդամենը այլ բանկերին տրված վարկեր և փոխառվածություններ	1,157,853	3,106,483

Բանկերին տրված վարկերը և փոխառվածություններն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

ՏՀԶԿ կազմի մեջ մտնող բանկերի և այլ օտարերկրյա բանկերի հետ վարկերի և ավանդների մեջ ներառված 322,827 հազար դրամ (2013 թ.՝ 355,684 հազար դրամ) գումարն իրենից ներկայացնում է ակրեդիտիվների, երաշխիքների և վարկային քարտերի դիմաց գրավադրված ավանդներ:

Բանկերին տրված վարկերի և փոխառվածությունների կենտրոնացում

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի բանկերում տեղաբաշխված միջոցներ (2013 թ.՝ ոչ մի բանկում), որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը:

17. ՀԱԿԱԴԱՐՁ ՀԵՏԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Փոքր և միջին հայկական ֆինանսական կազմակերպություններից ստացվելիք գումարներ	1,526,358	7,423,387
Միջին հայկական բանկից ստացվելիք գումարներ	-	1,017,772
	1,526,358	8,441,159

ԳՐԱՎ

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված էին կառավարության և ոչ կառավարական արժեթղթեր 1,590,527 հազար դրամ իրական արժեքով (2013 թ.՝ 8,098,541 հազար դրամ):

Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց գրավադրված 1,217,526 հազար դրամ գումարը վերագրավադրվել է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2013թ.-ին՝ 5,910,451):

18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Կորպորատիվ վարկեր		
Վարկեր խոշոր ընկերություններին	179,788,620	106,095,838
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	58,195,133	33,670,967
Ընդամենը կորպորատիվ վարկեր	237,983,753	139,766,805
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր		
Հիփոթեքային վարկեր	17,277,164	10,250,398
Վարկային քարտեր	16,367,111	10,424,703
Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր	4,094,804	3,359,988
Սպառողական վարկեր	3,046,377	1,183,682
Անհատներին տրվող բիզնես վարկեր	2,495,719	5,853,812
Այլ	278,684	408,542
Ընդամենը սպառողական վարկեր	43,559,859	31,481,125
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	281,543,612	171,247,930
Արժեզրկման գծով պահուստ	(2,734,663)	(1,386,510)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր	278,808,949	169,861,420

Ստորև ներկայացված աղյուսակում բարձր վարկանիշ ունեցող վարկերը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերն են, որոնք ունեն նվազագույն մակարդակի վարկային ռիսկ, սովորաբար ապահովված բարձրակարգ գրավով (որպես գրավ են հանդիսանում դրամական միջոցներ կամ պետական երաշխիքներ): Լավ ֆինանսական վիճակ և պարտքերի սպասարկման լավ պատմություն ունեցող այլ վարկառուները ընդգրկվում են ստանդարտ վարկանիշի մեջ: Ստանդարտ վարկանիշից ցածր վարկերը կազմում են անհատապես չարժեզրկված, ստանդարտից ցածր գնահատական ունեցող վարկերը:

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց			Ժամկետանց, բայց չարժեզրկված 2014	Անհատապես արժեզրկված 2014	Ընդամենը 2014
	Բարձր վարկանիշ 2014	Ստանդարտ վարկանիշ 2014	Ստանդարտից ցածր վարկանիշ 2014			
Կորպորատիվ հաճախորդներին տրված զուտ վարկեր	32,826,034	196,085,992	-	5,163,171	1,684,533	235,759,730

	Չարժեզրկված և ոչ ժամկետանց			Ժամկետանց, բայց չարժեզրկված 2013	Անհատապես արժեզրկված 2013	Ընդամենը 2013
	Բարձր վարկանիշ 2013	Ստանդարտ վարկանիշ 2013	Ստանդարտից ցածր վարկանիշ 2013			
Կորպորատիվ հաճախորդներին տրված զուտ վարկեր	3,143,101	133,486,488	-	725,624	1,233,041	138,588,254

Ստորև ներկայացված է 2014թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների:

	Կորպորատիվ վարկեր հազ. դրամ	Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին 1,178,551 207,959 1,386,510	1,178,551	207,959	1,386,510
Զուտ ծախս 1,140,671 510,240 1,650,911	1,140,671	510,240	1,650,911
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ 94,574 405,891 500,465	94,574	405,891	500,465
Դուրսգրումներ (189,773) (613,450) (803,223)	(189,773)	(613,450)	(803,223)
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	2,224,023	510,640	2,734,663

Ստորև ներկայացված է 2013թ. ընթացքում արժեզրկման գծով պահուստի շարժը ըստ հաճախորդներին տրված վարկերի տեսակների:

	Կորպորատիվ վարկեր հազ. դրամ	Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդը հաշվետու տարվա սկզբին	469,065	164,430	633,495
Զուտ ծախս	1,553,069	310,545	1,863,614
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ	73,351	27,670	101,021
Դուրսգրումներ	(916,934)	(294,686)	(1,211,620)
Մնացորդը հաշվետու տարվա վերջին	1,178,551	207,959	1,386,510

Ա. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Կորպորատիվ վարկեր	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Վարկեր խոշոր ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	173,503,081	347,006	173,156,075	0.2%
- 30-90 օր ժամկետանց	600,387	1,201	599,186	0.2%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	174,103,468	348,207	173,755,261	0.20%
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Զարժեզրկված վարկեր				
-270 օրից ավել ժամկետանց	3,255,951	6,512	3,249,439	0.2%
Արժեզրկված վարկեր՝				
- 181-270 օր ժամկետանց	191,645	20,805	170,840	10.9%
- 270 օրից ավել ժամկետանց	2,237,556	1,213,973	1,023,583	54.3%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	5,685,152	1,241,290	4,443,862	21.83%
Ընդամենը վարկեր խոշոր ընկերություններին	179,788,620	1,589,497	178,199,123	0.9%
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր՝				
- ոչ ժամկետանց	56,319,236	563,286	55,755,950	1.0%
- մինչև 30 օր ժամկետանց	366,668	3,667	363,001	1.0%
- 31-90 օր ժամկետանց	793,744	7,937	785,807	1.0%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	57,479,648	574,890	56,904,758	1.00%
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր՝				
Զարժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	144,301	1,443	142,858	1.0%
- 181-270 օր ժամկետանց	23,112	231	22,881	1.0%
Արժեզրկված վարկեր՝				
- 31-90 օր ժամկետանց	46,879	4,918	41,961	10.5%
- 91-180 օր ժամկետանց	87,072	9,604	77,468	11.0%
- 181-270 օր ժամկետանց	414,121	43,440	370,681	10.5%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	715,485	59,636	655,849	8.3%
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	58,195,133	634,526	57,560,607	1.1%
Ընդամենը կորպորատիվ վարկեր	237,983,753	2,224,023	235,759,730	0.9%

Ա. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Հիփոթեքային վարկեր				
- ոչ ժամկետանց	17,016,614	340,332	16,676,282	2.0%
- մինչև 30 օր ժամկետանց	127,398	2,548	124,850	2.0%
- 31-90 օր ժամկետանց	7,897	158	7,739	2.0%
- 91-180 օր ժամկետանց	59,768	1,816	57,952	3.0%
- 181-270 օր ժամկետանց	65,487	1,310	64,177	2.0%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	17,277,164	346,164	16,931,000	2.0%
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	16,075,061	32,150	16,042,911	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	60,980	12,259	48,721	20.1%
- 31-90 օր ժամկետանց	130,120	67,162	62,958	51.6%
- 91-180 օր ժամկետանց	14,868	10,113	4,755	68.0%
- 181-270 օր ժամկետանց	86,082	20,246	65,836	23.5%
Ընդամենը վարկային քարտեր	16,367,111	141,930	16,225,181	0.9%
Բիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց	2,495,719	4,991	2,490,728	0.2%
Ընդամենը բիզնես վարկեր	2,495,719	4,991	2,490,728	0.2%
Ավտոմեքենայի վարկեր				
- ոչ ժամկետանց	4,074,131	8,148	4,065,983	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	13,306	27	13,279	0.2%
- 31-90 օր ժամկետանց	3,615	7	3,608	0.2%
- 181-270 օր ժամկետանց	3,752	8	3,744	0.2%
Ընդամենը ավտոմեքենայի վարկեր	4,094,804	8,190	4,086,614	0.2%
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	3,015,983	6,032	3,009,951	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	3,010	109	2,901	3.6%
- 31-90 օր ժամկետանց	9,922	2,631	7,291	26.5%
- 91-180 օր ժամկետանց	17,462	35	17,427	0.2%
Ընդամենը սպառողական վարկեր	3,046,377	8,807	3,037,570	0.3%
Սպառողական այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	276,371	553	275,818	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	1,816	4	1,812	0.2%
- 31-90 օր ժամկետանց	497	1	496	0.2%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	278,684	558	278,126	0.2%
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	43,559,859	510,640	43,049,219	1.2%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	281,543,612	2,734,663	278,808,949	1.0%



Ա. ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի որակական ցուցանիշների վերաբերյալ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Կորպորատիվ վարկեր				
Վարկեր խոշոր ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	103,889,849	207,808	103,682,041	0.2%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	103,889,849	207,808	103,682,041	0.2%
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր				
Զարժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	440,970	882	440,088	0.2%
Արժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	469,130	158,287	310,843	33.7%
- 181-270 օր ժամկետանց	1,295,889	373,691	922,198	28.8%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	2,205,989	532,860	1,673,129	24.2%
Վարկեր խոշոր ընկերություններին	106,095,838	740,668	105,355,170	0.7%
Վարկեր փոքր և միջին ընկերություններին				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	33,381,670	434,122	32,947,548	1.3%
- մինչև 30 օր ժամկետանց	114,369	1,487	112,882	1.3%
- 31-90 օր ժամկետանց	15,561	202	15,359	1.3%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	33,511,600	435,811	33,075,789	1.3%
Արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր				
Զարժեզրկված վարկեր՝				
- 91-180 օր ժամկետանց	159,367	2,072	157,295	1.3%
Ընդամենը արժեզրկման առանձին հայտանիշներով վարկեր	159,367	2,072	157,295	1.3%
Ընդամենը վարկեր փոքր և միջին ընկերություններին	33,670,967	437,883	33,233,084	1.3%
Ընդամենը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր	139,766,805	1,178,551	138,588,254	0.8%
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր				
Հիփոթեքային վարկեր				
Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկեր	10,185,573	132,412	10,053,161	1.3%
- մինչև 30 օր ժամկետանց	21,471	279	21,192	1.3%
- 31-90 օր ժամկետանց	43,354	564	42,790	1.3%
Ընդամենը հիփոթեքային վարկեր	10,250,398	133,255	10,117,143	1.3%
Վարկային քարտեր				
- ոչ ժամկետանց	10,201,235	20,402	10,180,833	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	57,927	10,060	47,867	17.4%
- 31-90 օր ժամկետանց	26,600	9,760	16,840	36.7%
- 91-180 օր ժամկետանց	19,813	1,592	18,221	8.0%
- 181-270 օր ժամկետանց	119,128	2,027	117,101	1.7%
Ընդամենը վարկային քարտեր	10,424,703	43,841	10,380,862	0.4%
Քիզնես վարկեր				
- ոչ ժամկետանց՝	5,474,361	16,971	5,457,390	0.3%
- 31-90 օր ժամկետանց	218,063	676	217,387	0.3%
- 91-180 օր ժամկետանց	161,388	500	160,888	0.3%
Ընդամենը քիզնես վարկեր	5,853,812	18,147	5,835,665	0.3%

	Համախառն վարկեր հազ. դրամ	Արժեզրկման պահուստ հազ. դրամ	Զուտ վարկեր հազ. դրամ	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ %
Ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր				
- ոչ ժամկետանց	3,334,865	6,670	3,328,195	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	13,956	38	13,918	0.3%
- 91-180 օր ժամկետանց	5,815	16	5,799	0.3%
- 181-270 օր ժամկետանց	5,352	1,230	4,122	23.0%
Ընդամենը ավտոմեքենայի ձեռքբերման վարկեր	3,359,988	7,954	3,352,034	0.2%
Սպառողական վարկեր				
- ոչ ժամկետանց	1,179,331	2,359	1,176,972	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	2,474	27	2,447	1.1%
- 91-180 օր ժամկետանց	1,246	567	679	45.5%
- 181-270 օր ժամկետանց	631	287	344	45.5%
Ընդամենը սպառողական վարկեր	1,183,682	3,240	1,180,442	0.3%
Սպառողական այլ վարկեր				
- ոչ ժամկետանց	405,522	811	404,711	0.2%
- մինչև 30 օր ժամկետանց	1,651	3	1,648	0.2%
- 31-90 օր ժամկետանց	457	1	456	0.2%
- 91-180 օր ժամկետանց	912	707	205	77.5%
Ընդամենը այլ սպառողական վարկեր	408,542	1,522	407,020	0.4%
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	31,481,125	207,959	31,273,166	0.7%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	171,247,930	1,386,510	169,861,420	0.8%

Բ. ՎԱՐԿԵՐԻ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բ.1. Կորպորատիվ վարկեր

Վարկերի արժեզրկումը տեղի է ունենում վարկի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերի արդյունքում, որոնք ազդեցություն են ունենում վարկի հետ կապված դրամական միջոցների ապագա գնահատված հոսքերի վրա և որը կարելի է արժանահավատորեն գնահատել: Արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի համար բացակայում է դրանց ուղղակիորեն վերագրելի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ:

Կորպորատիվ վարկերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ են հանդիսանում՝

- ▶ վարկային պայմանագրի ժամկետանց վճարները,
- ▶ վարկառուի ֆինանսական վիճակի էական վատթարացումը,
- ▶ տնտեսական միջավայրի վատթարացումը, բացասական փոփոխությունները վարկառուի գործունեության շուկաներում:

Իրավաբանական անձանց տրված վարկերի արժեզրկման գծով պահուստը գնահատելիս Բանկը հիմնվում է արժեզրկման առանձին հայտանիշ ունեցող վարկերի գծով դրամական միջոցների ապագա հոսքերի վերլուծության և արժեզրկման առանձին հայտանիշ չունեցող վարկերի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա:

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստը որոշելիս՝ ղեկավարությունը առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով.

- ▶ խոշոր ընկերություններին տրված աշխատող վարկերի համար կորստի պատմական գործակիցը կազմում է 0.2%, փոքր և միջին ընկերություններին տրված աշխատող վարկերի համար՝ 1%:
- ▶ արժեզրկված վարկերի դիմաց գրավադրված գույքի վաճառքի դեպքում կիրառվում է 20% և 30% զեղչ գրավի գնահատված արժեքի նկատմամբ:
- ▶ Գրավի իրացումից մուտքերի ստացումը հետաձգվում է 12 ամսով:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի մեկ տոկոսով, ապա կորպորատիվ վարկերի արժեզրկման ընդհանուր պահուստի գումարը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա մինչև 2,357,597 հազար դրամով (2013թ-ին՝ կնվազի/կավելանա 1,385,883 հազար դրամով):

ii. Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր

Մանրածախ հաճախորդներին տրված վարկերի արժեզրկումը գնահատելիս Բանկը հիմնվում է վարկերի յուրաքանչյուր տեսակի գծով վնաս կրելու իր նախկին փորձի վրա: Մանրածախ հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկումից կորուստները որոշելիս ղեկավարությունն առաջնորդվում է հետևյալ հիմնական ենթադրություններով՝

- ▶ Կորստի միգրացիայի դրույքները կայուն են և կարող են գնահատվել վերջին 24 ամիսների ընթացքում կրած կորստի միգրացիայի մոդելի հիման վրա;
- ▶ Աշխատող վարկային քարտերի գծով կիրառվում է 0.4% կորստի միգրացիայի դրույք, իսկ աշխատող ավտոմեքենայի և սպառողական վարկերի գծով՝ 0.2% կորստի միգրացիայի դրույք;
- ▶ Աշխատող հիփոթեքային վարկերի գծով պատմական կորստի տարեկան դրույքը կազմում է 2%, իսկ աշխատող բիզնես վարկերի համար՝ 0.2%:

Այս գնահատումների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկերի արժեզրկման գծով պահուստի վրա: Օրինակ՝ եթե դրամական միջոցների գնահատված հոսքերի զուտ ներկա արժեքը փոփոխվի երեք տոկոսով, ապա մանրածախ հաճախորդներին տրված վարկերի արժեզրկման գծով ընդհանուր պահուստի գումարը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կնվազի/կավելանա մինչև 1,291,477 հազար դրամով (2013թ.-ին՝ 938,195 հազար դրամով):

Անհատապես արժեզրկված վարկեր

Անհատապես արժեզրկված վարկերի գծով հաշվեզրկված տոկոսային եկամուտը 2014թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար կազմել է 230,718 հազար դրամ (2013՝ 167,932 հազար դրամ):

Գ. ԳՐԱՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

i. Կորպորատիվ վարկեր

Կորպորատիվ վարկերը ենթակա են անհատական հիմունքով վարկային գնահատման և արժեզրկման ստուգման: Կորպորատիվ հաճախորդի վարկունակությունը նրան տրամադրված վարկի վարկային ռիսկի չափը բնութագրող ամենակարևոր ցուցանիշն է: Այնուամենայնիվ, գրավը լրացուցիչ ապահովվածություն է, և Բանկը, որպես կանոն, գրավ է պահանջում կորպորատիվ հաճախորդներից:

Ձեռքբերված գրավի հիմնական տեսակները հետևյալն են՝

- ▶ Արժեթղթային վարկերի և հակադարձ հետգնման գործարքների համար՝ դրամական միջոցներ կամ արժեթղթեր;
- ▶ Առևտրային վարկերի համար՝ անշարժ գույքի, պաշարների, դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների գրավադրում
- ▶ Մանրածախ վարկավորման համար՝ անշարժ գույքի գրավադրում:

Բանկը նաև ձեռք է բերում երաշխիքներ մայր ընկերություններից՝ նրանց դուստր ընկերություններին վարկեր տրամադրելու համար:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին, պահանջում լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն, և հետևում է ձեռքբերված գրավի շուկայական արժեքին՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Բանկի կողմից պահվող՝ արժեզրկման առանձին հայտանիշներով վարկերի գծով գրավների իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 9,104,418 հազար դրամ (2013՝ 3,745,500 հազար դրամ):

Ոչ ժամկետանց և չարժեզրկված վարկերի վերադարձելիությունը առավելապես կախված է վարկառուների վարկունակությունից, այլ ոչ գրավի արժեքից, և պարտադիր չէ, որ Բանկը թարմացնի գրավի գնահատումը բոլոր հաշվետու ժամանակաշրջանների դրությամբ:

ii. Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր

Հիփոթեքային վարկերի դիմաց գրավադրվում է վարկի առարկա հանդիսացող անշարժ գույքը: Բանկի քաղաքականության համաձայն հիփոթեքային վարկերը տրամադրվում են առավելագույնը 70% վարկ/արժեք հարաբերակցությամբ: Հիփոթեքային վարկերի համար ապահովություն հանդիսացող անշարժ գույքի իրական արժեքն առնվազն հավասար է համապատասխան վարկերի հաշվեկշռային արժեքին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման ամսաթվին որոշված արժեքը:

Որպես գրավով ապահովված և վարկային քարտերով տրամադրված օվերդրաֆտների ապահովվածություն հիմնականում հանդես են գալիս անշարժ գույքը և ավտոմեքենաները: Վարկային քարտերով տրված այլ օվերդրաֆտների համար ապահովվածության միջոց է հանդիսանում աշխատավարձը: Բիզնես վարկերի համար որպես ապահովության միջոց են ծառայում անշարժ գույքը և կորպորատիվ բաժնետոմսերը: Ավտոմեքենաների վարկերի դիմաց գրավադրվում են գնված ավտոմեքենաները: 2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ մանրածախ հաճախորդներին տրված վարկերի մոտ 80% ապահովված են եղել անշարժ գույքով, 0.47%-ը՝ աշխատավարձով և դրամական միջոցներով և 19%-ը՝ երաշխիքներով: Անհատներին տրված այլ վարկերը հիմնականում ապահովված են ոսկու գրավով:

iii. Բռնագանձված գրավ

2014թ.-ի ընթացքում Բանկը ձեռք է բերել որոշակի ակտիվներ՝ իրավաբանական անձանց տրված վարկերի դիմաց ընդունված գրավի նկատմամբ սեփականության իրավունք ստանալու միջոցով՝ 420,169 հազար դրամ զուտ հաշվեկշռային արժեքով (2013թ.-ին՝

254,192 հազար դրամ): 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնագանձված գրավն իրենցից ներկայացնում է անշարժ գույք և դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող կամ այլ ակտիվ:

Բանկի քաղաքականության համաձայն՝ նման ակտիվները պետք է վաճառվեն հնարավորինս կարճ ժամկետներում:

Դ. ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ և ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Վարկերը տրամադրվել են հիմնականում իրենց գործունեությունը տնտեսության հետևյալ ճյուղերում ծավալած հաճախորդներին՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Մեծածախ առևտուր	40,058,797	26,588,390
Սննդի և խմիչքի արտադրություն	23,325,577	17,698,356
Շինարարություն	20,161,498	11,260,473
Ֆինանսներ և ներդրումներ	19,408,474	10,107
Էլեկտրաէներգիայի արտադրություն	19,286,065	14,726,727
Գյուղատնտեսություն, անտառապահություն և փայտամշակում	18,950,113	3,415,776
Մանրածախ առևտուր	18,133,476	15,563,983
Հանքարդյունաբերություն/մետալուրգիա	17,666,644	7,166,914
Հյուրանոցային սպասարկման ոլորտ	11,830,145	4,309,739
Անշարժ գույք	11,276,420	5,080,869
Արդյունաբերություն	9,348,465	13,763,426
Տրանսպորտ	8,972,125	8,484,915
Մունիցիպալ մարմիններ	4,992,968	2,420,547
Կապի ծառայություններ	4,477,959	4,280,314
Այլ	10,095,027	4,996,269
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր	43,559,859	31,481,125
	281,543,612	171,247,930
Արժեզրկման գծով պահուստ	(2,734,663)	(1,386,510)
	278,808,949	169,861,420

Բանկի՝ կորպորատիվ վարկերի (զուտ վարկեր) աշխարհագրական կենտրոնացվածությունը բերված է հետևյալ աղյուսակում՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հայաստան	201,255,671	135,569,907
ՏՀԶԿ և ԵՄ	17,565,034	1,496,770
Այլ երկրներ	16,939,025	1,521,577
	235,759,730	138,588,254

Ե. ԽՈՇՈՐ ՎԱՐԿԵՐ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ինը վարկառու կամ վարկառուների կապակցված խմբեր (2013թ.-ին՝ յոթ), որոնց տրամադրված վարկերի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկերի ընդհանուր գումարը կազմում է 49,368,323 հազար դրամ (2013թ.-ին՝ 35,921,654 հազար դրամ):

Զ. ՎԱՐԿԵՐԻ ԱԺՄԿԵՏԱՑՆՈՒԹՅՈՒՆ

Վարկային պորտֆելի ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ի (դ) կետում, որտեղ արտացոլված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև վարկային պայմանագրով նախատեսված մարման ժամկետն ընկած ժամանակահատվածը:

19. ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	14,245,057	8,966,815
Արժեզրկման գծով պահուստ	(28,490)	-
	14,216,567	8,966,815

Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներն անհատականորեն արժեզրկված չեն:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի մեկ հաճախորդ (2013թ.-ին՝ մեկ հաճախորդ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 5,280,350 հազար դրամ (2013թ.-ին՝ 5,720,643 հազար դրամ):

2014թ.-ին և 2013թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	-	-
Զուտ ծախս	28,490	-
Դուրսգրումներ	-	-
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	28,490	-

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում		
Մինչև մեկ տարի ժամկետով	1,183,377	1,204,651
Մեկից հինգ տարի ժամկետով	2,340,276	2,003,213
	3,523,653	3,207,864
Չվաստակած ֆինանսական եկամուտ	(665,366)	(510,995)
Արժեզրկման գծով պահուստ	(5,717)	-
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	2,852,570	2,696,869
Ֆինանսական վարձակալությունում զուտ ներդրումները ներառում են՝		
Մինչև մեկ տարի ժամկետով ներդրումներ	958,002	1,147,449
Մեկից հինգ տարի ժամկետով ներդրումներ	1,894,568	1,549,420
	2,852,570	2,696,869

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք ժամկետանց գումարներ չկան:

Ա. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց գծով ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը (2013թ.-ին նման հաճախորդներ չեն եղել):

2014թ.-ին և 2013թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	-	-
Զուտ ծախս	23,688	-
Դուրսգրումներ	(17,971)	-
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	5,717	-

Բ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների ժամկետայնության վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ի (դ) կետում, որտեղ ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանից մինչև ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պայմանագրային վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը:

Գ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական վարձակալության պայմանագրերի հիմնական մասը կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հաճախորդների հետ:

21. ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	4,489,999	3,575,063
Արժեզրկման գծով պահուստ	(8,980)	-
	4,481,019	3,575,063

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի այնպիսի հաճախորդներ, որոնց մնացորդները գերազանցում են կապիտալի 10%-ը (2013թ.-ին՝ նման հաճախորդներ չեն եղել):

2014թ.-ին և 2013թ.-ին արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	-	-
Զուտ ծախս	8,063	20,860
Դուրսգրումներ	917	(20,860)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	8,980	-

22. ՄԻՆՉԵՎ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՊԱՅՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Բանկի կողմից պահվող		
Պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներ		
- Պետական պարտատոմսեր		
ՀՀ պետական արժեթղթեր	819,255	885,566
ՀՀ եվրոպարտատոմսեր	-	-
- Կորպորատիվ պարտատոմսեր	-	-
Միջազգային ֆինանսական հաստատություններ	-	-
Այլ	101,413	-
	920,668	885,566
Հետգնման պայմանագրերով գրավադրված		
- ՀՀ պետական արժեթղթեր	7,193,845	3,361,500
- ՀՀ եվրոպարտատոմսեր	5,952,409	-
- Միջազգային ֆինանսական հաստատությունների պարտատոմսեր	767,067	-
- Այլ	201,541	-
	14,114,862	3,361,500

23. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

հազ. դրամ	Վարձակալված գույքի բարելավումներ	Համակարգիչ- ներ և հեռահաղոր- դակցման սարքեր	Տնտեսական գույք	Փոխադրա- միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական/վերագնահատված արժեք						
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	1,504,229	2,302,955	462,518	177,848	784,702	5,232,252
Ավելացումներ	121,972	337,583	78,773	12,812	145,692	696,832
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	(2,225)	(37,086)	(39,311)
Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31	1,626,201	2,640,538	541,291	188,435	893,308	5,889,773
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2014թ. հունվարի 1	406,326	1,294,932	207,634	149,802	279,273	2,337,967
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	197,166	333,606	102,052	10,238	117,411	760,473
Օտարումներ/դուրսգրումներ	-	-	-	(2,225)	(37,086)	(39,311)
Մնացորդն առ 2014թ. դեկտեմբերի 31	603,492	1,628,538	309,686	157,815	359,598	3,059,129
Հաշվեկշռային արժեքն առ 2014թ. դեկտեմբերի 31-ի	1,022,709	1,012,000	231,605	30,620	533,710	2,830,644

հազ. դրամ	Վարձակալված գույքի բարելավումներ	Համակարգիչներ և հեռահաղորդակցման սարքեր	Տնտեսական գույք	Փոխադրամիջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական/վերագնահատված արժեք						
Մնացորդն առ 2013թ. հունվարի 1	1,183,146	1,879,404	408,218	175,173	569,177	4,215,118
Ավելացումներ	323,182	424,807	83,023	5,433	215,525	1,051,970
Օտարումներ/դուրսգրումներ	(2,099)	(1,256)	(28,723)	(2,758)	–	(34,836)
Մնացորդն առ 2013թ. դեկտեմբերի 31	1,504,229	2,302,955	462,518	177,848	784,702	5,232,252
Մաշվածություն և ամորտիզացիա						
Մնացորդն առ 2013թ. հունվարի 1	264,721	977,774	142,893	136,578	171,511	1,693,477
Տարվա մաշվածություն և ամորտիզացիա	143,685	317,279	92,665	15,662	107,762	677,053
Օտարումներ/դուրսգրումներ	(2,080)	(121)	(27,924)	(2,438)	–	(32,563)
Մնացորդն առ 2013թ. դեկտեմբերի 31	406,326	1,294,932	207,634	149,802	279,273	2,337,967
Հաշվեկշռային արժեքն առ 2013թ. դեկտեմբերի 31	1,097,903	1,008,023	254,884	28,046	505,429	2,894,285

2014թ. և 2013 թ. ընթացքում հիմնական միջոցների ձեռքբերմանը կամ շինարարությանը վերաբերող կապիտալացված փոխառության ծախսումներ չեն եղել (2013թ.-ին՝ զրո):

24. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Բրոքերային հաշիվներ	346,731	335,696
Հաշիվներ քլիրինգային կազմակերպություններում՝ օգտագործման սահմանափակումներով	339,475	209,243
Բանկային ծառայությունների գծով ստացվելիք գումարներ	247,673	357,810
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	933,879	902,749
Կանխավճարներ մատակարարներին	911,812	837,810
Գրավի տնօրինման արդյունքում առաջացած ակտիվներ	322,435	68,242
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	200,232	90,710
Պաշարներ	67,539	49,824
Արժեզրկման գծով պահուստ	(65,522)	(65,522)
Այլ	173,488	75,688
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	1,609,984	1,056,752
Ընդամենը այլ ակտիվներ	2,543,863	1,959,501

2014թ.-ին և 2013թ.-ին այլ ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստում տեղի է ունեցել հետևյալ շարժը՝

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Հաշվետու տարվա սկզբի մնացորդ	65,522	67,080
Զուտ ծախս	20,171	75,076
Դուրսգրումներ	(20,171)	(76,634)
Հաշվետու տարվա վերջի մնացորդ	65,522	65,522

25. ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆԴՆԵՐ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Պարտավորություններ ակրեդիտիվների գծով	16,857,511	11,648,205
Կարճաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	10,292,230	3,218,527
Վարկեր ՀՀ ԿԲ-ից	2,769,692	1,859,440
Լորո հաշիվներ	199,344	185,645
Երկարաժամկետ վարկեր և ժամկետային ավանդներ առևտրային բանկերից	85,547	-
	30,204,324	16,911,817

Պայմանագրի համաձայն ՀՀ ԿԲ-ն Բանկին ապահովում է վարկերով, իսկ Բանկն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի մոնիտորինգը և վարչարարությունը կատարվում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ» -ի կողմից:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի երեք պայմանագրային կողմ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ կողմ), որի մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: Հաշվի համախառն մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 18,821,471 հազար դրամ (2013թ.՝ 5,749,261 հազար դրամ):

26. ՀԵՏԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
ՀՀ ԿԲ-ից ստացված վարկեր	21,301,407	16,013,140

Բանկն իրականացնում է արժեթղթերը վարկով տրամադրելու, արժեթղթերը հետգնման պայմանագրերով վաճառելու գործարքներ և արժեթղթերը վերավաճառքի պայմանագրերով գնելու գործարքներ:

Ըստ հետգնման պայմանագրերի վաճառված կամ որպես վարկ տրամադրված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմերին, որի դիմաց Բանկը ստանում է դրամական միջոցներ: Այդ ֆինանսական ակտիվները կարող են կրկին գրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Բանկի սնանկացման պայմանների բացակայության դեպքում, սակայն պայմանագրի մարման ամսաթվին գործընկերը պարտավոր է վերադարձնել արժեթղթերը: Բանկը որոշել է, որ պահպանում է այդ արժեթղթերի նկատմամբ հիմնականում բոլոր ռիսկերն ու օգուտները և, հետևաբար, չի ապաժանացում դրանք: 21,207,645 հազ.դրամ արժողությամբ այս արժեթղթերը Ծանոթագրություն 15-ում և 22-ում ներկայացվում են որպես «հետգնման պայմանագրերով գրավադրված»: Ստացված դրամական միջոցները ծանաչվում են որպես ֆինանսական ակտիվ, իսկ այս գրավի վաճառքի գնի մարման պարտավորության համար ծանաչվում է ֆինանսական պարտավորություն:

Այս գործարքները իրականացվում են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման գործընթացներին բնորոշ պայմաններին համաձայն:

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,217,526 հազար դրամ արժողության գրավը, որը գրավադրված է եղել հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարների դիմաց (Ծանոթագրություն 17), կրկնակի գրավադրվել է հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարների դիմաց (2013 թ.՝ 5,910,451 հազար դրամ):

ՓՈԽԱՆՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԿԱՍ ՈՐՊԵՍ ԳՐԱՎ ՊԱՅՎՈՂ ԱԿՏԻՎՆԵՐ

Փոխանցված ֆինանսական ակտիվներ, որոնք ամբողջովին չեն ապաճանաչվել

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ֆինանսական ակտիվների ամփոփ նկարագիրը, որոնք փոխանցվում են այնպես, որ փոխանցված ֆինանսական ակտիվների մի մասը կամ ամբողջը չի բավարարում ապաճանաչման չափանիշներին՝

	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	Մինչև մարման ժամկետը պահվող գործիքներ		Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ		Ընդամենը 2014
		Պետ. պարտատոմսեր 2014	Այլ պարտատոմսեր 2014	Պետ. պարտատոմսեր 2014	Այլ պարտատոմսեր 2014	
Հաշվեկշռային Ակտիվներ	Հետգնման պայմանագրեր	13,146,254	968,608	6,896,015	196,768	21,207,645
Ընդամենը		13,146,254	968,608	6,896,015	196,768	21,207,645
Այդ ակտիվների հետ կապված պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր					21,301,407
Զուտ դիրք		-	-	-	-	(93,762)

	Փոխանցված ֆինանսական ակտիվներ	Մինչև մարման ժամկետը պահվող գործիքներ		Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ		Ծախսերի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	Ընդամենը 2013
		Կառ. Պարտատոմսեր 2013	Այլ պարտատոմսեր 2013	Կառ. Պարտատոմսեր 2013	Այլ պարտատոմսեր 2013	Այլ պարտատոմսեր 2013	
Հաշվեկշռային արժեք Ակտիվներ	Հետգնման պայմանագրեր	3,361,500	-	5,815,585	-	844,660	10,021,745
Ընդամենը		3,361,500	-	5,815,585	-	844,660	10,021,745
Այդ ակտիվների հետ կապված պարտավորությունների հաշվեկշռային արժեք	Հետգնման պայմանագրեր						16,013,140
Զուտ դիրք		-	-	-	-	-	(5,991,395)

27. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎՆԵՐ և ԱՎԱՆԴՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ ավանդներ		
- ֆիզիկական անձինք	17,233,728	14,529,399
- Իրավաբանական անձինք	56,878,290	47,058,444
Ժամկետային ավանդներ		
- ֆիզիկական անձինք	86,304,747	67,804,636
- Իրավաբանական անձինք	48,280,166	40,549,672
	208,696,931	169,942,151

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի հաճախորդների ավանդներից 30,441,182 հազար դրամ գումարով մնացորդները ծառայում են որպես գրավ Բանկի կողմից տրամադրված վարկերի և չձանաչված վարկային գործիքների դիմաց (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,183,017 հազար դրամ):

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի տաս հաճախորդ (2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հինգ հաճախորդ), որոնց միջոցների մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը: 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 57,902,264 հազար դրամ (31 դեկտեմբերի 2013թ.՝ 41,035,852 հազար դրամ):

28. ԱՅԼ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ և ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Ներգրավված միջոցներ միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից	73,799,775	58,700,073
Ներգրավված միջոցներ ՀՀ կառավարությունից	3,826,072	6,691,076
	77,625,847	65,391,149
Ստորադաս փոխառություններ	15,380,080	4,967,435

Ա. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի ներգրավված միջոցներ ինը ֆինանսական կազմակերպություններից (2013թ.-ին՝ ինը), որոնց մնացորդները գերազանցում են Բանկի կապիտալի 10%-ը:
2014թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդները կազմում են 72,239,256 հազար դրամ (2013թ.-ին՝ 63,891,692 հազար դրամ):

Բ. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ կառավարությունից ներգրավված միջոցներն իրենցից ներկայացնում են փոխառություններ ՀՀ կառավարությունից (ՀՀ ԿԲ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության գործակալ): Պայմանագրի համաձայն՝ ՀՀ ԿԲ-ն փոխառություններ է տրամադրում Բանկին, որն իր հերթին վարկեր է տրամադրում որակավորվող վարկառուներին: Վարկերի վերահսկողությունը և վարչարարությունն իրականացնում է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակը:

Փոխառությունները տրամադրվում են ՀՀ դրամով, մինչև հինգ տարի ժամկետով, դրանց գծով կիրառվող տոկոսադրույքները կազմում են 7.0%-7.8%, փոխառությունները ենթակա են մարման՝ մարման ժամկետի վերջում:

Գ. ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառություններն իրենցից ներկայացնում են՝

- ▶ Կապակցված կողմից ստացված փոխառություն (5,825,503 հազար դրամ), որի մարման ժամկետը լրանում է 2021թ. հունվարի 11-ին և որի գծով կիրառվում է 6% տարեկան տոկոսադրույք: Վարկատուն իրավունք ունի պահանջել փոխակերպել վարկը ամբողջությամբ կամ դրա մի մասը՝ ներառյալ կուտակված տոկոսները, Բանկի բաժնետիրական կապիտալի՝ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով:
- ▶ Այլ ֆինանսական հաստատությունից ստացված փոխառություն (9,554,577 հազար դրամ), որը մարվում է 2020թ. սեպտեմբերի 23-ին և որի տարեկան տոկոսադրույքն է 6% գումարած LIBOR: Ֆինանսական հաստատությունը իրավունք ունի փոխակերպել ստորադաս փոխառության 62.5%-ը Բանկի սովորական բաժնետոմսերի:

Մնանկության դեպքում ստորադաս փոխառությունները կմարվեն Բանկի մյուս բոլոր պարտավորությունների ամբողջական մարումից հետո:

Դ. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Համաձայն փոխառության պայմանագրերի՝ Բանկը պարտավոր է ապահովել համապատասխանությունը որոշակի սահմանափակումներին:

29. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
Կրեդիտորական պարտքեր աշխատակազմի նկատմամբ	1,733,715	832,463
Հաշվեգրված ծախսեր	372,126	277,835
Այլ ֆինանսական պարտավորություններ	552,323	974,537
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	2,658,164	2,084,835
Հետաձգված եկամուտ	10,320	9,226
Այլ հարկային պարտավորություններ	152,772	119,216
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	163,092	128,442
Ընդամենը այլ պարտավորություններ	2,821,256	2,213,277

30. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՅՈՒՍՆԵՐ

Ա. ԹՈՂԱՐԿՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ԷՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 79,524 սովորական բաժնետոմսից (2013թ.-ին՝ 79,524): Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320 հազար դրամ: Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Բանկի բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Բ. ՊԱՅՈՒՍՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ և ՆՊԱՏԱԿԸ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստը ներառում է իրական արժեքի կուտակային զուտ փոփոխությունը՝ մինչև ակտիվների ապաժանաչումը կամ արժեզրկումը:

Գ. ՇԱՅԱԲԱԺԻՆՆԵՐ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ Բանկի առավելագույն չբաշխված չափով:

2014թ. ապրիլի 22-ին և դեկտեմբերի 27-ին Բաժնետերերի խորհրդի կայացրած որոշումների համաձայն Բանկի կողմից հայտարարված շահաբաժինները կազմել են 2,950,000 հազար դրամ (2013թ.-ին՝ 4,500,000 հազար դրամ): Մեկ բաժնետոմսի համար վճարվող շահաբաժինները կազմել են 37.096 հազար դրամ (2013թ.-ին՝ 56.587 հազար դրամ):

31. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարումը բնորոշ գործոն է բանկային ոլորտի համար և հանդիսանում է Բանկի գործառնությունների կարևոր տարր: Հիմնական ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերն են:

Ա. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Բանկի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթակա է Բանկը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը սահմանված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ռիսկերի կառավարման կենտրոնը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Բանկի գործունեությունն ապահովելու համար: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի ընդհանուր կառավարման համար, նա նաև վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման, կառավարման և ներկայացման համար ընդհանուր սկզբունքների ու մեթոդների կիրառումը: Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավարն ուղղակիորեն հաշվետու է Տնօրինությանը և անուղղակիորեն՝ Տնօրենների խորհրդին:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը՝ թե պորտֆելի և թե առանձին գործառնությունների մակարդակով կառավարվում ու վերահսկվում են Վարկային կոմիտեների համակարգի և Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի («ԱՊԿԿ») միջոցով: Որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը ստեղծել է վարկային կոմիտեների հիերարխիա՝ կախված ռիսկին ենթարկվածության չափից ու տեսակից:

Ռիսկի թե արտաքին, թե ներքին գործոնները բացահայտվում և կիրառվում են Բանկի կազմակերպչական կառուցվածքի շրջանակներում: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնում ռիսկի բոլոր գործոնների բացահայտմանը և ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների նպատակահարմարության աստիճանի որոշմանը: Բացի ստանդարտ վարկային և շուկայական վերլուծությունների իրականացումից, Ռիսկերի կառավարման կենտրոնը վերահսկում է ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ գործառնական միավորների հետ՝ նրանց մասնագիտական կարծիքը իմանալու համար:

Բ. ՇՈՒԿԱՑԱԿԱՆ ՌԻՍԿ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտաբաժնային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է պարտքային և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթակա են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների և արտաբաժնային փոխարժեքների փոփոխություններին:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա ընդունելի սահմաններում պահպանել այս ռիսկին ենթակա ինքնուրույն աստիճանը՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը: Շուկայական ռիսկի կառավարման համար պատասխանատվություն է կրում ԱՊԿԿ-ն՝ Գլխավոր տնօրենին նախագահությամբ: Շուկայական ռիսկի սահմանաչափերը հաստատվում են Տնօրինության կողմից՝ Ռիսկերի կառավարման կենտրոնի առաջարկությունների հիման վրա:

Շուկայական ռիսկը Բանկը կառավարում է սահմանելով ֆինանսական գործիքների բաց դիրքի, տոկոսադրույքի, ժամկետայնության և արտաբաժնային դիրքերի գծով սահմանաչափեր, որոնք կանոնավոր կերպով վերանայվում և հաստատվում են Տնօրինության կողմից: Ի լրումն, Բանկը կիրառում է բազմաթիվ սթրես-թեստեր՝ առանձին առևտրային պորտֆելների և Բանկի ընդհանուր վիճակի վրա մի շարք առանձնահատուկ շուկայական սցենարների հնարավոր ֆինանսական ազդեցությունը ձևավորելու համար: Սթրես թեստերը թույլ են տալիս որոշել հնարավոր վնասի չափը, որը կարող է առաջանալ ծայրահեղ իրավիճակներում:

i. Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Բանկը ենթակա է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի վրա գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Տոկոսադրույքի ճեղքվածքի վերլուծություն

Տոկոսադրույքի ռիսկը հիմնականում կառավարվում է տոկոսադրույքների ճեղքվածքների մոնիտորինգի և վերագնորոշման նախապես սահմանված սահմանաչափեր սահմանելու միջոցով: Նշված սահմանաչափերի հետ համապատասխանության մոնիտորինգն իրականացվում է ԱՊԿԿ-ի կողմից, որին մոնիտորինգի ամենօրյա գործունեությունում աջակցում է Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է տոկոսադրույքների վերանայման ժամկետների վերլուծությունը հիմնական ֆինանսական գործիքների համար՝

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Անտոկոս	Ընդամենը
2014թ. դեկտեմբերի 31							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	68,115,676	68,115,676
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	174,800	53,529	41,410	2,540,545	4,694,822	106,458	7,611,564
Բանկերին տրված վարկեր	-	-	-	-	-	1,157,853	1,157,853
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	1,526,358	-	-	-	-	-	1,526,358
Հաճախորդներին տրված վարկեր	39,627,977	26,265,045	42,391,158	137,469,519	29,891,193	3,164,057	278,808,949
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	413,048	163,865	919,180	12,720,474	-	-	14,216,567
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	237,699	250,746	471,045	1,804,744	88,336	-	2,852,570
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,201,754	1,091,531	187,734	-	-	-	4,481,019
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	1,867,550	952,514	1,061,373	5,121,613	6,032,480	-	15,035,530
	47,049,186	28,777,230	45,071,900	159,656,895	40,706,831	72,544,044	393,806,086
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(9,639,684)	(4,482,783)	(3,893,266)	(10,812,328)	(1,376,263)	-	(30,204,324)
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	(21,301,407)	-	-	-	-	-	(21,301,407)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(57,243,647)	(23,132,957)	(44,728,848)	(9,373,482)	(105,979)	(74,112,018)	(208,696,931)
Ստորադաս փոխառություններ	(9,680,440)	-	-	-	(5,699,640)	-	(15,380,080)
Այլ փոխառություններ	(21,693,866)	(40,726,091)	(13,772,286)	(1,433,604)	-	-	(77,625,847)
	(119,559,044)	(68,341,831)	(62,394,400)	(21,619,414)	(7,181,882)	(74,112,018)	(353,208,589)
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	11,928,223	-	(1,889,085)	(10,039,138)	-	-	-
Տարբերություն	(60,581,635)	(39,564,601)	(19,211,585)	127,998,343	33,524,949	(1,567,974)	40,597,497

հազ. դրամ	Մինչև 3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	Ավելի քան 5 տարի	Անտոկոս	Ընդամենը
31 դեկտեմբերի 2013թ.							
Ակտիվներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	98,815,692	98,815,692
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	888,066	-	-	-	888,066
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	148,632	759,006	1,042,617	6,356,223	932,540	102,467	9,341,485
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	2,030,799	-	-	-	-	1,075,684	3,106,483
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,441,159	-	-	-	-	-	8,441,159
Հաճախորդներին տրված վարկեր	17,888,492	14,873,614	21,430,308	102,733,454	12,935,552	-	169,861,420
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	72,350	130,376	572,201	8,191,888	-	-	8,966,815
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	376,714	308,836	461,899	1,549,420	-	-	2,696,869
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,261,147	311,752	2,164	-	-	-	3,575,063
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	136,405	621,453	769,725	2,633,869	85,614	-	4,247,066
	32,355,698	17,005,037	25,166,980	121,464,854	13,953,706	99,993,843	309,940,118
Պարտավորություններ							
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(3,368,471)	(943,251)	(632,845)	(10,141,775)	(1,825,475)	-	(16,911,817)
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	(16,013,140)	-	-	-	-	-	(16,013,140)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	(43,045,451)	(28,532,536)	(31,312,320)	(5,373,162)	(90,839)	(61,587,843)	(169,942,151)
Ստորադաս փոխառություններ	(99,755)	-	-	-	(4,867,680)	-	(4,967,435)
Այլ փոխառություններ	(15,222,328)	(39,156,236)	(2,197,200)	(6,964,848)	(1,850,537)	-	(65,391,149)
	(77,749,145)	(68,632,023)	(34,142,365)	(22,479,785)	(8,634,531)	(61,587,843)	(273,225,692)
Ածանցյալ գործիքների ազդեցությունը	15,027,118	(1,613,341)	(1,613,341)	(11,800,436)	-	-	-
Տարբերություն	(30,366,329)	(53,240,327)	(10,588,726)	87,184,633	5,319,175	38,406,000	36,714,426

Միջին տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների՝ մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը, բացառությամբ այլ փոխառություններում ներառված 71,166,443 հազար դրամ գումարով (2013թ.-ին՝ 52,676,660 հազար դրամ) վարկերի, որոնց նկատմամբ կիրառվող տոկոսադրույքները վերանայվում են կիսամյակային կտրվածքով՝ LIBOR -ի հիման վրա:

Տոկոսադրույքի վերանայման ամսաթիվ	2014 հազ. դրամ	Տոկոսադրույքի վերանայման ամսաթիվ	2013 հազ. դրամ
8 Յունվար 2015	4,745,819	15 Փետրվար 2014	10,059,402
15 Փետրվար 2015	9,665,478	15 Մարտ 2014	5,090,379
16 Փետրվար 2015	9,253,770	25 Մարտ 2014	101,582
26 Փետրվար 2015	7,240,371	15 Ապրիլ 2014	14,156,424
16 Մարտ 2015	478,966	16 Ապրիլ 2014	304,104
2 Ապրիլ 2015	382,695	17 Ապրիլ 2014	4,971,498
15 Ապրիլ 2015	15,429,293	18 Մայիս 2014	2,222,445
16 Ապրիլ 2015	119,962	27 Մայիս 2014	806,664
17 Ապրիլ 2015	5,034,927	29 Մայիս 2014	8,086,665
12 Մայիս 2015	717,211	16 Յունիս 2014	6,877,497
17 Մայիս 2015	10,220		52,676,660
18 Մայիս 2015	182,320		
27 Մայիս 2015	763,632		
29 Մայիս 2015	6,355,853		
10 Յունիս 2015	3,647,272		
16 Յունիս 2015	7,138,654		
	71,166,443		

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Բանկի տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	2014			2013		
	Միջին արդյունավետ տոկոսադրույք, %			Միջին արդյունավետ տոկոսադրույք, %		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Այլ արտարժույթ
Տոկոսակիր ակտիվներ						
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	-	-	-	-	10.22%	-
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	11.90%	5.73%	-	12.96%	-	-
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	-	-	-	-	4.50%	-
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	24.00%	-	-	8.64%	6.69%	-
Հաճախորդներին տրված վարկեր	14.54%	10.54%	10.14%	14.09%	11.43%	11.63%
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	15.19%	11.31%	11.03%	15.27%	11.76%	12.00%
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	15.73%	11.40%	12.33%	15.90%	11.50%	12.22%
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	12.19%	5.47%	-	13.17%	-	-
Տոկոսակիր պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	6.00%	3.23%	2.52%	7.0%	3.98%	-
Հետգնման պայմանագրերի գծով վճարելիք գումարներ	20%	-	-	7.82%	-	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	9.17%	6.23%	4.53%	10.40%	6.14%	3.81%
Ստորադաս փոխառություններ		6.18%	-		6.00%	-
Այլ փոխառություններ	9.74%	5.50%	-	8.83%	4.78%	-

Տոկոսադրույքի զգայունության վերլուծություն

Տոկոսադրույքի ձեռքվածքների վերլուծության վրա հիմնված տոկոսադրույքի կառավարումը լրացվում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգայունության մոնիտորինգով:

Ստորև ներկայացվում է շուկայական տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի (առանց հարկերի) զգայունության վերլուծությունը, որն իրականացվել է 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի և 2014թ. ու 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի հիման վրա:

	2014 հազ. դրամ	2013 հազ. դրամ
100 բկ զուգահեռ նվազում	304,775	616,186
100 բկ զուգահեռ աճ	(304,775)	(616,186)

Ստորև ներկայացվում է զուտ շահույթի կամ վնասի և կապիտալի զգայունության վերլուծությունը՝ պայմանավորված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2014թ. ու 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա 218 և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

	2014		2013	
	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Կապիտալ հազ. դրամ	Զուտ շահույթ կամ վնաս հազ. դրամ	Կապիտալ հազ. դրամ
218 / 100 բկ զուգահեռ նվազում	-	618,072	-	517,096
218 / 100 բկ զուգահեռ աճ	-	(618,072)	-	(517,096)

ii. Արտարժույթի ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական հոսքերի տատանման ռիսկն է:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,547,326	6,840,148	1,882,493	17,269,967
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	3,355,802	-	-	3,355,802
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	318,948	11,549	36,842	367,339
Հաճախորդներին տրված վարկեր	233,285,293	8,698,674	-	241,983,967
Սկրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	7,617,134	6,627,922	-	14,245,056
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	1,595,526	708,369	-	2,303,895
